

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ Ի Կ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ԵՎ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏՈՒՄ ՀՀ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ, ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ, ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
1.	ՀՀ Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	ՀՀ 2014 թ. պետական բյուջեի նախագծում «Մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդների սոցիալ-վերականգնողական ծառայություններ» ծրագրով նախատեսված 19,4 մլն դրամին ավելացնել 2,4 մլն դրամ այդ ծախսը դարձնելով 21,8 մլն դրամ:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2014 թ. պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում նշված ծրագիրը ավելացվել է 2.4 մլն դրամով:
2.	ՀՀ Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծում 10-րդ բաժնի 06 խմբի 01 դասի «Բնակարանյին ապահովում» ծրագրին 500 մլն դրամի փոխարեն նախատեսել 1 մլրդ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
3.	ՀՀ Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծում 10-րդ բաժնի 04 խմբի 01 դասի «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրին հատկացված 37105781,0 դրամ գումարների վերաբաշխման ժամանակ 1-ին և 2-րդ երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափն ավելացնել 100000 դրամով:	ՀՀ 2014 թ. պետական բյուջեի նախագծով երեխաների կանխատեսվող թվաքանակը կազմում է 42 333 երեխա, որից 1-ին և 2-րդ երեխաների թիվը՝ 35 733: Վերջիններիս համար երեխայի ծննդյան միա նվագ նպաստի չափը 150.0 հազ. դրամ սահմանելու դեպքում լրացուցիչ ծախսը կկազմի 3.6 մլրդ դրամ (35 733 երեխա x 100.0 հազ. դրամ)՝ ներառյալ վճարման ծառայության գումարը: Միաժամանակ «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի շրջանակներում 2012 թ. երեխայի ծննդյան միանվագ դրամական օգնություն են ստացել 4604

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			Երեխա՝ 50.000 դրամ գումարի չափով, որից շուրջ 2600-ը ընտանիքներում եղել են 1-ին կամ 2-րդ երեխան: 2013 թ. 10 ամիսների ընթացքում երեխայի ծննդյան միանվագ դրամական օգնություն են ստացել 3990 երեխա՝ 50.000 դրամ գումարի չափով, որից շուրջ 1950-ը՝ 1-ին կամ 2-րդ երեխան: Հաշվի առնելով վերոհիշյալը՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը 150.0 հազ. դրամ սահմանելու դեպքում անհրաժեշտ կլինի լրացուցիչ 469.6 մլն դրամ (4696 երեխա՝ 2012-2013 թթ միջին թվաքանակը x 100.0 հազ. դրամ), կամ ընդհանուր առմամբ վերաբաշխման ենթակա գումարը կկազմի շուրջ 4,1 մլրդ դրամ: Հետևաբար նպաստառու ընտանիքների թիվը անհրաժեշտ կլինի կրճատել մոտ 11,5 հազարով, որը ընդունելի չէ:
4.	ՀՀ Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծում 10-րդ բաժնի 07 խմբի 01 դասի «07. ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998 թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածով սահմանված դրամական օգնության տրամադրում» ծրագրին հատկացված 907842,0 դրամ գումարն ավելացնել այնքան, որ այդ ծրագրով Աֆղանստանում մարտական գործողությունների մասնակիցներին տրամադրվող 5000 դրամ դրամական օգնությունը դառնա 7000 դրամ:	Հարցը կքննարկվի ՀՀ 2015-2017թթ. ՄԺԾԾ շրջանակներում:
5.	ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողով	«Զոհված (մահացած) և առաջին, երկրորդ, կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքների բնակարանով ապահովման և բնակարանային բարելավման համար» ծրագրին հատկացվող գումարը ավելացնել 1	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		միլիարդ դրամով: Նշված ծրագրով առաջարկվող գումարի ավելացումն անհրաժեշտ է զինծառայողների բնակարանային ապահովության խնդիրների աստիճանական լուծման գործընթացում:	
6.	ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողով	ՀՀ պաշտպանության նախարարությանը հատկացնել 1 միլիարդ դրամ ռազմական հենակետերը կենտրոնական մայրուղու հետ կապող ճանապարհների վերանորոգման համար: Վերանորոգելով ռազմավարական նշանակության ճանապարհները կնպաստենք պաշտպանության ոլորտի զարգացմանը եւ կառավարության ծրագրով պաշտպանության ոլորտում հոչակված նպատակների իրականացմանը, մասնավորապես՝ անվտանգության համակարգերի բարեփոխման եւ ժամանակակից պահանջներին համապատասխանեցման, արտաքին մարտահրավերների կանխարգելմանն ու համարժեք պատասխանի ապահովմանն ուղղված քայլերի արդյունավետ կիրառմանը:	Առաջարկությունն ընդունվել է: Ռազմական հենակետերը կենտրոնական մայրուղու հետ կապող ճանապարհների վերանորոգման համար անհրաժեշտ ծախսային ցուցանիշների հաշվարկներն ամբողջությամբ իրականացնելուց հետո հարցը կքննարկվի ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով ՀՀ պաշտպանության նախարարությանը նախատեսված ընդհանուր միջոցների շրջանակներում ստրատեգիական նշանակության խնդիրների լուծման համատեքստում:
7.	ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողով	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության, պետական եւ տեխնիկական անվտանգության տեսչության Վայոց Ձորի տարածքային ստորաբաժանման վերազինման եւ վերակառուցման համար տրամադրել 200 միլիոն դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Հաշվի առնելով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության, պետական եւ տեխնիկական անվտանգության տեսչության Վայոց Ձորի տարածքային ստորաբաժանման ներկայիս անմխիթար վիճակը, առկա բարոյապես մաշված տեխնիկական ժամանակակից սարքավորումներով փոխարինելու անհրաժեշտությունը, նպատակահարմար է 200 մլն դրամ հատկացնել վերոնշյալ խնդիրը եթե ոչ ամբողջությամբ, ապա՝ գոնե մասնակիորեն լուծելու համար:	
8.	ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողով	ՀՀ ոստիկանության «Բարձրագույն մասնագիտական կրթություն» ծրագրին հատկացվող գումարը ավելացնել 560 միլիոն դրամով: Նշված գումարն անհրաժեշտ է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի համար կրիմինալիստիկայի լաբորատորիա կառուցելու եւ համապատասխան սարքավորումներով զինելու համար:	Նշված հարցը ՀՀ Ոստիկանության կողմից կքննարկվի համապատասխան գումարի հաշվարկ-հիմնավորումների առկայության պարագայում, անհրաժեշտության դեպքում՝ միջոցներ ձեռնարկելով հարցի աստիճանական կարգավորման ուղղությամբ:
9.	ՀՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողով	Ավելացնել ՀՀ ԱԺ ներկայացուցչական ծախսերը՝ ի նկատի ունենալով, որ՝ ա) 2014 թվականին Երևանում անցկացվելու է «Եվրանեստ» ԽՎ-ի լիագումար նիստը: բ) Անհրաժեշտություն կա խորացնել խորհրդարանական դիվանագիտությունը, բարեկամական խմբերի գործունեությունն առավել ակտիվ դարձնել, տարբեր երկրների խորհրդարաններում կապերը էլ ավելի զար-	«Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով ՀՀ ԱԺ ներկայացուցչական ծախսերը նախատեսվել են 195.0 մլն դրամ (պահպանվել է 2013թ. մակարդակը): Նշված միջոցների հաշվին հիշատակված նիստի անցկացման համար անհրաժեշտ ծախսերի չբավարարման դեպքում հարցը կքննարկվի ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացման շրջանակներում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		գացնել, /հատկապես այն երկրներում, որտեղ Ադրբեջանը ակտիվ լրբբինգ է իրականացնում և առաջարկում է վերջիններիս ընդունել կամ քննարկել հակահայկական բանաձևեր/: Այս աշխատանքներն անհրաժեշտ են նաև Ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ գործընկեր խորհրդարաններում հնարավոր քննարկումների համար:	
10.	ՀՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողով	Նախատեսել ՀՀ 2014 թվականի պետական բյուջեում 1988-1992թթ. Ադրբեջանից հայ փախստականների բնակարաններով ապահովելու համար բնակելի շենքի շինարարության գումար:	Հարցը կքննարկվի 2014 թվականի բյուջետային տարվա ընթացքում համապատասխան ծրագրի առկայությամբ և դրանում առկա առաջնահերթ միջոցառումների շրջանակներում:
11.	ՀՀ Ազգային ժողովի Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով	2013 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմել է ՀՀ կառավարությանը՝ «ՀՀ Մարդու իրավունքների աշխատակազմի պահպանման ծախսեր» ծրագրի 2014թ. բյուջետային հայտով՝ ներկայացնելով պետական ֆինանսավորման պահանջ (այդ թվում նաև՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Արագ արձագանքման ծառայության պահպանման նպատակով), որից ի թիվս այլ պահանջների 10 մլն դրամ Արագ արձագանքման ծառայության համար ՀՀ կառավարությունը չի բավարարել: Նշված 10 մլն դրամով պետական ֆինանսավորման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով. • 3 հաստիքի ավելացում (բժիշկ-մասնագետ-1.990.000 դրամ, իրավաբան-մասնագետ-1.990.000 դրամ, կրտսեր մասնագետ-	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2014 թ. պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում նշված ծրագիրը ավելացվել է 10.0 մլն դրամով:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		1.420.000)՝ աշխատանքի վարձատրության մասով 5.400.000 ՀՀ դրամ, - Վարչական սարքավորումներ՝ 2.500.000 ՀՀ դրամ (3 աշխատակցի համար անհրաժեշտ համակարգչային կոմպլեկտի, գրասենյակային գույքի, գրասենյակային տեխնիկայի ձեռքբերում): - Ներքին գործուղման ծախսեր՝ 1.200.000 ՀՀ դրամ (շուրջ 35 գործուղում 2-3 օր տևողությամբ) - Տրանսպորտային նյութեր՝ 900.000 ՀՀ դրամ (բենզինի ձեռքբերում) Առաջարկում ենք. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Արագ արձագանքման ծառայության պահպանման նպատակով ՀՀ 2014թ. Պետական բյուջեից հատկացնել 10 միլիոն /տաս միլիոն/ դրամ:	
12.	ՀՀ Ազգային ժողովի Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով	«Հայաստանի Ազգային գրապալատ» ՊՈԱԿ-ը Հանրապետությունում ազգային մատենագիտության, մամուլի մատենագիտական տեղեկատվության ու վիճակագրության, սոցիոլոգիական հետազոտությունների, կենտրոնացված քարտադրացուցակավորման, ինչպես նաև համահայկական տպագիր արտադրանքի, անձեռնմխելի ազգային արխիվային ավանդադրված ֆոնդի պահպանության կենտրոնն է, որտեղ պահպանվում է գալիք սերունդների համար որպես ավանդ 1920թ.-ից հետայսու Հանրապետությունում ու Սփյուռքում լույս տեսած տպագիր ամեն տեսակ նյութերի	Հայաստանի Ազգային գրապալատի հիմնանորոգման աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման I փուլի աշխատանքների ցանկում: Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2015-2017 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		ավելի քան մեկ միլիոն հաշվվող անձեռնմխելի եզակի արխիվային հավաքածուն: Գրապալատն այսօր գտնվում է անմխիթար վիճակում, որի տանիքի ձեղնահարկի և հատակի վերանորոգման համար կատարված նախահաշվի համաձայն պահանջվում է 100 միլիոն դրամ: Առաջարկում ենք՝ «Հայաստանի Ազգային գրապալատ» ՊՈԱԿ-ի տանիքի ձեղնահարկի և հատակի վերանորոգման համար ՀՀ 2014թ. Պետական բյուջեից հատկացնել 100 միլիոն /հարյուր միլիոն/ դրամ:	
13.	ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով	«Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պահպանման ծախսեր» ծրագիրը ավելացնել 10 միլիոն ՀՀ դրամ: Նշյալ ավելացումը պայմանավորված է հետևյալով. - 3 հաստիքի ավելացում (թիշկ-մասնագետ-1.990.000 դրամ, իրավաբան-մասնագետ-1.990.000 դրամ, կրտսեր մասնագետ-1.420.000)՝ աշխատանքի վարձատրության մասով 5.400.000 ՀՀ դրամ, - Վարչական սարքավորումներ՝ 2.500.000 ՀՀ դրամ (3 աշխատակցի համար անհրաժեշտ համակարգչային կոմպլեկտի, գրասենյակային գույքի, գրասենյակային տեխնիկայի ձեռքբե-	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2014 թ. պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում նշված ծրագիրը ավելացվել է 10.0 մլն դրամով:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		րում): - ներքին գործուղման ծախսեր՝ 1.200.000 ՀՀ դրամ (շուրջ 35 գործուղում 2-3 օր տևողությամբ) Տրանսպորտային նյութեր՝ 900.000 ՀՀ դրամ (բենզինի ձեռքբերում)	
14.	ՀՀ Ազգային ժողովի Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդու- թյան և սպորտի հարցերի մշտական հանձնաժողով	1. «Հանգիստ, մշակույթ և կրոն» ոլորտի <u>դասակարգման 8-րդ բաժնի՝</u> 02 խմբի 07՝ «Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում» դասում հատկացնել լրացուցիչ 15 մլն դրամ՝ ՀՀ տարածքում հուշարձանների ուսումնասիր- ման, հաշվառման, պահպանական գոտիների նախագծերի կազմման և հուշարձանների տեխնիկական վիճակի մոնիտորինգի իրակա- նացման նպատակով	Հարցը կքննարկվի ՀՀ 2015-2017թթ. ՄԺԾԾ շրջանակներում:
15.	ՀՀ Ազգային ժողովի Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդու- թյան և սպորտի հարցերի մշտական հանձնաժողով	2. «Հանգիստ, մշակույթ և կրոն» ոլորտի <u>դասակարգման 8-րդ բաժնի՝</u> 02 խմբի 07՝ «Հուշարձանների և մշակու- թային արժեքների վերականգնում և պահպա- նում» դասում հատկացնել լրացուցիչ 10 մլն. դրամ՝ «Դվին հնավայրի պեղումների իրակա- նացման և պեղավայրի ամրակայման աշխա- տանքների համար»:	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2015-2017 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:
16.	ՀՀ Ազգային ժողովի Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդու- թյան և սպորտի հարցերի մշտական հանձնաժողով	<u>Կրթության ոլորտի դասակարգման 9-րդ բաժնի՝</u> 1) 5-րդ խմբի 2-րդ՝ «Լրացուցիչ կրթություն» դասում հատկացնել լրացուցիչ 17 մլն դրամ՝ ՀՀ կառավարության ստեղծած Ուսուցման ազգային հիմնադրամի պահպանման և 10 մլն	Հարցը կքննարկվի ՀՀ 2015-2017թթ. ՄԺԾԾ շրջանակներում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		դրամ՝ վերջինիս կողմից «Հաստոցագործական և շինարարական աշխատողների մասնագիտական կարողությունների կատարելագործում» ծրագրի իրականացման համար:	
17.	ՀՀ Ազգային ժողովի Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողով	Նախատեսել «Գիտություն» բաղադրիչը և համապատասխան դասում նախատեսել լրացուցիչ 10 մլն դրամ՝ ԳԱԱ-ի «Էլեկտրոնային գիտական ամսագրի թողարկման» համար:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2014 թ. պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում նշված ծրագիրը ավելացվել է 10.0 մլն դրամով:
18.	ՀՀ Ազգային ժողովի Գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողով	Հայաստանի Հանրապետության Շիրակ և Արարատ մարզերի տարածքներում գտնվող բնության հուշարձանների հաստատված ցանկի համալրման, պահպանական գոտիների տարածքների ճշգրտման, հողամասերի սահմանազատման և քարտեզագրման աշխատանքների համար հատկացնել 10.144.0 դրամ: Կից ներկայացվում է առաջարկի հիմնավորումը: ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է թվով 230 բնության հուշարձանների ցանկը, որոնցից 109-ը դասակարգված են երկրաբանական, 48-ը՝ ջրաերկրաբանական, 38-ը՝ ջրագրական, 16-ը՝ բնապատմական և 19-ը՝ կենսաբանական տիպաբանական խմբերում: Սակայն վերը նշված ցանկը կարիք ունի համալրման, քանի որ դրանում լիարժեք չի ներկայացված Հայաստանի տարածքում առկա կենդանի և անկենդան բնության համալիրների և առանձին օբյեկտների հարուստ բազմազա-	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ ՀՀ կառավարության 02.08.2013թ. նիստի N 31 արձանագրային որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի նիստի N 21 արձանագրային որոշման մեջ («Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների հաստատված ցանկի համալրման, պահպանական գոտիների տարածքների ճշգրտման և հողամասերի սահմանազատման ծրագրի ժամկետ է սահմանվել 2015-2017թթ.):

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		նությունը, ինչպես նաև գործնականորեն հնարավոր չէ ապահովել բնության հուշարձանների պահպանության ռեժիմը, քանի որ համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի բնության հուշարձանի պահպանության ռեժիմը սահմանվում է յուրաքանչյուր բնության հուշարձանի համար կազմված անձնագրով, որն ընդգրկում է՝ ա) անվանումը և դասակարգումը. բ) տեղադիրքը և աշխարհագրական կոորդինատները. գ) նկարագրությունը, չափագրությունը և վիճակը. դ) սահմանների և պահպանման գոտու նկարագրությունը, մակերեսը, քարտեզ-հատակագիծը. ե) տվյալներ սեփականատիրոջ և հողօգտագործողի մասին. զ) պահպանության և օգտագործման ռեժիմի առանձնահատկությունները. է) տվյալներ պահպանությունն իրականացնող սուբյեկտի մասին: Այս բոլորի հետ մեկտեղ, հաստատված ցանկում առկա են մի շարք օբյեկտների ոչ ճշգրիտ տեղադիրքեր, որոնք անհրաժեշտ է հստակեցնել՝ համապատասխանեցնելով «ՀՀ աշխարհագրական անվանումների հաշվառման գրանցման պետական քարտադարանի ստեղծման և վարման» N502 որոշմամբ հաս-	

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		տատված կարգի պահանջներին: 2012 թ. իրականացվել է աշխատանքներ Լոռու և Տավուշի բնության հուշարձանների հաստատված ցանկի համալրման, պահպանական գոտիների տարածքների ճշգրտման, հողամասերի սահմանազատման և քարտեզագրման աշխատանքների մասով: Ցանկայի է նախատեսել համապատասխան ծավալների ֆինանսական միջոցներ՝ Շիրակ և Արարատ մարզերի տարածքներում իրականացնելու բնության հուշարձանների հաստատված ցանկի համալրման, պահպանական գոտիների տարածքների ճշգրտման, հողամասերի սահմանազատման և քարտեզագրման աշխատանքներ:	
19.	ՀՀ Ազգային ժողովի Առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողով	Առաջարկում ենք հատկացնել հավելյալ 50.0 մլն դրամ 07 առողջապահության բաժնի 02 խմբի 02 դասի՝ «Բարձր ռիսկի խմբերում ընդգրկված բնակչության մոտ հիվանդությունների հայտնաբերման, առողջության գնահատման և բուժման ծառայություններ» ծրագրին: «Բարձր ռիսկի խմբերում ընդգրկված բնակչության մոտ հիվանդությունների հայտնաբերման, առողջության գնահատման և բուժման ծառայություններ» ծրագրի վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից 2009թ. սեպտեմբերի 10-ին N37 արձանագրային որոշմամբ հաստատվել է «Երեխաների և դեռահասների	Առաջարկությունն ընդունվել է: «Բարձր ռիսկի խմբերում ընդգրկված բնակչության մոտ հիվանդությունների հայտնաբերման, առողջության գնահատման և բուժման ծառայություններ» ծրագրի գծով ավելացվել է 50.0 մլն դրամ՝ «Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ» ծրագրից կատարված վերաբաշխման միջոցով:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		առողջության և զարգացման ազգային ռազմավարությունը», որի նպատակներին հասնելու համար, վերջին տարիներին ընդլայնվել է երեխայի զարգացման խանգարումներ հայտնաբերող և վերականգնողական ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունների ցանցը: Ներկայումս, այդ ծառայությունները մատուցվում են նաև Երևանի N 9 մանկական պոլիկլինիկայում, Սպիտակի բժշկական կենտրոնում, Գուգարքի կենտրոնական պոլիկլինիկայում, Արաբկիր բժշկական համալիրի Արտաշատի մասնաճյուղում: Հաշվի առնելով այդ հանգամանքը, ինչպես նաև 2013թ. ճշտված բյուջեի 25.0 մլն դրամի դեֆիցիտը, առաջարկում ենք վերոնշյալ ծրագրին հատկացնել հավելյալ 50.0 մլն դրամ:	
20.	ՀՀ Ազգային ժողովի Առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողով	Առաջարկում ենք վերանվանել 07 առողջապահության բաժնի 02 խմբի 02 դասի «Բարձր ռիսկի խմբերում ընդգրկված բնակչության մոտ հիվանդությունների հայտնաբերման, առողջության գնահատման և բուժման ծառայություններ» ծրագիրը և այն փոխարինել 2007թ. բյուջեում նույն ծրագրի համար սահմանված անվամբ՝ «Մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ»: «Բարձր ռիսկի խմբերում ընդգրկված բնակչության մոտ հիվանդությունների հայտնաբեր-	Առաջարկությունն ընդունվել է: «Բարձր ռիսկի խմբերում ընդգրկված բնակչության մոտ հիվանդությունների հայտնաբերման, առողջության գնահատման և բուժման ծառայություններ» ծրագիրը վերանվանվել է «Մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ» ծրագրի:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		ման, առողջության գնահատման և բուժման ծառայություններ» անվանումը բոլորովին չի արտացոլում իրականացվող ծրագիրը, մինչդեռ 2007թ. բյուջեում նույն ծրագրի համար սահմանված «Մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ» անվանումը համահունչ է ՀՀ կառավարության կողմից հաստատված «Երեխաների և դեռահասների առողջության և զարգացման ազգային ռազմավարությանը», և առավել հիմնավոր է արտացոլում իրականացվող ծառայություններն ու բնութագրում շահառուներին:	
21.	ՀՀ Ազգային ժողովի Առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողով	Առաջարկում ենք հատկացնել հավելյալ 394.0 մլն դրամ 07 առողջապահության բաժնի 02 խմբի 02 դասի՝ «Հեմոդիալիզի անցկացման ծառայություններ» ծրագրին: Նախորդ տարիների ընթացքում, համաշխարհային բանկի միջոցով ֆինանսավորված արդիականացման ծրագրերի շրջանակներում մարզային հիվանդանոցների վերակառուցման ժամանակ, ՀՀ կառավարությունը մարզերում հիմնել է դիալիզի նոր բաժանմունքներ: Դա առաջացրել է դիալիզ ստացող հիվանդների թվի աճ և փաստացի 2013թ. 3-րդ եռամսյակի տվյալներով այդ թիվը կազմում է 650 հիվանդ 2012 թվականի 508-ի փոխարեն: Սակայն, 2014թ. բյուջեի նախագծում նախատեսված չէ որևիցե ավելացում այս ծառայությունների	Առաջարկությունն ընդունվել է: «Հեմոդիալիզի անցկացման ծառայություններ» ծրագրի գծով ավելացվել է 393.2 մլն դրամ՝ «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային բժշկական օգնություն և փորձաքննություն» ծրագրից կատարված վերաբաշխման միջոցով:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		համար և ավելին, առաջարկվող բյուջեն ավելի քիչ գումար է նախատեսում 2012թ. փաստացի հատկացումների համեմատությամբ:	
22.	ՀՀ Ազգային ժողովի Առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողով	Առաջարկում ենք հատկացնել հավելյալ 186.0 մլն դրամ 07 առողջապահության բաժնի 03 խմբի 02 դասի՝ «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրին: «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի համար 2014թ. բյուջեի նախագծում նախատեսված է 113.0 մլն դրամի աճ, ինչը չի կարող ապահովել այս բնագավառում 2014 թվականին նախատեսվող աշխատավարձերի գծով ծախսերի ավելացման փոխհատուցումը:	Առաջարկությունն ընդունվել է: «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի գծով ավելացվել է 187.5 մլն դրամ՝ ի հաշիվ հետևյալ ծրագրային վերաբաշխումների. - «Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր՝ 131.7 մլն դրամ, - «Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր՝ 55.0 մլն դրամ, - «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային բժշկական օգնություն և փորձաքննություն» ծրագիր՝ 0.8 մլն դրամ:
23.	ՀՀ Ազգային ժողովի Առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողով	Առաջարկում ենք հատկացնել հավելյալ 30.0 մլն դրամ 07 առողջապահության բաժնի 02 խմբի 02 դասի՝ «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ» ծրագրին: Սկսած 2004թ.-ից ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամը մեծ աջակցություն է ցուցաբերում Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ազգային ծրագրերի իրականացմանը: Ներկայումս էլ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ հիվանդների բուժման համար օգտագործվող հակառետրովիրուսային դեղորայքն ամբողջ ծավալով, ինչպես նաև անհրաժեշտ ախտորոշիչ նյութերը և սարքավորումները ձեռք են բերվում	Հարցը կքննարկվի ՀՀ 2015-2017թթ. ՄԺԾԾ շրջանակներում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Գործող դրամաշնորհային ծրագիրն ավարտվելու է 2015թ: Այդ կապակցությամբ 2014 թվականին մշակվելու և Գլոբալ հիմնադրամին է ներկայացվելու նոր դրամաշնորհային ծրագիր, որի ընդունման նախապայմաններից մեկն է հանդիսանում պետական ֆինանսավորման 40% մասնաբաժնի ապահովումը: 2014թ. բյուջեի նախագծով «ՄԻԱՎ-ՁԻԱՀԻ կանխարգելման և բուժօգնության ծառայություններ» ծրագրի բյուջետային հատկացումները պլանավորվել են 132 մլն 900 հազ դրամի չափով, ինչը բավարար չէ Գլոբալ հիմնադրամի կողմից նոր դրամաշնորհային միջոցների հատկացման նախապայմանը կատարելու տեսանկյունից, և կարող է հանգեցնել 2015-2017թթ համար ներկայացվելիք նոր դրամաշնորհային ծրագրի հայտի մերժմանը:	
24.	ՀՀ Ազգային ժողովի Առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողով	Առաջարկում ենք 07 առողջապահության բաժնի 03 խմբի 03 դասի՝ «Երեխաների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրում իրականացնել փոփոխություններ, ինչը կապահովի սոցիալական արդարությունը և առողջապահական տեսանկյունից առավել արդյունավետ մոտեցումների կիրառումը: Մասնավորապես՝ առաջարկում ենք ծրագրի նկարագրական հատվածում և հետագայում նաև ՀՀ կառավարության 04.03.2004թ. թիվ 318-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.	Շրջանառության մեջ է գտնվում « Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշումը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և ֆինանսավորման նոր մոտեցումները (ներառյալ ՀՀ Ազգային ժողովի Առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողովի կողմից երեխաների ֆինանսավորման» ինչպես նաև 0-18 տարեկան երեխաների պլանային և անհետաձգելի անվճար և արտոնյալ բժշկական ծառայությունների իրավունք ունեցող բնակչության խմբերի վերաբերյալ ներկայացված

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		«1. Պետական պատվերի շրջանակներում անվճար պայմաններով հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում ստացող երեխաների խմբեր (փոխհատուցումը իրականացվում է ամբողջությամբ պետական բյուջեի միջոցներով)։ 1) 0-7 տարեկան երեխաների անհետաձգելի բժշկական ծառայություններ (այս խմբի համար սահմանել անհետաձգելի հիվանդությունների և վիճակների նոր, ընդլայնված ցանկ)։ 2) Առանձին խմբերին պատկանող 0-18 տարեկան երեխաների պլանային և անհետաձգելի բժշկական ծառայություններ՝ աղքատության (ընտանեկան) նպաստի համակարգում ընդգրկված 30,00 և ավելի բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքների երեխաներ. առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ (0-18 տարեկան) և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք (18-23 տարեկան)։ • առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ (0-18 տարեկան) և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք (18-23 տարեկան)։ • բժշկասոցիալական փորձաքննության իրավասու պետական մարմնի ուղեգրով լրացուցիչ բժշկական հետազոտության ենթարկվող երեխաներ. • մանկատներում խնամվող երեխաներ. • 0-7 տարեկան երեխաների բազմախտա-	առաջարկը) գտնվում է քննարկման փուլում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		պային վիրաբուժական միջամտություններ (երկրորդից սկսած պլանային կարգով իրականացվող), որոնց առաջին վիրահատությունը կատարվել է նորածնային հասակում անհետաձգելի ցուցումներով: 1. Պետական պատվերի շրջանակներում արտոնյալ պայմաններով հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում ստացող երեխաների խմբեր (փոխհատուցումը իրականացվում է մասամբ պետական բյուջեի միջոցներով, իսկ մյուս մասը՝ համավճարի միջոցով). • 0-7 տարեկան երեխաների պլանային բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ (բացառությամբ 1-ին կետում նշված դեպքերի). • 7-18 տարեկան երեխաների անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ (բացառությամբ 1-ին կետում նշված դեպքերի): «Երեխաների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրում բյուջեի ավելացումը նախատեսվում է մոտ 403.0 մլն դրամ, ինչը չի համապատասխանում վերջին տարիներին գրանցված հիվանդների թվի աննախադեպ աճին: Ըստ մեր կանխատեսումների, 2013թ. հիվանդանոցային դեպքերը կգերազանցեն 2012թ. ցուցանիշները շուրջ 50%-ով և, ՀՀ կառավարության կողմից ներկայացված բյուջեի պարագայում, 2014թ. երեխաների գծով	

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		հիվանդանոցային բյուջեի դեֆիցիտը կկազմի 2.7 մլրդ դրամ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2014թ. բյուջեի նախագծում նախատեսված է սոցիալապես անապահով խավերին ուղղվող միջոցները ավելացնել և ծրագրում ներառել նաև ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկված 30.0-36.0 միավոր ունեցող ընտանիքների անդամներին, համապատասխան միջոցներ չեն հատկացված «Երեխաների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրում՝ վերը նշված ավելացվող ընտանիքների երեխաների բուժօգնությունն իրականացնելու համար: Այն էլ ավելի է խորացնելու արդեն իսկ առկա ֆինանսական միջոցների դեֆիցիտը: Այդ տեսանկյունից առաջարկում ենք «Երեխաների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրում իրականացվող փոփոխությունների արդյունքում սոցիալական խմբերին ուղղվող միջոցներն ավելացնել արդարության սկզբունքով իրականացվող համավճարի մեխանիզմների ներդրման հաշվին:	
25.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Գալուստ Սահակյան	<u>«ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կառուցվածքի փոփոխությունների գարգացում» ծրագիր</u> -5121 «Տրանսպորտային սարքավորումներ» հոդվածով 196 000.0 հազ. դրամ՝ 14 նոր Toyota Camry ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ազգային ժողովի կողմից շահագործվող 82 մեքենաներից 47-ը շահագործման մեջ են	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		10-ից 23 տարի և աշխատանքային վիճակում պահելու համար պահանջվում է զգալի աշխատանքային և ֆինանսական ռեսուրսներ, որը բյուջեի տեսանկյունից ավելի ծախսատար է, քան նոր մեքենաների ձեռքբերումը: -5122 «Վարչական սարքավորումներ» հոդվածով 28 460.0 հազ. դրամ՝ նոր համակարգչային տեխնիկա ձեռք բերելու նպատակով, քանի որ Ազգային ժողովում դեռևս շահագործման մեջ են գտնվում ֆիզիկապես և բարոյապես արդեն մաշված համակարգչային տեխնիկա (օրինակ՝ Pentium 3 համակարգիչներ, պատճենահան մեքենաներ և տպիչներ (1992թ.)), որոնք չեն բավարարում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների՝ մասնավորապես ծրագրային ապահովման, տեխնիկական պահանջներին, որը խաթարում է աշխատակազմի բնականոն գործունեությանը:	
26.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Գալուստ Սահակյան	<u>«Ազգային ժողովի աշխատակազմի և պատգամավորների պահպանում» ծրագիր</u> - 4239 «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով 30 000.0 հազ. դրամ՝ Ազգային ժողովի աշխատանքների հեռուստատեսությամբ և ռադիոյով լուսաբանման նպատակով: «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի «Ազգային ժողովի	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով ՀՀ ԱԺ ներկայացուցչական ծախսերը նախատեսվել են 195.0 մլն դրամ և «Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր» հոդվածով՝ 350.0 մլն դրամ (պահպանվել է 2013թ. մակարդակը):

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		աշխատանքների լուսաբանումը» 112 հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի դռնբաց նիստերի ուղիղ եթերով հեռուստա(ռադիո)-հեռարձակումը, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված նիստերի և Ազգային ժողովի, նրա հանձնաժողովների, խմբակցությունների, պատգամավորական խմբերի խորհրդարանական գործունեության լուսաբանումը «խորհրդարանական շաբաթ» հեռուստահաղորդաշարի միջոցով հեռարձակումն իրականացվում են պետական բյուջեի միջոցների հաշվին, պետական գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մրցույթը հաղթած հեռուստառադիոընկերության կողմից (հեռուստաընկերություն, ռադիոընկերություն): - 4222 «Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր» հոդվածով ավելացնել 179 288.3 հազ. դրամ և -- 4237 «Ներկայացուցչական ծախսեր» հոդվածով՝ 81 000.0 հազ. դրամ, որը հիմնականում պայմանավորված է միջխորհրդարանական կապերի զարգացմամբ և վերջին ժամանակներում Ազգային ժողովի պաշտոնական պատվիրակությունների փոխայցերի քանակի ավելացմամբ: Ազգային ժողովի 2014 թվականի բյուջեում առաջարկվող լրացուցիչ գումարը կազմում է 514 748,3 հազ. դրամ:	
27.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապե-	Աջափնյակ վարչական շրջանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգում – 150 մլն.	Երևանի թիվ 22 դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	տական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Գալուստ Սահակյան	դրամ	հերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման II փուլի աշխատանքների ցանկում: Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2015-2017 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:
28.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Գալուստ Սահակյան	Լոռու մարզ, Ախթալայի թիվ 2 միջնակարգ դպրոցի հիմնանորոգում – 70 մլն. դրամ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի թիվ 2 դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում: Դպրոցի տանիքի վերանորոգման նպատակով մարզերի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման շրջանակներում ՀՀ կառավարության 24.05.2012թ-ի N711-Ն որոշմամբ ՀՀ 2012թ-ի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 7.5 մլն դրամ:
29.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Գալուստ Սահակյան	Կոտայքի մարզ, Պոռշյան համայնքի «Կարոտ Մկրտչյանի ավան մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման ավարտական աշխատանքներ - 51 մլն. դրամ	ՀՀ Կոտայքի մարզի Պոռշյան համայնքի մշակույթի տան հիմնանորոգման ավարտական աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման II փուլի աշխատանքների ցանկում: Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2015-2017 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
30.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Գալուստ Սահակյան Մանվել Գրիգորյան	Էջմիածին քաղաքի թիվ 14 մանկապարտեզի վերանորոգում – 181 637 900 դրամ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի թիվ 14 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում: Մանկապարտեզի լոկալ ջեռուցման համակարգի կառուցման նպատակով մարզերի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման շրջանակներում ՀՀ կառավարության 24.05.2012թ-ի N711-Ն որոշմամբ ՀՀ 2012թ-ի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 14.3 մլն դրամ:
31.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Գալուստ Սահակյան Մանվել Գրիգորյան	Էջմիածին քաղաքի թիվ 2 երաժշտական դպրոցի վերանորոգում – 179 304 800 դրամ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի թիվ 2 երաժշտական դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
32.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն	Էջմիածին քաղաքի մշակույթի պալատի ուսումնական մասնաշենքերի վերանորոգում - 87,441.5 դրամ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	մավորական խմբակցություն Գալուստ Սահակյան Մանվել Գրիգորյան		ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի մշակույթի պալատի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
33.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Գալուստ Սահակյան Մանվել Գրիգորյան	Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի կառուցում – 230 մլն. դրամ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի նոր մարզադպրոցի կառուցման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
34.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Գալուստ Սահակյան Սեյրան Սարոյան	Էջմիածնի շրջանի Մեծամոր գյուղի մանկապարտեզի վերակառուցում – 57191,89 հազ. դրամ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր գյուղական համայնքի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
35.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն	Արմավիրի մարզ, Հայկաշեն համայնքի մանկապարտեզի կառուցում– 52860,24 հազ. դրամ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	մավորական խմբակցություն Գալուստ Սահակյան Սեյրան Սարոյան		ՀՀ Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի մանկապարտեզի կառուցման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
36.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Գալուստ Սահակյան Սեյրան Սարոյան	Արմավիրի մարզ, Արևաշատ համայնքի մանկապարտեզի կառուցում – 62267,64 հազ. դրամ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի մանկապարտեզի կառուցման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
37.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Գալուստ Սահակյան Սեյրան Սարոյան	Արմավիրի մարզ, Ծաղկունք համայնքի մանկապարտեզի կառուցում և անհրաժեշտ գույք – 77,859032 դրամ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի մանկապարտեզի կառուցման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
38.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն	Արմավիրի մարզ, Նորակերտ համայնքի մանկապարտեզի 1-ին հարկի հիմնանորոգման աշխատանքներ – 26,148 հազ. դրամ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	մավորական խմբակցու- թյուն Գալուստ Սահակյան Սեյրան Սարոյան		ՀՀ Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
39.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապե- տական» (ՀՀԿ) պատգա- մավորական խմբակցու- թյուն Գալուստ Սահակյան Սեյրան Սարոյան	Արմավիրի մարզ, Նորակերտ համայնքի ման- կապարտեզի 2-րդ հարկի հիմնանորոգման աշխատանքներ – 12557,67 հազ. դրամ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պե- տական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտ- քերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
40.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապե- տական» (ՀՀԿ) պատգա- մավորական խմբակցու- թյուն Գալուստ Սահակյան Սեյրան Սարոյան	Արմավիրի մարզ, Շահումյան համայնքի ման- կապարտեզին անհրաժեշտ սարքավորումներ և կահույք – 8622,33 հազ. դրամ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պե- տական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտ- քերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
41.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապե- տական» (ՀՀԿ) պատգա- մավորական խմբակցու- թյուն Գալուստ Սահակյան Սեյրան Սարոյան	Արմավիրի մարզ, Փարաքար գյուղի մանկա- պարտեզի հիմնանորոգման աշխատանքներ – 28706400 հազ. դրամ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պե- տական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտ- քերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
42.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Գալուստ Սահակյան Սեյրան Սարոյան	Արմավիրի մարզ, Թաիրով գյուղի մանկապարտեզի վերանորոգման և ներքին հարդարման աշխատանքներ – 23249592 հազ. դրամ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Արմավիրի մարզի Թաիրով գյուղի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
43.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Գալուստ Սահակյան Սեյրան Սարոյան	Արմավիրի մարզ, Շահումյան թ/Ֆ համայնքի կոյուղու վերանորոգման աշխատանքներ – 3625000 հազ. դրամ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: Ներկայումս Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Ջրամատակարարման և ջրահեռացման II փուլի վարկային ծրագրով նախատեսված է միայն համայնքի ջրամատակարարման համակարգի բարելավումը:
44.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Գալուստ Սահակյան Սեյրան Սարոյան	Արմավիրի մարզ, Դաշտ համայնքի մշակույթի տան ներքին հարդարման հիմնանորոգում – 5053,00 հազ. դրամ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Արմավիրի մարզի Դաշտ համայնքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
45.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական» (ՀՀԿ) պատգամավորական խմբակցություն Գալուստ Սահակյան Սեյրան Սարոյան	Արմավիրի մարզ, Ոսկեհատ համայնքի տանիքի հիմնանորոգում – 9706,53 հազ. դրամ	Առաջարկը կարիք ունի լրացուցիչ հստակեցման: Պարզ չէ, թե համայնքի որ շինության տանիքն է առաջարկվում

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	տական» (ՀՀԿ) պատգա- մավորական խմբակցու- թյուն Գալուստ Սահակյան Սեյրան Սարոյան	դրամ	հիմնանորոգել: ՀՀ Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի կրթական, մշակու- թային և մարզական օբյեկտներ ներառված չեն ՀՀ կառավարու- թյան 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուց- ման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում
46.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապե- տական» (ՀՀԿ) պատգա- մավորական խմբակցու- թյուն Գալուստ Սահակյան Սեյրան Սարոյան	Արմավիրի մարզ, Գայ համայնքի մշակույթի տան առաջին հարկի վերանորոգում- 53075,60 հազ. դրամ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պե- տական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտ- քերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Արմավիրի մարզի Գայ համայնքի մշակույթի տան հիմնանո- րոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզա- կան օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28- 17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
47.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապե- տական» (ՀՀԿ) պատգա- մավորական խմբակցու- թյուն Գալուստ Սահակյան Սեյրան Սարոյան	Արմավիրի մարզ, Այգեկ համայնքի գիշերա- յին լուսավորության համար հատկացնել 7688000 դրամ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
48.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապե- տական» (ՀՀԿ) պատգա- մավորական խմբակցու- թյուն Գալուստ Սահակյան	Արմավիրի մարզ, Մուսալեռ համայնքի կեղ- տաջրերի հեռացման և մաքրման կայանի կառուցման աշխատանքներ- 44001,08	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: Ներկայումս Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Զրամատակարարման և ջրահեռացման II փուլի վարկային ծրագրով նախատեսված է միայն համայնքի ջրամա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Սեյրան Սարոյան		տակարարման համակարգի բարելավումը:
49.	ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապե- տական» (ՀՀԿ) պատգա- մավորական խմբակցու- թյուն Գալուստ Սահակյան Սեյրան Սարոյան	Արմավիրի մարզ, Այգեշատ գյուղի դպրոցի մասնակի վերանորոգում- 64506,71	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պե- տական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտ- քերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Արմավիրի մարզում Այգեշատ անվանումով առկա է 2 հա- մայնք՝ Արմավիրի շրջանի և Էջմիածնի շրջանի: Նշված համայնք- ների դպրոցների հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանո- րոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանու- թյուն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտ- ների ցանկերում:
124.	ՀՀ Ազգային ժողովի «ԲՀԿ» պատգամավորական խմբակցություն	Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական խնայբանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրած դրամական ավանդների դիմաց փոխհատուցման նպատակով նախատեսված գումարը կրկնապատկել;	Առաջարկությունը չի ընդունվել: Ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից, հնարավոր չէ 2014 թվականի պետական բյուջեով ավանդների դիմաց փոխհատուցման համար նախատեսել հավելյալ 3.8 մլրդ դրամ: Միաժամանակ, ՀՀ Ազգային ժողովի կողմից 23.05.2013 թ. հավանության է արժանացել ՀՀ կառավարության 16.05.2013 թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 515-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը, որով նախատեսված է իրականացնել՝ ԽՍՀՄ խնայբանկում մինչև 1993 թ. ներդրված ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման շարունակական ծրագրեր:
125.	ՀՀ Ազգային ժողովի «ԲՀԿ» պատգամավորական խմբակցություն	Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի արագ արձագանքման կարողությունների զարգացման համար նախատեսել 10 մլն դրամ;	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2014 թ. պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում նշված ծրագիրը ավելացվել է 10.0 մլն դրամով:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
126.	ՀՀ Ազգային ժողովի «ԲՀԿ» պատգամավորական խմբակցություն	«Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում ավելացնել համապատասխան հոդված՝ 1988 թվականին Ադրբեջանից Հայաստանի Հանրապետություն բռնագաղթած անձանց բնակարանային հարցը լուծելու նպատակով հատկացումներ սահմանելու համար;	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
127.	ՀՀ Ազգային ժողովի «ԲՀԿ» պատգամավորական խմբակցություն	Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության համար տրվող պետական աջակցությունը պետք է կայուն եւ շոշափելի լինի, որին հասնելու համար առաջարկվում է նախատեսել «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հատկացումների առնվազն կրկնապատկում:	Առաջարկությունը չի ընդունվել: Պաշտպանության ոլորտում իր նպատակների իրագործման համար մի շարք միջոցառումների թվում ՀՀ կառավարությանը նախատեսում է նաև զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների համար ապահովել պատշաճ սոցիալական ապահովության մեխանիզմների ներդրումը: Այս առումով, հաշվի առնելով առկա ֆինանսական ռեսուրսների իրատեսական ծավալները, արդեն իսկ ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող օրենքների նախագծերի փաթեթի շրջանակներում ՀՀ Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվել «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագծով նախատեսվում է վերանայել զինվորական կենսաթոշակները հաշվարկելու պայմաններն ու կարգը (օրենքն ուժի մեջ կմտնի 2014 թ. հուլիսի 1-ին): Զինվորական կենսաթոշակների հաշվարկման բանաձևի փոփոխության միջոցով նախատեսվում է ապահովել զինվորական միջին կենսաթոշակի չափի շուրջ 15 տոկոսով աճ կամ 3.6 մլրդ դրամով ավելի:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			Բացի այդ 2014 թ. պետական բյուջեի նախագծով «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսված ծախսը կազմում է 2.7 մլրդ դրամ, որի շրջանակներում 2013 թ. համեմատ նախատեսվում է բուժում, նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով բժշկական օգնություն (սրտի և ուղեղի անոթների վիրահատությունների), դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների անցկացում և այլն իրականացնել ինչպես զինծառայողների, այնպես էլ նրանց ընտանիքի անդամների համար: Ուստի զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության համար հատկացումների առնվազն կրկնապատկում նախատեսել հնարավոր չէ, ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: Միաժամանակ հայտնում ենք, որ 2014 թվականի հունվարի 1-ից նախատեսվում է զինծառայողների միջին ամսական աշխատավարձերը բարձրացնել 10%-ով:
128.	ՀՀ Ազգային Ժողովի «ԲՀԿ» պատգամավորական խմբակցություն	«Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում ավելացնել համապատասխան հոդված՝ չաշխատող մայրերի՝ մինչև 2 տարեկան երեխայի խնամքի համար նպաստ ստանալու նպատակով համապատասխան հատկացումների:	Առաջարկությունը չի ընդունվել: ՀՀ 2014 թ. պետական բյուջեի նախագծով մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի համար նախատեսվել է 2.42 մլրդ դրամ: Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված վիճակագրական տվյալների 2012 թվականի ընթացքում ծնված երեխաների թիվը կազմել է՝ 42480, իսկ համաձայն կանխատեսումների 2013 թ.՝ ծնվող երեխաների թիվը կկազմի շուրջ 40 636: Այսինքն 2014 թվականի ընթացքում մինչև երկու տարեկան երեխաների թիվը կկազմի 83 116:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			Այսպիսով, 2014 թվականին մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունք կունենա նախատեսվածից 71 916-ով ավելի երեխա (83 116-11.200): 2014 թվականին նպաստի չափը 18.0 հազ դրամի չափով պահպանելու պարագայում, անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսական միջոցները կկազմեն՝ 15.5 մլրդ դրամ, իսկ ներառյալ վճարման ծառայության գումարը՝ 15.7 մլրդ դրամ), որը նախատեսել հնարավոր չէ, ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
129.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	ՀՀ կառավարության 2014թ. բյուջետային ուղերձի առաջին մասի ՀՀ արտաքին քաղաքականության ոլորտի 2013թ. հիմնական խնդիրներին վերաբերող մասը «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորումը» բառերից հետո լրացնել հետևյալ բառերով. «և բանակցությունների արդյունավետության ապահովման նպատակով Արցախի Հանրապետության ներկայացուցիչների լիարժեք մասնակցությունն այդ գործընթացին վերականգնելու համար հնարավոր բոլոր ջանքերի գործադրումը»: Փոփոխությունը պայմանավորված է «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2008թ. ապրիլի 29-ին ընդունած հայտարարությամբ: Հիշյալ փաստաթղթով Ազգային ժողովը ՀՀ Նախագահին և Կառավարությանն առաջարկել է ամեն ջանք գործադրել վերականգնելու համար Արցախի	ՀՀ 2014թ. բյուջետային ուղերձում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման վերաբերյալ դրույթը վերաբերում է այն ծավալուն գործընթացին, որը ներառում է թե՛ Արցախի Հանրապետության ներկայացուցիչների լիարժեք մասնակցության ապահովման, թե՛ զինադադարի ամրապնդման, և թե մի շարք այլ ուղղություններով գործադրվող ջանքերը, և այս կամ այն դրույթի առանձնացումը նպատակահարմար չէ:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Հանրապետության ներկայացուցիչների լիար- ժեք մասնակցությունը ընթացող բանակցու- թյուններին:	
130.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Ավելացնել գիտության ոլորտի ֆինանսավո- րումն այն հաշվով, որ թեմատիկ ֆինանսավո- րմամբ տրվող գիտական դրամաշնորհների թիվը բյուջեի ներկա նախագծով նախատես- վածի համեմատ ավելանա 100-ով, բոլոր դրամաշնորհներում ընդգրկված յուրաքանչյուր գիտաշխատողի համար նախատեսելով աշ- խատավարձ՝ բյուջետային աշխատողների միջին աշխատավարձի չափով: Գիտնականները երկրում ստանում են ամե- նացած աշխատավարձը, միևնույն ժամանակ գիտությունը հայտարարված է գերակա ոլորտ: Այստեղ կա ակնհայտ հակասություն: Երիտա- սարդ գիտնականները լքում են կամ ոլորտը կամ ընդհանրապես երկիրը: Մտավոր ներուժը դրանով թուլանում է, այնինչ պետք է լինի հակառակը:	Գիտական և գիտատեխնիկական գործունեության թեմատիկ ֆինանսավորման մեջ ընդգրկված գրեթե բոլոր կատարողներն ընդգրկված են նաև բազային ֆինանսավորման ենթակառուց- վածքի պահպանման ու զարգացման ծրագրերում և նրանց միջին հաշվարկային աշխատավարձը 2013-2014թթ. կազմում է 100 հազար դրամ (թեմատիկ ֆինանսավորում) և 73 հազար դրամ՝ բազային ֆինանսավորման համար: Ինչ վերաբերում է թեմաների թվաքանակի ավելացմանը, ապա այն չի ընդունվել՝ եղևելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կան- խատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
131.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Նվազեցնել 2014թ. նախատեսվող հարկային մուտքերը սահմանամերձ և բարձր լեռնային բոլոր բնակավայրերի մասով՝ այդ բնակավայ- րերում հաշվառված մեկ անձին սեփակա- նության իրավունքով պատկանող մինչև 20 մլն արժողությամբ գույքի և մինչև 10 հա հողա- տարածքների հանդեպ հարկման զրոյական դրույքաչափերի կիրառման արդյունքում: Այս քայլը կթեթևացնի սահմանամերձ և	Սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի՝ մարտական գործողությունների հետևանքով չօգտագործված հողերը՝ 1994 թվականից սկսած, ազատված են հողի հարկից: Միաժամանակ, գույքահարկի և հողի հարկի հաշվարկման հիմ- քում դրված են գոտիականության գործակիցներ, որոնք սահ- մանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում բավականին ցածր են, ինչն իր հերթին փոքրացնում է դրանց կադաստա- րային արժեքները և համապատասխանաբար՝ դրանց մասով հաշվարկվող գույքահարկն ու հողի հարկը:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		բարձր լեռնային բնակավայրերի բնակչության սոցիալական վիճակը և կիսրախուսի նրանց մնալ իրենց հայրենի տարածաշրջաններում	Բացի այդ, համայնքի ավագանին, ՀՀ կառավարության սահմանած կարգով, կարող է հողի հարկի և գույքահարկի գծով արտոնություններ սահմանել: Մյուս կողմից, «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանամերձ բնակավայրերում արտոնագրային վճարի օբյեկտ համարվող գործունեության տեսակների մասով սահմանված են արտոնագրային վճարի անհամեմատ ավելի ցածր դրույքաչափեր, քան այլ վայրերում գործունեության նույն տեսակներով զբաղվելու համար: Հաշվի առնելով վերոնշյալը՝ սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերին հողի հարկի և գույքահարկի գծով արտոնությունների տրամադրումը համարում ենք ոչ նպատակահարմար: Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2013թ. մարտի 21-ի N 271-Ն որոշմամբ հաստատվել է մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող՝ ՀՀ սահմանամերձ համայնքների հողի հարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց և ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում ընդգրկված այդ համայնքներում ոռոգման ջուր օգտագործող ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական աջակցություն ցուցաբերելու ծրագիրը: Ծրագիրը շարունակական է, այն իրականացվելու է յուրաքանչյուր տարի՝ սկսած 2013 թվականից՝ համաձայն ՀՀ կառավարության կողմից ընդունված համապատասխան որոշման: Մասնավորապես, այդ ծրագրի շրջանակներում ՀՀ 2013 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից արդեն իսկ հատկացվել է 93.3 մլն դրամ, որից ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և 2008-2012 թվականների ընթացքում հակառակորդի կող-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			մից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող սահմանամերձ համայնքների վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատարածքների (ներառյալ բնակավայրերում բնակչինարարության համար հատկացված, տնամերձ և այգեգործական (ամառանոցային) հողամասերի) 2013 թվականի համար հաշվարկված՝ վճարման ենթակա հողի հարկի տարեկան գումարը հարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց անունից, նրանց փոխարեն համապատասխան համայնքի բյուջե վճարելու նպատակով ՀՀ Արարատի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզպետարաններին հատկացվել է 62,4 մլն. դրամ:
132.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Սյունիքի մարզի Եղեգ համայնքի խմելու ջրի 9.5 կմ երկարությամբ ջրագծի վերականգնման համար հատկացնել 14 մլն. դրամ: Զրագծի անմխիթար վիճակն անդրադառնում է բնակչության սոցիալ-կենցաղային պայմանների վրա, որի արդյունքում բնակչությունը լքում է համայնքը: Կենտրոնացված ջրամատակարարման համակարգերի և ջրի հավաքման ջրամբարների կառուցումը կարող է ջրի պաշարների կուտակման դեպքում խմելու ջրով ապահովել համայնքը նաև ամռանը, երբ բնական աղբյուրներից շատերը ցամաքում են:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
133.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Սյունիքի մարզի Եղեգ համայնքը Կապան-Երևան մայրուղուն կապող մինչև 8 կմ և մոտ 5 կմ ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգման համար հատկացնել 150 մլն. դրամ: Անբարեկարգ ճանապարհները լրացուցիչ դժվարություններ և խնդիրներ են ստեղծում համայնքի բնակիչների համար գյուղմթերքների	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		իրացման առումով, ինչպես նաև խոչընդոտում են մարզկենտրոնում գործող բժշկական ծառայություններից հրատապ օգտվել ցանկացող ծերերին, հղի կանանց, երեխաներին և հաշմանդամներին: Անբարեկարգ ճանապարհները լրացուցիչ դժվարություններ և խնդիրներ են ստեղծում համայնքի բնակիչների համար գյուղմթերքների իրացման առումով, ինչպես նաև խոչընդոտում են մարզկենտրոնում գործող բժշկական ծառայություններից հրատապ օգտվել ցանկացող ծերերին, հղի կանանց, երեխաներին և հաշմանդամներին:	
134.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Սյունիքի մարզի Գեղանուշ համայնքի խմելու ջրագծի վերանորոգման համար հատկացնել 60 մլն. դրամ : Ջրագծի անմխիթար վիճակն անդրադառնում է բնակչության սոցիալ-կենցաղային պայմանների վրա, որի արդյունքում բնակչությունը լքում է համայնքը: Կենտրոնացված ջրամատակարարման համակարգերի և ջրի հավաքման ջրամբարների կառուցումը կարող է ջրի պաշարների կուտակման դեպքում խմելու ջրով ապահովել համայնքը նաև ամռանը, երբ բնական աղբյուրներից շատերը ցամաքում են:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
135.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Սյունիքի մարզի Գեղանուշ համայնքը մարզկենտրոն Կապանին կապող մոտ 6 կմ և ներհամայնքային մոտ 14 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհների հիմնանորոգման և բարեկարգման համար հատկացնել 135 մլն. դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Անբարեկարգ ճանապարհները լրացուցիչ դժվարություններ և խնդիրներ են ստեղծում համայնքի բնակիչների համար գյուղմթերքների իրացման առումով, ինչպես նաև խոչընդոտում են մարզկենտրոնում գործող բժշկական ծառայություններից հրատապ օգտվել ցանկացող ծերերին, հղի կանանց, երեխաներին և հաշմանդամներին:	
136.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Սյունիքի մարզի Գեղանուշ համայնքի վարչական շենքի, երկու ակումբների և գրադարանի հիմնանորոգման համար հատկացնել 17 մլն. դրամ: Համայնքի վարչական շենքի անմխիթար վիճակը խոչընդոտում է և թույլ չի տալիս ղեկավարին և նրա աշխատակազմին պատշաճ ձևով կազմակերպել և իրականացնել աշխատանքները: Բացի այդ, համայնքի երիտասարդության ազատ ժամանցի, նախաձեռնողական միջոցառումների կազմակերպման և իրականացման ու նրանց արտագաղթը կանխելու նպատակով առաջարկվում է հիմնանորոգել երկու ակումբների և գրադարանի շենքերը:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Սյունիքի մարզի Գեղանուշ համայնքի ակումբների և գրադարանի շենքերի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
137.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Սյունիքի մարզի Վարդանիժոր համայնքին հատկացնել 12 մլն. դրամ: Ներհամայնքային մոտ 3 կմ երկարությամբ ճանապարհների ասֆալտապատման և բարեկարգման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
138.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական	Սյունիքի մարզի Ալվանք համայնքին հատկացնել 50 մլն. դրամ: Համայնքի խմելու ջրի ներքին ջրազծերի	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	խմբակցություն	մաքրման և վերնորոգման համար, ինչի արդյունքում համայնքի բնակիչները կապահովվեն շուրջօրյա խմելու ջրով:	
139.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Սյունիքի մարզի Ալվանք համայնքին հատկացնել 12 մլն. դրամ: Ներհամայնքային ճանապարհների և փողոցների ասֆալտապատման և բարեկարգման նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
140.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Սյունիքի մարզի ՌԻԾ համայնքին հատկացնել 150 մլն. դրամ: Գումարն անհրաժեշտ է ներհամայնքային ճանապարհների բարեկարգման համար: Ճանապարհի բարեկարգումը կխթանի սոցիալ-տնտեսական և տուրիզմի զարգացումը, հնարավորություն կընձեռի երթուղային տաքսիներին մուտք գործել համայնք, կնպաստի գյուղմթերքների արտադրանքի իրացմանը և պայմաններ կստեղծի բարեկեցիկ կյանքի ապահովման ուղղությամբ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
141.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Սյունիքի մարզի ՌԻԾ համայնքի հատկացնել 1 մլն. դրամ: Գումարն անհրաժեշտ է օգտագործել համայնքում աղբահանության կազմակերպման համար, ինչի արդյունքում համայնքում կստեղծվի բավարար սանիտարահիգիենիկ պայմաններ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
142.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Սյունիքի մարզի ՌԻԾ համայնքին հատկացնել 30 մլն. դրամ: Գումարն անհրաժեշտ է համայնքի կիսակառույց մանկապարտեզի շենքի շինարարությունն ավարտին հասցնելու համար:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Սյունիքի մարզի ՌԻԾ համայնքի մանկապարտեզի շենքի շինարարական աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			րության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
143.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Վայոց Ձորի մարզի Արենի համայնքին հատկացնել 22 մլն. դրամ: Համայնքի խմելու ջրի ջրատարի մոտ 1.5 կմ հատվածի վերանորոգման համար: Համայնքի շուրջ 250 տնտեսություն 1000 բնակչով խմելու ջուր է ստանում մեկ աղբյուրից: Նույն աղբյուրից է օգտվում նաև գյուղի դպրոցը, հիվանդանոցը, առաջիկայում կօգտվի նաև նորակառույց մարզադպրոցը: Նշված աղբյուրի ջրատարը կառուցվել է 1965-1966թթ., ութ տարի առաջ ջրատարի մի մասը ենթարկվել է վերանորոգման, սակայն շուրջ 1.5 կմ հատվածը գտնվում է խիստ անմխիթար վիճակում: Նշված հատվածում կան արտահոսքեր, գարնանային ձնհալքի ու անձրևների հետևանքով աղտոտվում և վտանգավոր է դառնում խմելու ջուրը:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
144.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Վայոց Ձորի մարզի Արենի համայնքին հատկացնել 131 մլն. դրամ: Համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների թիվը շատ է, այն կլուծի երեխաների նախադպրոցական կրթություն ստանալու, ինչպես նաև ամառվա թեժ գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ ծնողների կողմից երեխաներին զբաղեցնելու հարցը:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի մանկապարտեզի շենքի կառուցման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին»

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
145.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Վայոց Ձորի մարզի Սալի համայնքին հատկացնել 10 մլն. դրամ: Համայնքի խմելու ջրի ջրամատակարարման արտաքին ցանցի 0.6 կմ երկարությամբ հատ- վածի վերանորոգման նպատակով: Ջրամա- տակարարման համակարգը կառուցվել է 1960թ.: Ջրագծի ընդհանուր երկարությունը կազմում է 12 կմ: Վերջին տարիներին վերա- նորոգվել է ջրագծի մեծ մասը: Պահանջվող մի- ջոցներն անհրաժեշտ են ջրագծի 0.6 կմ երկա- րությամբ հատվածի վերանորոգման համար:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: Մարզերի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման շրջանակներում ՀՀ կառավարության 24.05.2012թ-ի N711-Ն որոշմամբ ՀՀ 2012թ-ի պետական բյուջեով նախատես- ված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 10.9 մլն դրամ՝ Սալի համայնքի խմելու ջրագծի վերանորոգման նպատակով:
146.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Վայոց Ձորի Իշխանասար համայնքին հատ- կացնել 14 մլն. 700 հազար դրամ: Համայնքի առաջնային խնդիրներից է հանդի- սանում կոյուղու՝ բաց թողնված ջրերի և կեղ- տաջրերի ջրահեռացման համակարգի բացա- կայությունը: Բաց թողնված ջրերը և կեղտա- ջրերը լուրջ վնաս են պատճառում համայնքի առանց այն էլ վթարային վիճակում գտնվող բնակելի տներին, տնամերձ հողամասերում առաջանում են սողանքային խորը փոսեր, միաժամանակ ազդում են շրջակա միջավայրի և սանիտարահիգիենիկ իրավիճակի վրա: Պա- հանջվող գումարն անհրաժեշտ է համայնքի կոյուղու համակարգի կառուցման նպատակով:	Իշխանասար համայնքը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում: Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
147.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Սյունիքի մարզի Տորունիք համայնքին հատկացնել 2 մլն. դրամ: Տորունիք համայնքի առաջնային ու հրատապ խնդիրը համայնքային սեփականություն համարվող մշակույթի տան վերանորոգումն է, քանի որ տեղական և համայնքային նշանակություն ունեցող միջոցառումների անցկացման համար որևէ տեղ գոյություն չունի: Կոռուցումից հետո այն վերանորոգման չի ենթարկվել և այժմ գտնվում է ծայրահեղ անմխիթար վիճակում: Պահանջվող գումարն անհրաժեշտ է մշակույթի տան վերանորոգման համար:	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ ՀՀ Սյունիքի մարզի Տորունիք համայնքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
148.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Սյունիքի մարզի Տորունիք համայնքին հատկացնել 800 հազար դրամ: Գումարն անհրաժեշտ է ներհամայնքային 3 կմ ճանապարհահատվածի ջրահեռացման ցանցի կառուցման համար, ինչի արդյունքում ճանապարհներն անձրևաջրերի պատճառով չեն քանդվի և ավելի երկար կծառայեն հանրությանը:	Առաջարկությունը չի ընդունվել՝ աշխատանքների առաջնահերթության հիմնավորման և անհրաժեշտ նախահաշվային փաստաթղթերի բացակայության պատճառով:
149.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Սյունիքի մարզի Տորունիք համայնքին հատկացնել 500 հազար դրամ: Գումարն անհրաժեշտ է ներհամայնքային 3 կմ ճանապարհի բարեկարգման աշխատանքների իրականացման համար: Բարեկարգման արդյունքում կխթանվի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը, հնարավոր կդառնա երթուղային տաքսիների մուտքը համայնք, կստեղծվի պայմաններ գյուղմթերքների իրացման համար:	Առաջարկությունը չի ընդունվել՝ աշխատանքների առաջնահերթության հիմնավորման և անհրաժեշտ նախահաշվային փաստաթղթերի բացակայության պատճառով:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
150.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Վայոց Ձորի մարզի Հերիեր համայնքին հատկացնել 150 մլն. դրամ: Համայնքի 15 կմ երկարությամբ արտաքին ջրագիծը գտնվում է վատթար վիճակում: Վերանորոգման արդյունքում համայնքի ավելի քան 1000 բնակիչներ կօգտվեն մաքուր և առողջության համար ոչ վնասակար խմելու ջրից: Վերանորոգման նպատակն է նվազեցնել ջրի կորուստը, ինչպես նաև կանխել կեղտաջրերի ներթափանցման արդյունքում հնարավոր սուր վարակիչ հիվանդությունների առաջացումը:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
151.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Վայոց Ձորի մարզի Հերիեր համայնքին հատկացնել 405 մլն. դրամ: Հերիեր համայնքի առաջնային խնդիրը համայնք տանող ճանապարհի խարխուլ վիճակն է, որի երկարությունը կազմում է 12 կմ: Ճանապարհը կառուցման օրվանից մինչ օրս երբեք չի վերանորոգվել և այժմ գտնվում է բավականին վատթար վիճակում: Հարկ է նշել, որ ճանապարհից օգտվում է նաև Կեչուտ համայնքը: Այս երկու համայնքների բնակչության թիվը կազմում է 1600 մարդ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
152.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Վայոց Ձորի մարզի Մարտիրոս համայնքին հատկացնել 150 մլն. դրամ: Համայնքի առաջնային խնդիրը խմելու ջրի ջրագծի վերանորոգումն է, որի երկարությունը կազմում է 15.2 կմ: Ջրագիծը կառուցվել է 1972թ.: Ջրագիծը տևական ժամանակ չի վերանորոգվել և զգալիորեն վնասվել է:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Պահանջվող գումարն անհրաժեշտ է համայնքի ջրագծի վերանորոգման համար:	
153.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Վայոց ձորի մարզի Մարտիրոս համայնքին հատկացնել 400 մլն. դրամ: Գումարն անհրաժեշտ է վերանորոգել համայնքի 1985թ. կառուցված 180 մ ² տարածքով մշակույթի տունը, որն այժմ գտնվում է անմխիթար վիճակում: Վերանորոգումը որոշակիորեն կբարելավի համայնքի կուլտուր-կենցաղային պայմանները:	ՀՀ Վայոց ձորի մարզի Մարտիրոս համայնքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման I փուլի աշխատանքների ցանկում: Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2015-2017 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:
154.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Նվազեցնել 2014թ. նախատեսվող հարկային մուտքերը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում (ներառյալ Ինտերնետ տիրույթը): Ծավալվող ցանկացած ձեռնարկատիրական գործունեություն (բացի Ինտերնետում շահումով խաղերից) ԱԱՀ-ից և շահութահարկից 4 տարով ազատելու արդյունքում արդեն 2013թ. բյուջե թերմուտքագրված գումարների չափով: Ըստ միջազգային հեղինակավոր փորձագիտական կազմակերպությունների հաշվարկների՝ 2050թ. աշխարհում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում արտադրված ՀՆԱ-ն կգերազանցի վառելիքաէներգետիկ ոլորտում արտադրվող ՀՆԱ-ին: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը Հայաստանում իշխանությունների կողմից հռչակվել է որպես գերակա, սակայն այն խթանող պետական ծրագրերը խիստ անբավարար են այդ	Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտը Հայաստանի տնտեսության ամենաարագ զարգացող ճյուղերից է, որը մեծապես նպաստում է երկրի տնտեսության աճին, մրցունակության և արտադրողականության բարձրացմանը, հավելյալ արժեք ապահովող աշխատատեղերի ստեղծմանը և երկրի վարկանիշի բարձրացմանը: Ոլորտն այսօր ապահովում է բարձր եկամտաբերություն և գրավիչ է խոշորածավալ օտարերկրյա ներդրումների համար: ՀՀ կառավարությունը հետևողականորեն շարունակում է աջակցել ոլորտի հետագա զարգացմանը: Մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման նպատակով ՀՀ պետական բյուջեից տարեկան հատկացվում է շուրջ 80 մլն ՀՀ դրամ, որի շրջանակում, որպես պետության կողմից համաֆինանսավորում, ֆինանսական միջոցներ են տրամադրվում ոլորտի զարգացմանն ուղղված մի շարք միջոցառումների իրականացման համար: Սակայն ՏՀՏ ոլորտին ՀՀ պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական աջակցությունը չի սահմանափակվում միայն 80

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		ոլորտի ողջ ներուժի բացահայտման և առաջընթաց տեմպերով դրա զարգացման համար: Մինչդեռ՝ լինելով գիտելիքահեն, գիտության և կրթության զարգացումը խթանող, տրանսպորտային ծախսեր չպահանջող, տնտեսության և կառավարման արդյունավետության բարձրացմանը նպաստող՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը առավել մեծ հեռանկար ունի զարգանալու և կարիքն ունի ամենաբարձր մակարդակի խրախուսման:	մին ՀՀ դրամով: Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2011 թվականին ստորագրված «Էլ.-հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագիր» վարկային համաձայնագրի շրջանակում ևս ՀՀ պետական բյուջեից ֆինանսական միջոցներ են հատկացվում SS ոլորտի զարգացմանն ուղղված հեռանկարային ծրագրերի իրականացման համար: Համաձայնագրի շրջանակում իրականացվում են այնպիսի լայնածավալ ծրագրեր, ինչպիսիք են՝ Վենչուրային կապիտալի/սկսնակ ձեռնարկությունների աջակցման հիմնադրամի ստեղծման, ԱՄՆ Սիլիկոնյան հովտում վաճառքի գրասենյակի հիմնման, Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների ստեղծման, ՀՀ-ում հավաստագրման կենտրոնի հիմնման, «Համակարգիչ բոլորի համար», SS արտադրողականության բարձրացմանը, կադրերի կատարելագործմանը, վաճառքի ծավալների և օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանմանն ուղղված SS ոլորտի զարգացման տարբեր ծրագրեր: <i>1. Գործող օրենսդրությամբ գիտական ու գիտաթեխնիկական գործընթացներում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների համար արդեն իսկ սահմանված են բավական լայն հարկային արտոնություններ: Մասնավորապես.</i> <i>1) «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն, հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամույրը նվազեցվում է գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների համար կատարված ծախսերի ամբողջ գումարի չափով ծախսերի կատարման տարում,</i> <i>2) «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, գիտահետազոտական աշխատանքները ազատված են ավելացված արժեքի հարկից:</i> <i>2. Նոր հարկային արտոնությունների տրամադրումը չի բխում</i>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			ներկա փուլում իրականացվող հարկային ու մաքսային քաղաքականության ուղղություններից: Մասնավորապես, որ ս.թ. հուլիսի 25-ին ՀՀ կառավարությունը հաստատել է Հարկային և մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների վերաբերյալ ուղեցույցը, որով ամրագրված է, որ առաջիկա տարիներին հարկային քաղաքականությունն ուղղված է լինելու հարկման բազայի ամրապնդմանը, գործող արտոնությունների շրջանակի կրճատմանը, և այս համատեքստում նոր հարկային արտոնությունների տրամադրումը համահունչ չէ դրված նպատակադրումներին: 3. Բացի այդ, հարկման ոլորտում ցանկացած արտոնության կիրառություն ստեղծում է հարկումից խուսափելու ռիսկեր, որոնց արդյունավետ կառավարումը մշտական մարտահրավեր է դառնում հարկային մարմինների համար: Այդ տեսանկյունից գործարարության այս կամ այն ոլորտի զարգացումն ապահովելու առումով հարկային արտոնությունների կիրառությունը լավագույն գործիքը չէ և հետևաբար անհրաժեշտ է կիրառել աջակցության առավել հասցեական գործիքներ:
155.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Ոչ գյուղատնտեսական նպատակներով պետական հողերի վարձակալության համար գանձվող վարձավճարների ավելացում 5 անգամ: Առաջացած գումարները ուղղել համայնքային բյուջեներ: Ոչ գյուղատնտեսական նպատակներով պետական հողերի վարձակալության վարձավճարների դրույքաչափերը շատ փոքր են, ինչը բերում է մեծ հողակտորների երկարաժամկետ վարձակալության շահավետության՝ երբեմն առանց այդ հողերի արդյունավետ օգտագործման, երբեմն էլ հսկայական տարածքների՝	Պետության և համայնքային սեփականության հողամասերի, այդ թվում՝ ոչ գյուղատնտեսական նշանակության պետական հողերի, վարձակալության համար գանձվող տարեկան վարձավճարի նվազագույն չափը սահմանված է ՀՀ հողային օրենսգրքով: ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ՀՀ կառավարության որոշումներով (N286 12.04.2001թ, N 912-Ն 18.05.2006թ, N668-Ն 03.06.2010թ, N145-Ն 24.02.2011) կարգավորվող վարձավճարների չափերն էականորեն գերազանցում են ՀՀ հողային օրենսգրքով նախատեսված տարեկան վարձավճարի նվազագույն չափը: Ընդ որում, համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը օրենքով սահմանված դեպքերում մրցույթային կար-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		շարքային քաղաքացիների համար փակ գոտիների վերածման: Վարձավճարների դրույքաչափի ավելացումը կբերի նշված խնդրի մասնակի լուծմանը, դրա հետևանքների մեղմացմանը:	գով վարձակալության իրավունքով են տրամադրում համայնքների ղեկավարները (Հողային օրենսգրքի 76-րդ հոդված): Ուստի, խնդիրը հիմնականում կարգավորվում է վարձակալության պայմանագրով:
156.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Երիտասարդ և անօթևան ընտանիքների համար ցածրարժեք 1-2 սենյականոց բնակարանների (սոցիալական բնակարաններ) վարձակալում և ենթավարձակալությամբ տրամադրում՝ պետության կողմից վարձի 50%-ով զեղչմամբ: Այս նպատակով հատկացնել 3 մլրդ. դրամ: Այսօր Հայաստանում կան հազարավոր երիտասարդ ընտանիքներ, ովքեր ապրում են վարձված բնակարաններում, ինչը, բնակարանների վարձակալության շուկայական չարդարացված բարձր արժեքի պայմաններում ծանր բեռ է հանդիսանում նրանց ընտանեկան բյուջեների վրա: Բացի այդ, «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի տվյալներով՝ Երևանում կան շուրջ 180 անօթևաններ՝ ծերեր, երեխաներ և միայնակ մարդիկ: Այս առաջարկության ընդունմամբ էապես կթեթևացվի երիտասարդ ընտանիքների ֆինանսական հոգսը, իսկ անօթևան մարդկանց կտրամադրվի կացարան, որը դրական ազդեցություն կունենա նրանց առողջական վիճակի բարելավման և մահացության կրճատման առումով: Այս հատկացումը միտված կլինի սոցիալական լարվածությունը մեղմելուն, արտագաղթի	ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով «Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» ծրագրի շրջանակներում «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի կողմից նախատեսվում է 100 անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանով ապահովումը, իսկ Երևանի «Զատիկ» մանկատան անօթևանների կացարանում կսպասարկվեն 20 երեխաներ: Նշենք նաև, որ ՀՀ կառավարության 02.08.2012 թ. N 1009-Ն որոշմամբ ստեղծվել է «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ը, որը կիրականացնի սոցիալական բնակարանային ֆոնդում ընդգրկված 59 բնակարանների (ՀՀ Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի NN 25, 33, 34 շենքերում) և ՀՀ կառավարության 02.08.2012 թ. N 1012-Ն որոշմամբ ՀՀ ԱՍՀՆ տնօրինությանը հանձնված «Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջ» ՊՈԱԿ ամրագրված մասնաշենքի (մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտների հանրակացարանային տիպի բնակելի մակերեսով և դրանց կահավորման համար անհրաժեշտ գույքով ապահովելու համար) պահպանման, տեխնիկական սպասարկման աշխատանքներ և բնակիչների խնդիրների լուծման կազմակերպում:
			Առաջարկությունը (ըստ հեղինակի) ենթադրում է 3.0 մլրդ. դրամի լրացուցիչ ծախս, որը նախատեսել հնարավոր չէ, ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահեր-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		տեմայերը նվազեցնելուն:	թությունից:
157.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Հարևան և այլ երկրներից տեղահանված ու Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն հաստատած փախստականների ինչպես նաև ներքին տեղահանված անձանց բնակարանային խնդիրները լուծելու նպատակով հատկացնել 7 մլրդ. դրամ գումար: Հարևան և այլ երկրներից տեղահանված ու Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն հաստատած փախստականների, ինչպես նաև ներքին տեղահանված անձանց բնակարանային խնդիրների լուծումը կմեղմի երկրում առկա սոցիալական լարվածությունը, կնպաստի արտագաղթի տեմպերի նվազմանը: Միջոցները անհրաժեշտ է հատկացնել առևտրային բանկերի տրամադրած հիպոթեքային վարկերի տոկոսադրույքների՝ պետության կողմից 50%-ով համաֆինանսավորման եղանակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
158.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Կենսաթոշակների նվազագույն չափը հասցնել նվազագույն կենսապահովման զամբյուղի ցուցանիշին՝ 65.000 դրամի: Այդ նպատակով ծերության համար նախատեսվող գումարները ավելացնել 184 մլրդ. դրամով (450.000 թոշակառուի հաշվարկով): Կենսաթոշակների նվազագույն չափի համապատասխանեցումը նվազագույն կենսապահովման զամբյուղի ցուցանիշին մշտապես եղել է «Ժառանգություն» կուսակցության պահանջը: Միևնույն ժամանակ այս միջոցառումը	Սոցիալական քաղաքականության բնագավառում ՀՀ կառավարության ծրագրային խնդիրներից է կենսաթոշակառուների շրջանում աղքատությունը նախ՝ նվազեցնելու, ապա իսպառ բացառելու ուղղությամբ շարունակական ծրագրերի իրականացումը, ինչպես նաև կենսաթոշակների շարունակական աճի ապահովումը, որի արդյունքում ակնկալվում է միջին աշխատանքային կենսաթոշակի չափը հասցնել աղքատության գծի առնվազն 125 տոկոսին: Այս ծրագրային խնդիրների հնարավոր լուծումները պետք է դիտարկվեն իրատեսական ֆինանսական ռեսուրսներով ապահովվածության դաշտում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		2007 և 2008թթ.-ի ընտրություններից առաջ խոստացել էին իրականացնել համապատասխանաբար իշխող կուսակցությունն ու ՀՀ գործող նախագահը: Կենսապահովման զամբյուղը հաշվարկված է որպես մեկ անձի կենսագործունեության համար անհրաժեշտ նվազագույն գումար, որից ցածր կենսաթոշակի չեն սահմանելը հակատրամաբանական է, հակամարդկային, հակասում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ-ի կողմից վավերացված բազմաթիվ միջազգային կոնվենցիաների դրույթներին, տարրական հումանիստական և սոցիալական համերաշխության սկզբունքներին: Ի վերջո այսօրվա թոշակառուների քրտինքով են ժամանակին ստեղծվել այն հսկայական ենթակառույցները, որոնց անխնա շահագործման միջոցով հարստացել են և շարունակում են գերշահույթներ ստանալ մերօրյա օլիգարխները:	Այս մոտեցմամբ, որպես առաջադրված խնդիրների լուծման հերթական քայլ, ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող օրենքների նախագծերի փաթեթի շրջանակներում ՀՀ Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվել «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (օրենքն ուժի մեջ կմտնի 2014 թվականի հունվարի 1-ին): Այն միտված է նպաստելու կենսաթոշակառուների շրջանում աղքատությունը և աղքատության ռիսկը նախ՝ նվազեցնելու, ապա՝ իսպառ բացառելու քաղաքականության իրականացմանը: Միաժամանակ, նկատի ունենալով կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը՝ նվազագույն կենսաթոշակը 65 000 դրամ սահմանելու համար պետք է կենսաթոշակի հիմնական չափը (2014 թ. կենսաթոշակի հիմնական չափը կկազմի 14 000 դրամ) 51 000 դրամով բարձրացնել: Ըստ այդմ, հաշվի առնելով աշխատանքային և սոցիալական կենսաթոշակառուների թվաքանակը (շուրջ 505 000 անձ)՝ անհրաժեշտ լրացուցիչ միջոցները կկազմեն շուրջ 310.0 մլրդ դրամ, որի ընդունումը իրատեսական չէ:
159.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Գյուղատնտեսության սուբսիդավորման նպատակով հատկացվող միջոցները ավելացնել 10 մլրդ. դրամով: Մաքսային գերազատական ռեժիմի և Հայաստանի հետ առևտուր անող որոշ արտերկրների կողմից՝ իրենց գյուղատնտեսական արտադրողների հանդեպ սուբսիդավորման և հովանավորչության քաղաքականության կիրառման պայմաններում Հայաստանի գյուղատնտեսական արտադրությունը	ՀՀ 2014թ. պետական բյուջեի նախագծով ՀՀ գյուղատնտեսության նախարարության գծով նախատեսված է 6.962 մլրդ դրամ (այդ թվում վարկային և դրամաշնորհային միջոցներ), որը նպատակաուղղվելու է առաջնահերթ անհրաժեշտ ծրագրերի ֆինանսավորմանը: Հարկ նշել նաև, որ մի շարք ծրագրեր (հանքային պարարտանյութերի, դիզելային վառելանյութի մատակարարման (որոնց գնի մի մասը սուբսիդավորվում է)) իրականացվում են ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից (ՀՀ կառավարության պահուստային

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		շատ դեպքերում դառնում է անմրցունակ ներկրվող էժան գյուղատնտեսական մթերքների հանդեպ, ինչը հարվածում է տեղական արտադրողին, թույլ չի տալիս Հայաստանի գյուղմթերքներ արտադրողներին զարգացնել արտադրական ենթակառուցվածքները:	տային ֆոնդից այդ նպատակի համար 2013թ. հատկացվել է 3.994 մլրդ դրամ):
160.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Ոռոգման նպատակով հատկացվող բյուջե-տային միջոցները ավելացնել 5 մլրդ. դրամով: Այս միջոցներն ուղղել բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերի ջրօգտագործումը ամբողջությամբ սուբսիդավորելուն՝ խթանելով այդ տարածքներում գյուղմթերքների արտադրության աճը, ինչն իր հերթին կբարելավի տեղի բնակչության սոցիալական վիճակը, կպահի գյուղացուն իր հայրենի բնակավայրում: Սա էլ իր հերթին կարևոր է սահմանների ամրապնդման տեսանկյունից:	Ջրօգտագործողների ընկերությունների 2014թ. պետական ֆինանսական աջակցության գնահատվող չափաքանակները հաստատվել են ՀՀ կառավարության 30.09.2010թ. «Ջրօգտագործողների ընկերություններին պետական աջակցության միջնաժամկետ ռազմավարության հավանություն տալու և ռազմավարությունից բխող առանձին միջոցառումների իրականացումն ապահովելու գործողությունների մասին» N1291-Ն որոշմամբ: Ռազմավարությամբ նախատեսվել է ոռոգման ջրի բարձր ինքնարժեքի պարագայում մասնակի սուբսիդավորման միջոցով ոռոգման ծառայությունների մատչելիության ապահովում: Ընդ որում ՀՀ-ում գործող ՋՕԸ-ների կողմից հավաքագրվող եկամուտը 2012-2013թթ. համար տարեկան ծրագրավորվել է շուրջ 6.5 մլրդ դրամ: Առաջարկվող մոտեցման դեպքում պետության կողմից կփոխհատուցվի ծախսերի ավելի քան 90%-ը, ինչն ընդունելի չէ, քանի որ այդ դեպքում անվճար ջուր կտրամադրվի բոլորին անկախ ունեցած հողատարածքի մեծությունից: Միաժամանակ ՀՀ կառավարության 21.03.2013թ. «Հայաստանի Հանրապետության մի շարք սահմանամերձ համայնքների հողի հարկ վճարող ֆիզիկական անձանց և ոռոգման ջուր օգտագործող ֆիզիկական անձանց պետական աջակցության ծրագիրը հաստատելու, ՀՀ Արարատի, Սյունիքի, Վայոց Ձորի, Տավուշի մարզպետարաններին և ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմի-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			տեին գումար հատկացնելու մասին» N271-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 2-րդ կետի համաձայն նախատեսվում է սկսած 2013թ.-ից յուրաքանչյուր տարի պետական աջակցություն ցուցաբերել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և 2008-2012 թթ. ընթացքում հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող սահմանամերձ համայնքների հողի հարկ վճարող, ինչպես նաև ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում ընդգրկված այդ համայնքներում ոռոգման ջրի օգտագործող ֆիզիկական և իրավաբանական անձանց:
161.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Հավելյալ 3.8 մլրդ դրամ հատկացնել Հայխնայբանկում ավանդատու հանդիսացող քաղաքացիներին նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների՝ ներառյալ 1990-ականների խաբված ավանդատուների կորցրած գումարները, փոխհատուցմանը: Այդ նպատակով փոփոխել 2005 թվականի հուլիսի 1-ից սկսած և անընդմեջ մինչև 2006 թվականի ապրիլի 1-ը ընտանեկան նպաստառուների ցուցակներում ընդգրկված ընտանիքներին նպաստ տրամադրելու կարգը: Անհրաժեշտ է կրկնապատկել փոխհատուցման գործակիցները, սահմանել փոխհատուցման ժամկետների հստակ ժամանակացույցեր: Մնացած տուժած ավանդատուների հասանելիք գումարները՝ վերը նշված գործակցով հաշվառելուց հետո ճանաչել որպես ներքին	Ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից, հնարավոր չէ 2014 թվականի պետական բյուջեով ավանդների դիմաց փոխհատուցման համար նախատեսել հավելյալ 3.8 մլրդ դրամ: Միաժամանակ, ՀՀ Ազգային ժողովի կողմից 23.05.2013 թ. հավանության է արժանացել ՀՀ կառավարության 16.05.2013 թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 515-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը, որով նախատեսված է իրականացնել՝ ԽՍՀՄ խնայբանկում մինչև 1993 թ. ներդրված ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման շարունակական ծրագրեր:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		պարտք և տրամադրել նրանց հատուկ այդ նպատակով թողարկված համապատասխան ներքին փոխառության պարտատոմսեր: Առաջարկի ընդունումը նաև հնարավորություն կտա մեծացնել փոխհատուցում ստացողների ցանկը, որով կապահովվի սոցիալական արդարությունը:	
162.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին հատկացնել 10 մլն. դրամ: Հաշվի առնելով Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության դերն ու կարևորությունը, ինչպես նաև 2014 թվականի բյուջեի նախագծով մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի համար նախատեսված միջոցների սակավությունը՝ լրացուցիչ 10 մլն դրամ հատկացնելով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին՝ հնարավորություն կստեղծվի առավել օպերատիվ և արդյունավետ կազմակերպել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման խմբի աշխատանքները: Առաջարկում ենք վերոնշյալ 10 մլն դրամը հայթայթել՝ կրճատելով պետական կառավարման համակարգի որևէ գերատեսչության պահուստային ֆոնդի համար նախատեսված գումարներից:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2014 թ. պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում նշված ծրագիրը ավելացվել է 10.0 մլն դրամով:
163.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական	ՀՀ 2014թ. պետական բյուջեի նախագծով հաշմանդամային սպորտին առնչվող ծառայությունների համար նախատեսված 9 մլն. դրամը	Հարցը կքննարկվի ՀՀ 2015-2017թթ. ՄԺԾԾ շրջանակներում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	խմբակցություն	ավելացնել 31 մլն. դրամով՝ հասցնելով 40 մլն. դրամի: 2010թ. հոկտեմբերի 22-ից ՀՀ-ում ուժի մեջ է մտել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի Կոնվենցիան: Սույն Կոնվենցիայի նպատակն է աջակցել, պաշտպանել և ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց՝ լիարժեքորեն և հավասարապես օգտվել մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից, ինչպես նաև ապահովել հարգանքը նրանց արժանապատվության նկատմամբ: Կոնվենցիայի 30-րդ հոդվածի, 5-րդ կետի ա) և բ) ենթակետերը պահանջում են, որ՝ ա) խրախուսելու համար հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորինս ակտիվ մասնակցությունը բոլոր մակարդակներում անցկացվող հիմնական սպորտային միջոցառումներին. բ) ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձինք հնարավորություն ունենան կազմակերպելու և զարգացնելու հաշմանդամությանը հատուկ սպորտային և առողջարարական միջոցառումներ և մասնակցեն դրանց, ինչպես նաև այս նպատակն իրականացնելու համար խրախուսում են անհրաժեշտ ուսուցման, վերապատրաստման և այլ միջոցների ապահովումը՝ մյուսների հետ հավասար հիմունքներով:	

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Ըստ 2014 թվականի բյուջետային ծախսերի նկարագրության՝ հաշմանդամային սպորտում ներգրավված անձանց թիվը 300 է, իսկ հաշմանդամային սպորտին տրամադրվող գումարը 2011 թ.-ից չի փոփոխվել: Հաշմանդամային սպորտին տրամադրված գումարը կնպաստի հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը, նրանց կյանքի և առողջության բարելավմանը, պետության հեղինակության բարձացմանը երկրի տարածքում և սահմաններից դուրս:	
164.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	2014թ. պետական բյուջեի նախագծով «Արտադարձական դաստիարակություն հասարակական կազմակերպությունների կողմից» ծրագրով նախատեսված 635 մլն. 272 հազար 200 դրամը նվազեցնել 31 մլն. դրամով՝ հասցնելով 304 մլն. 272 հազար, 200 դրամի: Նվազեցված 31 մլն. դրամը ուղղել հաշմանդամային սպորտի զարգացմանը: Ըստ ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծի ծախսերի ծրագրային դասակարգման (հավելված 13) «Արտադարձական դաստիարակություն հասարակական կազմակերպությունների կողմից» ծրագրով գումարը տրամադրվելու է մարզական ՀԿ-ներին մարզիկներ պատրաստելու և միջոցառումներ անցկացնելու համար: Հաշվի առնելով այն փաստը, որ հաշմանդամային սպորտի զարգացմամբ և հաշմանդամություն ունեցող մարզիկների պատրաստմամբ զբաղվում են մարզա-	«Արտադարձական դաստիարակություն հասարակական կազմակերպությունների կողմից» ծրագրում ընդգրկված 4 հասարակական կազմակերպությունների կազմում գործում են 23 մարզադպրոցներ: Ընդհանուր առմամբ, մարզադպրոցներում ընդգրկված են 522 հաստիքներ, որոնցից 263-ը՝ մարզիչ-մանկավարժներ, իսկ 566 ուսումնամարզական խմբերում 5747 երեխաներ մարզվում են տարբեր սպորտաձևերով: Բյուջեով նախատեսված գումարն ամբողջությամբ ուղղված է հնարավորինս ապահովելու դպրոցների բնականոն գործունեությունը: Ուստի համարում ենք ոչ նպատակահարմար՝ ֆինանսական միջոցների կրճատումը:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		կան ՀԿ-ները՝ առաջարկում ենք, որ 31 մլն. դրամ գումարը տրամադրել 2014թ. պետական բյուջեի նախագծով հաշմանդամային սպորտին առնչվող ծառայությունների համար:	
165.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Կոնսերվացված պոչամբարների պահպանության համար հատկացնել անհարժեշտ ֆինանսական միջոցներ: Որոշ հանքավայրերի պոչամբարներ, շահագործումից հետո, տևական ժամանակ մատնվելով անուշադրության, վտանգ են ներկայացնում շրջակա միջավայրի համար՝ ունենալով բացասական ազդեցություն էկոհամակարգի վրա:	Կոնսերվացված պոչամբարները գտնվում են տնտեսվարող սուբյեկտների տնօրինության տակ, իսկ պոչամբարների անվտանգությանը վերաբերվող հարցերը իրավական տեսասկզբից կարգավորվում են «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 1998թ. նոյեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության արդյունաբերական օբյեկտի անվտանգության վկայագրի կանոնադրությունը հաստատելու մասին» N702 որոշումով սահմանված դրույթներով: Միաժամանակ հարկ է նշել, որ ներկայումս Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությանը հանձնված պոչամբարներ չկան:
166.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Հայաստանի Հանրապետության հյուսիսային և հարավային անցակետերին մոտ գտնվող բնակավայրերում գործող գյուղատնտեսական մթերքների շուկաներն ազատել հարկերից: Նշված քայլով հնարավորություն կստեղծվի սահմանին մոտ ապրող մեր հայրենակիցների համար առավել դյուրին պայմաններում վաճառել իրենց գյուղմթերքը:	Գործող օրենսդրությամբ գյուղատնտեսական գործունեության մասով արդեն իսկ սահմանված է հարկային ու մաքսային արտոնությունների այնպիսի լայն շրջանակ, որը գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող անձանց համար ստեղծում է հարկման անհամեմատ ավելի լավ պայմաններ, քան տնտեսության ցանկացած այլ ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների հարկման պայմաններն են: Մասնավորապես՝ 1) «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն, հարկվող օբյեկտի որոշման ժամանակ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղված հարկ վճարողի համախառն եկամուտը օրենքով սահմանված կարգով նվազեցվում է գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի չափով, ինչպես նաև այլ գործունեությունից ստացված եկամտի չափով, եթե վերջինիս տեսակարար կշիռը գյուղատնտեսական և այլ գործունեությունից ստացված եկամուտների հանրագումար-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			րում չի գերազանցում տասը տոկոսը, 2) «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն, շահութահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուները՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի, ինչպես նաև հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված և այլ եկամուտների մասով, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը, 3) «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, գյուղատնտեսական արտադրանք արտադրող տնտեսավարող սուբյեկտները ԱԱՀ վճարող են համարվում օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացման շրջանառությունը ավելացված արժեքի հարկի շեմը գերազանցելու պահից մինչև օրացուցային տարվա ավարտը, ինչը նշանակում է, որ գյուղատնտեսության ոլորտում գործող անգամ խոշոր տնտեսավարող սուբյեկտները, ի տարբերություն տնտեսության այլ ոլորտներում գործող տնտեսավարող սուբյեկտների, յուրաքանչյուր տարի օգտվում են ԱԱՀ-ի աննախադեպ բարձր չհարկվող շեմից, 4) բազմաթիվ արտոնություններ են սահմանված նաև մաքսային հարաբերություններ կարգավորող օրենսդրությամբ, որի ներքո տարբեր սերմացուներ, տնկիներ, պարարտանյութեր, թունաքիմիկատներ ու գյուղատնտեսական տեխնիկաներ ներմուծման ժամանակ ազատվում են մաքսատուրքի ու ԱԱՀ-ի վճարումից: Այս համատեքստում, սահմանային անցակետերին մոտ գտնվող գյուղատնտեսական մթերքների շուկաների կազմակերպման

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			մասով հարկային արտոնությունների տրամադրումը համարում ենք ոչ հիմնավոր:
167.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Արգաժոտնի մարզպետարանին հատկացնել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Արգաժոտնի մարզի Չքնաղ համայնքից մինչև Ձորագլուխ համայնք 2.5 կմ երկարությամբ միջհամայնքային ճանապարհի հիմնանորոգման համար: 2009թ. ՀՀ կառավարությունը խոստացել է հիմնանորոգել նշված ճանապարհահատվածը, սակայն մինչ օրս ճանապարհը չի նորոգվել:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
168.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Թևան Պողոսյան	«Հայաստանի Հանրապետության 2014 թ. Պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի հոդված 9-ի 15-րդ կետում «մինչև 1929 թվականի» բառերը փոխարինել «մինչև 1934 թվականի» բառերով: «Հայաստանի Հանրապետության 2014թ. Պետական բյուջեի մասին» օրենքի հոդված 9-ի 15-րդ կետով սահմանվում է «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցումը տրամադրել "0"-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքների՝ մինչև 1929 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված, անդամներին և ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակից	Առաջարկությունը չի ընդունվել: «Հայաստանի Հանրապետության 2014 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված տարիքային խմբերին և ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակից անձանց ավանդի փոխհատուցման գումարները վճարելուց հետո նախատեսվում է, որ ծրագիրը կունենա շարունակական ընթացք, որը նաև սահմանված է ՀՀ կառավարության 16.05.2013 թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 515-Ա որոշմամբ հաստատված ծրագրով և ՀՀ Ազգային ժողովի կողմից 23.05.2013 թ. հավանության է արժանացել:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		անձանց:Քանի որ հանրապետությունում 85 տարեկանից բարձր և միաժամանակ սոցիալապես անապահով անձանց թիվը շատ քիչ է, ապա ավելի նպատակահարմար և մարդկային տեսանկյունից ավելի ճիշտ է սահմանված տարիքային շեմը իջեցնել 85-ից 80-ի: Սա ավելի հումանիտար մոտեցում է տարեց, սոցիալապես անապահով անձանց նկատմամբ՝ թույլատրելով կյանքի մայրամուտում ստանալ տարիներ շարունակ սովետական բանկերում ավանդադրված գումարների դիմաց ստանալ որոշակի սոցիալական փոխհատուցում:	
169.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Թևան Պողոսյան	ՀՀ Ազգային ժողովին հատկացվող գումարը ավելացնել 45 մլն 850 հազար դրամով: Քանի որ 2014 թվականի հունիսի 1-ից ավելանալու է գրեթե բոլոր ոլորտների աշխատավարձերը, իսկ պատգամավորների օգնականների աշխատավարձերի ավելացում նախագծով չի նախատեսվել, ապա սոցիալական հավասարության սկզբունքից ելնելով առաջարկում ենք վերոնշյալ գումարով վերականգնել սոցիալական արդարությունը:	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2014 թ. պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների օգնականների աշխատանքի վարձատրության համար լրացուցիչ նախատեսվել է 56.3 մլն դրամ: Խնդրի կարգավորման նպատակով համապատասխան լրացում է կատարվել «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հավելվածում (սահմանվել է պաշտոնային դրույքաչափի հաշվարկման 3.0 գործակից): Միաժամանակ, ՀՀ ԱԺ պատգամավորի օգնականի պաշտոնը որպես հայեցողական պաշտոն սահմանելու կապակցությամբ համապատասխան լրացում է կատարվել նաև փաթեթում ընդգրկված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծում:
170.	ՀՀ Ազգային ժողովի	ՀՀ առողջապահության նախարարության	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2014 թվականի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	«Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Թևան Պողոսյան	«Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրին հատ- կացված գումարը ավելացնել 500 մլն դրամով: Նշված ավելացման նպատակն է ապահովել Հայաստանում հանրային առողջապահական ծրագրերի վերարտադրողական բաղադրիչի գերակայություն:	պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
171.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Թևան Պողոսյան	ՀՀ առողջապահության նախարարության «Վերականգնողական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրին հատկացված գումարը ավելացնել 100 մլն դրամով: Նշված ավելացման նպատակն է ապահովել Հայաստանում հանրային առողջապահական ծրագրերի վերարտադրողական բաղադրիչի գերակայություն:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
172.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Թևան Պողոսյան	Սոցիալական պաշտպանության ծրագրով հատկացված գումարները ավելացնել 50 մլն դրամով: Սոցիալական պաշտպանության ծրագրով նա- խատեսված սոցիալական փաթեթից օգտվելու հնարավորություն տալ նաև գիտնականներին, այդ թվում նաև երիտասարդ գիտնականնե- րին:	Սոցիալական փաթեթից օգտվում են ՀՀ գիտությունների ազ- գային ակադեմիայի համակարգի և «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինս- տիտուտի բոլոր աշխատակիցները, այդ թվում նաև երիտասարդ գիտնականները: Բացի այդ ներկայումս շրջանառության մեջ է ՀՀ կառավարու- թյան որոշման նախագիծ՝ որով նախատեսվում է շահառուների շրջանակում ընդգրկել նաև գիտությամբ զբաղվող և պետության կողմից հիմնադրված գիտական հիմնադրամների աշխատող- ներին: Ինչ վերաբերում է այլ գիտական կազմակերպությունների գիտ- նականներին՝ սոցիալական փաթեթի տրամադրմանը, ապա հարցը կքննարկվի ՀՀ 2015-2017թթ. ՄԺԾՇ շրջանակներում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
173.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Թևան Պողոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությանը հատկացնել 100 մլն դրամ հիպոթեքով բնակարան ստացող բազմազավակ ընտանիքներին աջակցելու նպատակով: Այս ծրագրի իրականացման շնորհիվ պետությունը կաջակցի սոցիալապես անապահով բազմազավակ ընտանիքներին բնակարանով ապահովվելու հարցում՝ տրամադրելով որոշակի արտոնություն:	Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 28.09.2013 թ. նիստի N 39 արձանագրային որոշումը, որի հավելվածով սահմանվել է երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան համար ընտանիքներին պետական աջակցության տրամադրման ծրագիրը, որի նպատակներից մեկն էլ բազմազավակ ընտանիքների կյանքի պայմանների բարելավումն է: Այս ծրագրի համաձայն, 2014 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ընտանիքում ծնված երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար տրամադրվող երեխայի ծննդյան միանվագ նպաստի մի մասը ծնողներին/ընտանիքին վճարվում է երեխայի ծննդից հետո, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, իսկ մյուս մասով ձևավորվում է ընտանեկան դրամագլուխ (կապիտալ): Մասնավորապես՝ երրորդ և չորրորդ երեխայի ծննդյան դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանվել է 1 մլն դրամ, որից 500 հազ. դրամը վճարվող գումարի չափն է, իսկ մնացած 500 հազ. դրամը՝ ընտանեկան դրամագլխի չափը: Հինգերորդ և հաջորդ երեխաների ծննդյան դեպքում՝ միանվագ նպաստի չափը սահմանվել է 1.5 մլն դրամ, որից 500 հազ. դրամը վճարվող գումարի չափն է, իսկ 1.0 մլն դրամը՝ ընտանեկան դրամագլխի չափը: Ընդ որում ընտանեկան դրամագլուխը, մինչև երեխայի չափահաս դառնալը, պետական աջակցության տնօրինողի կողմից կարող է օգտագործվել նաև ընտանիքի (կամ այդ ընտանիքի անդամի) համար նոր բնակարանի գնման, կառուցման համար կամ բնակարանի ձեռք բերման նպատակով տրամադրված և հիպոթեքով ապահովված վարկի տոկոսադրույքների և մայր գումարի մարման համար: Նկատի ունենալով, որ բարձրացված հարցը ենթադրում է լրա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			ցուցիչ 100 մլն դրամի չափով հատկացում հիպոթեքով բնակարան ստացող բազմազավակ ընտանիքներին աջակցելու նպատակով, ապա այն նախատեսել հնարավոր չէ, ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
174.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Թևան Պողոսյան	Գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի գումարները կրճատել 500 մլն դրամով: Հաշվի առնելով առողջապահական վերականգնողական ծրագրերի առավել հրատապությունը, նպատակահարմար ենք գտնում «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի գումարների խնայողությունը ուղղել «Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի իրականացմանը:	Հանրապետությունում անասնահամաճարակային կայուն իրավիճակ ստեղծելու և պահպանելու նպատակով յուրաքանչյուր տարի իրականացվում է կենդանիների վարակիչ հիվանդությունների, այդ թվում նաև կենդանիների և մարդու համար ընդհանուր հիվանդությունների կանխարգելմանն ուղղված պարտադիր հակաանասնահամաճարակային կանխարգելիչ միջոցառումներ առավել վտանգավոր շուրջ 11 հիվանդությունների նկատմամբ: Կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների նկատմամբ կանխարգելիչ միջոցառումների չիրականացման դեպքում հանրապետությունում կարճաժամկետ կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների բռնկումներ: Պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցները բավարարում են միայն առավել վտանգավոր հիվանդությունների կանխարգելմանը, իսկ միջոցառումներում ընդգրկվում է այն նվազագույն գլխաքանակը, որը թույլ է տալիս շրջանցել հիվանդությունների բռնկումները: Հետևաբար ներկայացված առաջարկությունը չի ընդունվել:
175.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Թևան Պողոսյան	ՀՀ կառավարության «Աջակցություն արտասահմանում սովորող ուսանողներին» ծրագրին հատկացնել ևս 50 մլն դրամ: Աջակցելով արտասահմանի առաջավոր ԲՈՒՀ-եր ընդունված ուսանողներին՝ հնարա-	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		վորություն կրնձեռվի հանրապետությունը համալրել գրագետ և բանիմաց կադրերով:	
176.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Թևան Պողոսյան	Լրացուցիչ գումար հատկացնել ՀՀ կրթության և գիտության նախարարության «Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրի գումարները՝ ավելացնելով անվճար համակրգում սովորող յուրաքանչյուր ուսանողի ամսական կրթաթոշակի չափը 5000 դրամով: Հաշվի առնելով հունիսի 1-ից աշխատավարձերի բարձրացումները և առաջիկա հնարավոր թանկացումները կազդեն հասարակության սոցիալական վիճակի վրա, նպատակահարմար ենք գտնում անվճար համակարգում սովորող յուրաքանչյուր ուսանողի կրթաթոշակը ավելացնել 5000 դրամով: Սա իր հերթին կնպաստի կրթության արդյունավետության բարձրացմանը:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
177.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Թևան Պողոսյան	Արարատի մարզի Արմաշ համայնքին հատկացնել 2 մլն դրամ: Նշված գումարը անհրաժեշտ է Արմաշ գյուղի միջնակարգ դպրոցի 3-րդ մասնաշենքի ներքին հարդարման աշխատանքների համար, որը կնպաստի Արմաշ համայնքի բնակիչների կրթության անհրաժեշտ պայմանների բարելավմանը:	ՀՀ Արարատի մարզի Արմաշ համայնքի դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում: Դպրոցի հիմնանորոգման աշխատանքներն ավարտվել են 2009թ-ին, որի նպատակով ՀՀ 2006-2009թթ պետական բյուջեներից հատկացվել է ընդամենը 252.4 մլն դրամ:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
178.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Թևան Պողոսյան	Արարատի մարզի Արմաշ համայնքին հատկացնել 1 մլն դրամ: Նշված գումարը անհրաժեշտ է Արմաշ գյուղի միջնակարգ դպրոցի բակի ցանկապատի վերանորոգման կամ նոր ցանկապատի տեղադրման համար՝ կրթության անհրաժեշտ պայմանների բավարարման, ինչպես նաև՝ դպրոցի սեփականություն հանդիսացող գույքի պաշտպանության նպատակով:	ՀՀ Արարատի մարզի Արմաշ համայնքի դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում: Դպրոցի հիմնանորոգման աշխատանքներն ավարտվել են 2009թ-ին, որի նպատակով ՀՀ 2006-2009թթ պետական բյուջեներից հատկացվել է ընդամենը 252.4 մլն դրամ:
179.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Թևան Պողոսյան	Արարատի մարզի Արմաշ համայնքին հատկացնել 2 մլն դրամ: Արմաշ գյուղի միջնակարգ դպրոցի կոյուղու հիմնանորոգման աշխատանքների համար՝ կրթության անհրաժեշտ պայմանների բավարարման նպատակով:	ՀՀ Արարատի մարզի Արմաշ համայնքի դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում: Դպրոցի հիմնանորոգման աշխատանքներն ավարտվել են 2009թ-ին, որի նպատակով ՀՀ 2006-2009թթ պետական բյուջեներից հատկացվել է ընդամենը 252.4 մլն դրամ:
180.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Նախատեսել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ Ազգային ժողովի պատգամավորական խմբակցությունների փորձագետների ու գործավարների և պատգամավորների օգնականների պաշտոնային դրույքաչափերը բարձրացնելու համար:	Առաջարկությունն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների օգնականների և պատգամավորական խմբակցությունների փորձագետների մասով: ՀՀ 2014 թ. պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում նրանց աշխատանքի վարձատրության համար լրացուցիչ նախատեսվել է 77.8 մլն դրամ, այդ թվում՝ օգնականների համար՝ 56.3 մլն դրամ և պատգամավորական խմբակցությունների փորձագետների համար՝ 21.5 մլն դրամ: Խնդրի կարգավորման նպատակով համապատասխան լրացում է կատարվել «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հավելվածում (սահմանվել է պաշտոնային դրույքաչափի հաշ-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			վարկման գործակից՝ պատգամավորական խմբակցության փորձագետի համար 4.5, օգնականների համար՝ 3.0): Միաժամանակ, ՀՀ ԱԺ պատգամավորի օգնականի և պաշտոնները որպես հայեցողական պաշտոն սահմանելու կապակցությամբ համապատասխան լրացում է կատարվել նաև փաթեթում ընդգրկված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծում: Ինչ վերաբերում է գործավարների պաշտոնային դրույքաչափերը բարձրացնելու հարցին, ապա համաձայն ՀՀ ԱԺ քննարկմանն ներկայացված և 1-ին ընթերցմամբ ընդունված «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում քաղաքացիական աշխատանք կատարող եւ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ամսական աշխատավարձի ֆոնդը հաշվարկվում է բազային աշխատավարձի կրկնապատիկի եւ այդ աշխատողների թվաքանակի արտադրյալով (համապատասխան միջոցները նախատեսված են ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծում): Նույն հոդվածի 3-րդ կետով սահմանվում է, որ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում քաղաքացիական աշխատանք կատարող եւ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանում է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը:
181.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 1.134,4 մլրդ. դրամի ընդհանուր եկամուտներ: Առաջարկում ենք նախատեսված եկամուտները ավելացնել 29,0 մլրդ. դրամով և սահմանել 1.163,4 մլրդ.	Առաջարկությունը չի ընդունվել: 1. Եկամտային հարկի փաստացի դրույքաչափը (17.29%) ստացվել է եկամտային հարկի գծով փաստացի մուտքերը հարաբերելով Ազգային հաշիվների համակարգի համաձայն հաշվարկված եկամտային հարկի փաստացի բազային, իսկ վերջինը ներառում

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		դրամ: 1. Եկամտային հարկի գծով նախատեսված եկամուտներն ավելացնել 50,0 մլրդ. դրամով և սահմանել 337,0 մլրդ դրամ: Եկամտային հարկի գծով 2014 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 287,0 մլրդ դրամի չափով, որը ստացվել է ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծի ուղերձում նշված մեթոդիկայով հաշվարկված աշխատավարձի գծով եկամտային հարկի փաստացի՝ 1.576,0 մլրդ. դրամ բազայի նկատմամբ ընթացիկ տարվա փաստացի դրույքաչափի՝ 17.29% կիրառման արդյունքում ստացված 272,5 մլրդ. դրամի և եկամտի այլ աղբյուրներից վճարման ենթակա 14,5 մլրդ. դրամի հանրագումարից: Անհասկանալի է աշխատավարձի գծով եկամտային հարկի փաստացի՝ 1.576,0 մլրդ. դրամ բազայի նկատմամբ ընթացիկ տարվա փաստացի դրույքաչափի՝ 17.29% կիրառումը, քանի որ գտնում ենք, որ նշված բազայի նկատմամբ անհրաժեշտ է կիրառել ոչ թե փաստացի դրույքաչափը, այլ առնվազն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազագույն դրույքաչափը: Արդյունքում՝ 2014 թվականին միայն աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների եկամտային հարկի գծով հավաքագրվելիք եկամուտների գումարը կարող է կազմել շուրջ 384.5,0 մլրդ. դրամ $(1.576,0 * 24,4\%)$:	է նաև եկամտի այնպիսի տեսակներ (մասնավորապես՝ ոչ ֆորմալ հատվածի եկամուտները, գյուղատնտեսության ոլորտում ստեղծված եկամուտները, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված նվազեցվող եկամուտները և այլն), որոնք «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով ենթակա չեն հարկման: Նկատենք, որ այս ցուցանիշների մասով վիճակագրություն չի վարվում և հետևաբար դրանք գնահատել հնարավոր չէ: 2. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թվականի հունվար-սեպտեմբեր» զեկույցի ըստ տնտեսական գործունեության տեսակների զբաղվածների թվի և միջին ամսական աշխատավարձերի տվյալների հիման վրա հաշվարկված 323.4 մլրդ դրամ եկամտային հարկը իրատեսական չէ, քանի որ հաշվարկներում նվազեցումներ կատարվել են գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների թվաքանակով, անտեսելով տնտեսության մյուս ճյուղերում ոչ ֆորմալ զբաղվածների թվաքանակը (2012 թվականի համար 1.173 մլն զբաղվածների եկամտային հարկ վճարողներ են հանդիսացել միայն 509 հազարը):

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Մյուս կողմից հաշվի առնելով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված «Հայաստանի Հանրապետության սոցիալ- տնտեսական վիճակը 2013թ. հունվար սեպտեմբերին» զեկույցում նշված ըստ տնտեսական գործունեության տեսակների զբաղվածների թիվը և միջին ամսական աշխատավարձի չափերը և կիրառելով «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույքաչափերը ստացվում է, որ 2014 թվականին միայն աշխատավարձից վճարման ենթակա եկամտային հարկը կկազմի 323.4 մլրդ. դրամ (հաշվարկը կցվում է) և եկամտի այլ աղբյուրներից վճարման ենթակա 14,5 մլրդ. դրամի հետ միասին եկամտային հարկի ընդհանուր գումարը կկազմի 337,9 մլրդ. դրամ: Համադրելով վերոհիշյալ մեթոդիկաները և հաշվի չառնելով անգամ կանխատեսվող տնտեսական աճը և միջին ամսական աշխատավարձերի աճը՝ առաջարկվում է եկամտային հարկի գծով եկամուտներն ավելացնել 50,0 մլրդ. դրամով:	
182.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	2. Արտոնագրային վճարների և շրջանառության հարկի գծով նախատեսված 21,0 մլրդ. դրամ եկամուտներն ամբողջությամբ նվազեցնել: Նկատի ունենալով ՓՄՁ-ների կարևոր նշանակությունը երկրի կյանքում և նպատակ ունենալով աջակցել դրանց կայացմանն ու	Շրջանառության հարկի և արտոնագրային վճարների համակարգերը, որպես այլընտրանքային համակարգեր, ներդրվել են հենց փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին օժանդակելու համար, քանի որ հարկման այս համակարգերի կիրառությունը ենթադրում է ինչպես համեմատաբար ավելի ցածր հարկային բեռ, այնպես էլ ավելի պարզ հարկային վարչարարություն ու հարկային հաշվառում: Այս առումով շրջանառու-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		զարգացմանը, ինչպես նաև հաշվի առնելով, որ նշված եկամտի տեսակները վճարում են ՓՄՁ-ները և դրանց գծով կանխատեսվող եկամուտները կազմում են ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ընդհանուր եկամուտների 1.8 տոկոսը առաջարկում ենք այն ամբողջությամբ նվազեցնել և «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծին կից ներկայացնել համապատասխան օրենքներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենսդրական նախաձեռնություններ:	թյան հարկի ու արտոնագրային վճարների համակարգերի կիրառությունը ՓՄՁ սուբյեկտներին հնարավորություն է ընձեռում գործունեություն իրականացնել ավելի նպաստավոր միջավայրում: Ինչ վերաբերում է հարկման այս համակարգերում գործող տնտեսավարող սուբյեկտներին բոլոր հարկերից ազատելու առաջարկությունը, ապա այն համարում ենք ոչ նպատակահարմար՝ հետևյալ նկատառումներով. 1) առաջարկության ընդունումը հարկային վարչարարության տեսանկյունից անկառավարելի ռիսկեր կարող է ստեղծել, քանի որ խոշոր տնտեսավարող սուբյեկտները կփորձեն մասնատվել և օգտվել հարկերից ազատման արտոնությունից, 2) առաջարկության ընդունումը կնշանակի գործունեության միևնույն տեսակով զբաղվող (միևնույն ապրանքն արտադրող, ծառայությունը մատուցող, աշխատանքը կատարող) տնտեսավարող սուբյեկտների համար ձևավորել գործունեության ու մրցակցության խիստ անհավասար պայմաններ, 3) առաջարկության ընդունումը միջին ու խոշոր տնտեսավարող սուբյեկտների շրջանում նույնպես կստեղծի նմանատիպ կամ թեկուզ ավելի փոքր ծավալով հարկային արտոնություններից օգտվելու սպասումներ, ինչի արդյունքում կնվազի երկրում հարկային կարգապահության ընդհանուր մակարդակը՝ բոլոր հնարավոր բացասական հետևանքներով, 4) առաջարկության ընդունումը ենթադրում է զգալի չափով պետական բյուջեի հարկային եկամուտների կորուստ, ինչը նշանակում է, որ տարեկան կտրվածքով այդ չափով պակաս ծախսեր են կատարվելու, օրինակ, առողջապահության, կրթության կամ սոցիալական պաշտպանության ծրագրերի շրջանակներում:
183.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորա-	ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 1.244,9 մլրդ. դրա-	Նշված ծրագրի համար 2014 թվականին 2013 թվականի համեմատ նախատեսվել է 100.0 մլն դրամով ավելի գումար: Ծրագիրն

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	կան խմբակցություն	մի ընդհանուր ծախսեր: Առաջարկում ենք նախատեսված ծախսերն ավելացնել 29,0 մլրդ. դրամով և սահմանել 1.273,9 մլրդ. դրամ: Միաժամանակ առաջարկում ենք ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծի ծախսային մասում ավելացնել ներքոհիշյալ միջոցառումները. 1. Արտահանմանն ուղղված արդյունաբերության զարգացման աջակցության համար – 2,0 մլրդ. դրամ:	իրականացվում է Արդյունաբերության զարգացման հիմնադրամի կողմից, որը դեռևս 1 տարվա պատմություն չունի: Հիմք ընդունելով արդյունաբերության զարգացման ռազմավարությունը հիմնադրամի կողմից կնախանշվեն արդյունաբերությունը խթանելու նոր գործիքներ և դրանց համապատասխան արտահանմանն ուղղված արդյունաբերության զարգացման աջակցության համար պետական բյուջեում նախատեսվող գումարները տարեցտարի կավելացվեն:
184.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը՝ տարաբնակեցման հայեցակարգի մշակման և գործադրման հարցում աջակցություն ցուցաբերելու համար – 10,0 մլրդ. դրամ:	Հայաստանի Հանրապետության կողմից ԼՂՀ-ին միջպետական վարկի միջոցների տրամադրումն ուղղակիորեն չի փոխկապակցված առանձին ուղղություններով ծախսերի կատարման պայմանի հետ և նշված վարկի միջոցների օգտագործմանն ուղղությունների որոշման իրավասությունը պատկանում է բացառապես ԼՂՀ իշխանություններին: Ուստի, ԼՂՀ տարաբնակեցման հայեցակարգի մշակման և գործադրման համար անհրաժեշտ միջոցների չափը ԼՂՀ իշխանությունները ըստ անհրաժեշտության կորոշեն այդ վարկի գումարի շրջանակներում՝ ինքնուրույն: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծում ԼՂՀ-ին հատկացվող միջպետական վարկի գծով նախատեսված գումարը 2013 թվականի մակարդակի համեմատությամբ ավելացվել է շուրջ 4.4 մլրդ. դրամով:
185.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	3. Գյուղացիական տնտեսություններին վարելահողերի նպատակային նշանակության օգտագործման, պարարատանյութերի,	Յորենի սերմացուի ձեռքբերման և գյուղացիական տնտեսություններին տրամադրման նպատակով «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին» ծրագրով

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		վառելանյութի և սերմացուի ձեռք բերման նպատակով պետական աջակցության համար - 4,0 մլրդ. դրամ:	նախատեսվել է 550 մլն դրամ: Ինչ վերաբերում է պետական աջակցության այլ ձևերին (պարա-րատանյութերի, վառելանյութի և այլ սերմացուների համար), ապա ինչպես ցույց է տալիս վերջին տարիների փորձը, կոնկրետ գյուղատնտեսական սեզոնի առանձնահատկություններից, կառավարությունը այդ հարցը քննարկում և լուծում է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացում կատարելու ճանապարհով:
186.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	4. Գիտության թեմատիկ ծրագրերի թիվը ավելացնելու և միջին աշխատավարձը բարձրացնելու նպատակով – 1,3 մլրդ. դրամ:	Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման ծրագրով նախատեսված հատկացումները 2014թ. կազմելու են 1515690.5 հազ. դրամ, որի շրջանակներում ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվելու են ընդհանուր առմամբ 328 հետազոտական (թիմային) և անհատական աջակցության ծրագրեր: Դրանք են՝ թեմատիկ հետազոտությունների 159, երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության 31 (դրանցից մեկը ֆինանսավորվում է երիտասարդական հիմնադրամի կողմից), կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված 17, Արցախի հետ համագործակցության 6, բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների խրախուսման 96 և ասպիրանտների ու մինչև 35 տարեկան հայցորդների անհատական աջակցության 20 ծրագրեր: Ընդ որում, թեմատիկ ծրագրերի ֆինանսավորման առավելագույն ծավալը կազմում է 16000 հազ. դրամ: Թեմաներում ընդգրկված գիտաշխատողների միջին հաշվարկային աշխատավարձը 2013-2014թթ. կազմում է 100 հազար դրամ: Թեմաների թվաքանակի ավելացումը չի կարող լինել ինքնանպատակ, այն պետք է պայմանավորված լինի բազային ֆինանսավորման հետ չհամընկնող նախագծերի առակայությամբ: Ապագայում նախատեսվում է ավելացնել դրանց քանակը՝ բազային ծրագրերով լուծվող խնդիրները կամ թեմա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			ները չկրկնող համապատասխան նախագծերի առկայության դեպքում:
187.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	5. Ոչ մետաղական հանքանյութերի մշակման ոլորտի ինովացիոն ծրագրերի մշակում, արտադրական և իրացման ցանցերի ստեղծման նպատակով – 0,5 մլրդ. դրամ:	ՀՀ կառավարության 10.10.2013թ. 42-րդ արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտի զարգացման հայեցակարգը», ըստ որի ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ հաստատված ժամանակացույցին համապատասխան պետք է մշակեն ոչ մետաղական հանքանյութերի մշակման ոլորտի անհրաժեշտ միջոցառումները:
188.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	6. Սահմանամերձ տարածաշրջաններում ենթակառուցվածքների զարգացման համար – 8,0 մլրդ. դրամ:	Սահմանամերձ տարածաշրջանների ենթակառուցվածքների զարգացման խնդիրը միշտ գտնվում է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում և այս ուղղությամբ իրականացվում են զգալի աշխատանքներ (այդ թվում՝ արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի շրջանակներում):
189.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	7. ՀՀ Տավուշի մարզի Դիտավան համայնքի 3,2 կմ երկարությամբ կենտրոնական ճանապարհի ասֆալտապատման և ջրահեռացման աշխատանքների կատարման համար – 180,0 մլն. դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
190.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	8. ՀՀ Տավուշի մարզի Բաղանիս համայնքի 2,6 կմ երկարությամբ ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքների համար – 25,0 մլն. դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
191.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	9. «Աղբյուր», «Կանչ» մանկապատանեկան և «Ծիծեռնակ» մանկական պարբերականներից յուրաքանչյուրին հատկացվող գումարները 0,7 մլն. դրամով ավելացնելու նպատակով – 2,1 մլն. դրամ:	«Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին » ՀՀ օրենքի նախագծով «Աղբյուր», «Կանչ» մանկապատանեկան և «Ծիծեռնակ» մանկական պարբերականներին հատկացումները նախատեսվել են սուբսիդիայի տեսքով, որը ըստ հաշվարկների կազմել է համապատասխանաբար՝ 9.7, 15.5 և 9.8 մլն դրամ և լրացուցիչ միջոցների հատկացման

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			անհրաժեշտություն չկա:
192.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	10. ՀՀ Արագածոտնի մարզի Թալին-Կարմրաշեն-Ոսկեթաս-Զովասար-Գառնահովիտ ավտոճանապարհի վերանորոգման համար (մոտ 8-9 կմ)-500 մլն. դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
193.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	11. ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյանի տարածաշրջանի գյուղերի (Շենիկ, Լեռնագոգ, Դալարիկ, Արգինա, Բաղրամյան, Երվանդաշատ, Կողբավան, Հուշակերտ, Միասնկյան, Վանանդ, Տավլորիկ, Արտամետ, Արևադաշտ, Բագարան) մշակույթի տների կապիտալ վերանորոգում:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Արմավիրի մարզի նշված համայնքների մշակույթի տների հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:
194.	ՀՀ Ազգային ժողովի «Հայ Ազգային Կոնգրես» խմբակցություն ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Օրինագծի հոդված 9-ը լրացնել նոր՝ 20)-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. 20) 2014 թվականի հունվարի 1-ից ա. առնվազն 4 տարի Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի և (կամ) Ազգային ժողովի պատգավոր հանդիսացած անձի տարիքային աշխատանքային կենսաթոշակի (հավելումներով) նկատմամբ սահմանվում է ամենամսյա հավելում՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի համար օրենքով սահմանված աշխատավարձի պաշտոնային դրույքաչափի 60 տոկոսի և կենսաթոշակի (հավելումներով)	Ներկայումս շրջանառվում է «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է կարգավորել նաև ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավորի և ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի պաշտոն զբաղեցրած անձանց կենսաթոշակային ապահովությանն առնչվող հարաբերությունները: Ուստի, բարձրացված հարցի կարգավորումը «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով գտնում ենք ոչ նպատակահարմար:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		տարբերության չափով, բ. ամենամսյա հավելումը վերահաշվարկվում է կենսաթոշակի (հավելումներով) չափը վերահաշվարկելու կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի համար օրենքով սահմանված աշխատավարձի պաշտոնային դրույքաչափը փոխվելու դեպքում, գ. ամենամսյա հավելում ստանալու իրավունքը դադարում է անձի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր ընտրվելու դեպքում և վերականգնվում է նրա պատգամավորական լիազորությունները դադարելու օրվանից, դ. ամենամսյա հավելումը չի նշանակվում, եթե անձի պատգամավորական լիազորությունները դադարել են Հայաստանի Հանրապետության սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասի պայմանները խախտելու, մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից նրա բացակայելը անհարգելի համարվելու կամ նրան ազատազրկման դատապարկվելու դեպքերում, ե. ամենամսյա հավելումը նշանակվում է դրա իրավունքն ունեցող անձի դիմումի հիման վրա: Ամենամսյա հավելումը հաշվարկելու (վերահաշվարկելու), նշանակելու, վճարելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:՝	

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Ինչպես վկայում է միջազգային փորձը օրենսդիր մարմնի ներկայացուցչի սոցիալական պաշտպանության կարևորագույն ուղղություններից մեկը, ի հավելումն բժշկական պետական ապահովագրության և այլ երաշխիքների, նախատեսում է օրենսդիր մարմնի անդամի վարձատրության 60-80 տոկոսի չափով աշխատանքային կենսաթոշակի վճարում: Առանձին դեպքերում կենսաթոշակի չափը անցում է նաև 80 տոկոսը: Ներկայացվող առաջարկությունը վերաբերում է ՀՀ անկախությունը ձեռք բերելուց հետո օրենսդիր մարմնի պատգամավորներին, ովքեր առնվազն 4 տարի հանդիսացել են օրենսդիր մարմնի անդամ: Նկատի առնելով, որ տարիքային տեսանկյունից այն վերաբերում է մինչև 1974 թվականի հունվարի մեկը ծնված և 63 տարեկանից բարձր անձանց, առաջարկվող մոտեցմամբ կենսաթոշակային հավելում ստացողների թիվը մեծ չէ (առավելագույնը 700 անձ) և այն կունենա նվազող միտում: Կատարված ուսումնասիրության շրջանակներում 2014 թվականին այն կարող է վերաբերել առավելագույնը 100 անձի: Ընդհանուր բյուջե-տային ծախսը 2014 թվականի համար կկազմի մոտ 278 մլն դրամ, որից 38 միլիոնը մինչև 2014 թվականի հուլիս ամիսը, իսկ 240 մլն դրամը հուլիսից մինչև 2015 թվականի հունվարի մեկը:	

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
195.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հերմինե Նաղդալյան (048 ընտրատարածք)	Երևանի Մ. Իշխանի անվան թիվ 5 դպրոցի շենքը ներկայումս գտնվում է ծայրահեղ անբարեկարգ վիճակում, քանի որ շենքը կառուցվել է 1937թ-ին և հիմնանորոգման երբեք չի ենթարկվել: Ամբողջովին քայքայված վիճակում են շենքի տանիքը, հատակը, պատուհանները, դռներն ու միջնապատը՝ ինչը խոչընդոտում է ուսման բնականոն գործընթացին: Առաջնահերթ վերանորոգման կարիք ունեն դռներն ու պատուհանները, որոնց գոնե մասնակի լուծման համար կպահանջվի մոտ 15 մլն. դրամ: Խնդրում ենք հարցը, հնարավորության սահմաններում, ներառել 2014 թվականի բյուջեի նախագծի ծախսային հատվածում:	Երևանի Մ. Իշխանի անվան թիվ 5 դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման II փուլի աշխատանքների ցանկում: Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2015-2017 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:
196.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հերմինե Նաղդալյան (048 ընտրատարածք)	Սիսիանի տարածաշրջանի բնակչության առողջապահական սպասարկման խնդիրն այսօր բավական լուրջ մտահոգություններ է հարուցում: Գործող միակ հիվանդանոցը քայքայված վիճակում է: Շենքը բացարձակապես չի համապատասխանում սանիտարահիգիենիկ տարրական պայմաններին և բուժ-պասարկման ներկա ծառայությունների որակի պահանջներին: Անհրաժեշտ է լուծում տալ բնակչության որակյալ բուժսպասարկում ապահովելու խնդրին, որի տարբերակներից մեկը կարող է լինել շրջանում գործող զինվորական հոսպիտալին միավորելը՝ միաժամա-	ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի բնակչության բժշկական օգնության և սպասարկման խնդիրները գտնվում են ՀՀ առողջապահության նախարարի և ՀՀ Սյունիքի մարզպետի ուշադրության կենտրոնում: Սիսիանի հիվանդանոցի և Սիսիանի զինվորական հոսպիտալի միավորման հարցի կապակցությամբ արդեն իսկ սկսվել են ուսումնասիրությունները և քննարկումները, որի արդյունքում հարցը կստանա համապատասխան լուծում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		նակ տրամադրելով որոշ ֆինանսական միջոցներ՝ մինչև 50 մլն. դրամի չափով՝ կարգավորելու համար առաջնային բուժսպասարկման խնդիրները:	
197.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հերմինե Նաղդալյան (048 ընտրատարածք)	«Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկվում է. - 10-րդ հոդվածի 8-րդ կետում «օգտագործման վճարների» բառերը փոխարինել «օգտագործման պարտադիր վճարների» բառերով	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում կատարվել են առաջարկվող փոփոխությունները:
198.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հերմինե Նաղդալյան (048 ընտրատարածք)	«Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկվում է. - հավելված թիվ 7-ի աղյուսակ 2-ի վերնագրում «օգտագործման» բառից հետո լրացնել «պարտադիր» բառը	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում կատարվել են առաջարկվող փոփոխությունները:
199.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (024 ընտրատարածք)	ՀՀ 2014 թ. պետական բյուջեի նախագծում նախատեսել 20 մլն դրամ՝ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման նախագծանախա-հաշվային փաստաթղթերը կազմելու համար: Հիմնանորոգման համար ծախսերը նախատեսված են ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾԾ – ում:	ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու թիվ 2 դպրոցի (ներկայիս ավագ դպրոցի) հիմնանորոգման աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման I փուլի աշխատանքների ցանկում: Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2015-2017 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
200.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (024 ընտրատարածք)	ՀՀ 2014 թ. պետական բյուջեի նախագծում նախատեսել 20 մլն դրամ՝ Գեղարքունիքի մարզի Զոլաքար համայնքի թիվ 2 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելու համար: Հիմնանորոգման համար ծախսերը նախատեսված են ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾԾ-ում:	ՀՀ Գեղարքունիքի մարզի Զոլաքար համայնքի թիվ 2 դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման I փուլի աշխատանքների ցանկում: Մարզերի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման շրջանակներում ՀՀ կառավարության 03.02.2011թ-ի N108-Ն որոշմամբ դպրոցի հիմնանորոգման նպատակով ՀՀ 2011թ-ի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 23.8 մլն դրամ: Լրացուցիչ աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2015-2017 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:
201.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	1. Կառավարությունը 2014թ բյուջեին կից բացատրագրում չի տվել 2013թ աշնան դրությամբ ստեղծված տնտեսական իրավիճակի անաչառ, հստակ վերլուծություն: Այսպես, ինչպես ուղերձում, այնպես էլ վարչապետի ելույթում նշված են 2013թ կանխանշած մակրոտնտեսական թվերի թերակատարման այսպիսի պատճառներ. համաշխարհային տնտեսության աճի տեմպերի դանդաղեցում, էներգակիրների գների բարձրացում: Իրականությունն այն է, որ համաշխարհային տնտեսությունը 2013թ աճում է վերջին տասնամյակում գրանցված միջին տեմպերից ավելի արագ (3,3%), ԵՄ տնտեսությունը այս տարվա երրորդ եռամս-	ՀՀ տնտեսության վիճակը էապես կրում է հատկապես գործընկեր երկրների, այդ թվում ՌԴ և ԵՄ երկրների, տնտեսական զարգացումների ազդեցությունը: Ընդ որում Հայաստանի տնտեսության վրա ԵՄ ազդեցությունը երկակի է այն իմաստով, որ բացի ուղղակի ազդեցությունից, այն անուղղակիորեն ազդում է մեր տնտեսության վրա նաև ՌԴ միջոցով, քանի որ հանդիսանում է նաև վերջինիս կարևոր տնտեսական գործընկերը: Իսկ 2013 թվականին ՌԴ և ԵՄ տնտեսական աճի վերջին հնարավորինս թարմ կանխատեսումները Արժույթի միջազգային հիմնադրամի հոկտեմբերյան հրապարակման համաձայն հետևյալն են. • Եվրամիության երկրներում կանխատեսվում է 0,4% տնտեսական անկում (նախորդ կանխատեսման համեմատ գրեթե անփոփոխ մակարդակ)՝ անցյալ տարվա 0,6% անկման դիմաց: Իսկ փաստացի տնտեսական անկումը 2013 թվականի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		յակում անսպասելիորեն աճ գրանցեց, իսկ 2013թ Հայաստան ներկրված միավոր էներգա-կրի (ինչպես գազային, այնպես էլ հեղուկ վիճա-կում) գինն ավելի բարձր չէ, քան 2012թ: Խնդիրն այլ է. Կառավարության ապաշնորհ ներքին տնտեսական քաղաքականության պատճառով ոչ հեղուկ վառելիքի, ոչ էլ բնական գազի շուկաներում մրցակցություն չունենք: Առաջարկվում է ուղերձի համապատասխան հատվածը (տնտեսական իրավիճակի վերլու-ծությունը) հանել և փոխարինել ավելի պրոֆե-սիոնալ վերլուծությամբ:	առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն եռամսյակի նկատ-մամբ կազմել է 1.2%, երկրորդ եռամսյակում՝ 0.6%, Ռուսաստանի Դաշնությունում տնտեսական աճը կանխա-տեսվում է 1.5% (նախորդ կանխատեսման համեմատ վատացում 1 տոկոսային կետով)՝ անցյալ տարվա 3,4% աճի դիմաց: Նշենք նաև, որ նույն հրապարակման համաձայն 2013 թվականի համար կանխատեսվում է 2.9% տնտեսական աճ՝ նախորդ տար-վա 3.2%-ի դիմաց, ընդ որում նախորդ կանխատեսման համե-մատ աճի կանխատեսումները նվազեցվել են 0.3 տոկոսային կետով: Միաժամանակ, համաշխարհային տնտեսական աճի կանխատեսման ռիսկերը նվազման ուղղությամբ են: Ինչ վերաբերում է էներգակիրների գների բարձրացման ազդե-ցությանը, ապա նշենք, որ այն փոխանցվում է տնտեսական աճի տեմպերի դանդաղման վրա հիմնականում գնաճային միջավայ-րի խորացման միջոցով: Եվ այդ մասին նշված է նաև Վարչապե-տի ելույթում: Իսկ ուղերձում տնտեսական աճի վրա էներգակիր-ների գների ազդեցությունը դիտարկվել է որպես աճը նվազեց-նող ռիսկ վերոնշյալ նույն տրամաբանությամբ:
202.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բազրատյան	2. Կառավարությունը որևէ կերպ չի հիմ-նավորել 2014թ 5,2% տնտեսական աճի ցուցա-նիշը: Սա անհավանական է այն պարզ պատ-ճառաբանությամբ, որ վերջին տարիներին «ներդրումներ/ՀՆԱ» հարաբերակցությունը անշեղորեն նվազում է: Ուրեմն ի՞նչի հաշվին պետք է ՀՆԱ աճն ապահովվի: Մի կողմից կառավարությունը պնդում է 2014թ աշխատա-վարձերի ու թոշակների առաջանցիկ աճի, բյուջեի սոցիալականության թեզի վրա: Ուղեր-ձի 69-րդ էջում 2014թ համար կանխատեսվում	Կառավարությունը տնտեսական աճի կանխատեսումներն իրա-կանացնելիս հիմնվում է արտաքին և ներքին մակրոտնտեսա-կան իրավիճակի համակողմանի գնահատման վրա՝ օգտագոր-ծելով կանխատեսման ժամանակակից գործիքներ: Ինչ վերա-բերում է ներդրումների նվազմանը և տնտեսության ծախսերի կառուցվածքին, ապա նշենք, հետևյալը. ներդրումների նվազման տեմպեր սկսել են արձանագրվել ետճգնաժամային ժամանակահատվածում և դա բնական էր, քանի որ մինչճգնաժամային ժամանակահատվածում ներդրում-ների իրականացման հիմնական ուղղվածությունը բնակարա-նային շինարարությունն էր, որը 2008 թվականին հասել էր իր

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		է սպառման առաջանցիկ աճ՝ 3.5%: Մինչդեռ հաջորդ էջում կանխատեսվում է կապիտալ ներդրումների սոսկ 2.9% աճ: Ավելին կապիտալ ներդրումները ՀՆԱ կազմում 2012թ 23.8 և 2013թ 22.5%-ից 2014թ կիջնեն 21.8%: Մյուս կողմից, կարելի էր ենթադրել, որ կառավարությունը փորձելու է տնտեսական աճի հասնել՝ խրախուսելով պահանջարկը (սպառումը): Բայց երբ որ նայում ենք 2014-ի տնտեսական աճի կառուցվածքին, ապա այստեղ նախապատվությունը տված է արդյունաբերությանը, գյուղատնտեսության աճը չի փոխվում և մի քանի անկումից հետո ակնկալվում է աճ շինարարության մեջ: Այսպիսով, 5,2% տնտեսական աճի ոչ մի հաշվարկ չի կարող լինել: Այնուամենայնիվ, եթե համարենք որ նման հաշվարկներ կան, առաջարկում ենք դրանք բոլոր մանրամասներով ներառել բյուջետային ուղերձում:	գազաթնակետին: Այսպես, ընդամենը 5 տարվա ընթացքում՝ մինչև 2009 թվական բնակչության միջոցների հաշվին շինարարությունը աճել է ավելի քան 3,5 անգամ, իսկ վերջինիս կշիռը ընդհանուր շինարարության մեջ 2008 թվականին շուրջ 70%-ի է հասել: Եթե դիտարկենք շինարարությունը ըստ տնտեսության ոլորտների, ապա անշարժ գույքի հետ կապված գործառնությունների կշիռը շինարարության մեջ 2008 թվականին կազմել է շուրջ 60%: Ետնդամենային ժամանակահատվածում տնտեսության մեջ արձանագրված կառուցվածքային տեղաշարժերի արդյունքում բնակարանային շինարարությունը կտրուկ կրճատվել է, ինչը նշանակում է, որ կրճատվել են նաև ներդրումները այդ ոլորտում: 2012 թվականին 2008 թվականի համեմատ բնակարանային շինարարության կրճատվել է 84 տոկոսով՝ ընդհանուր շինարարության մեջ կազմելով ընդամենը 21 %: Կառավարության կողմից որդեգրված արդյունաբերական արտահանման խթանման քաղաքականության արդյունքում արդյունաբերության դերի բարձրացումը մի կողմից նվազեցրել է պահանջը էքստենսիվ ներդրումների նկատմամբ, քանի որ ներդրումները այս ոլորտում առավել արտադրողական են, քան շինարարության ոլորտում, մյուս կողմից արդյունաբերական արտահանման առաջանցիկ աճի արդյունքում փոխվել է նաև տնտեսության համախառն ծախսերի կառուցվածքը՝ ի օգուտ արտաքին պահանջարկի ավելացման, որը 2013 թվականին տնտեսական աճի ավելացման հիմնական շարժիչ ուժն է լինելու (համախառն պահանջարկի ավելացման գերակշիռ մասը պայմանավորվելու է արտահանման աճով):
203.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	3. Որոշ թվեր բյուջեի նախագծում գրված են հենց այնպես, համարյա ծաղրելով հասարակությանը: Այսպես, ուղերձի 68-րդ էջում կարդում ենք գործազրկության այսպիսի	Գործազրկության ներկայացված ցուցանիշների հիմքում ընկած են տնտեսագիտորեն հիմնավորված հաշվարկներ, ըստ որի 2013-2014 թվականներին սպասվող տնտեսական աճը հիմնականում պայմանավորվելու է արտադրողականության աճով, ինչը

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		թվեր. 2012թ 17,3, 2013թ 17,2 և 2014թ 17,1%: Առաջարկվում է այս մասն ամբողջովին հանել:	նշանակում է, որ տնտեսական աճի հետևանքով գործազրկության էական կլանում չի ակնկալվում և կլանման չափը գնահատվել է տարեկան 0,1 տոկոսային կետ:
204.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	4. Բյուջետային ուղերձից պետք է հանել գործարար ներդրումային բաժինը (2-9 էջեր). արդեն որերորդ ծրագրում ու բյուջետային ուղերձում կրկնվող բառակույտեր են: Այս ուղղությամբ բյուջեի ծախսերում ոչինչ նախատեսված չէ:	ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության առանցքում արդյունաբերության զարգացմանն ուղղված քաղաքականության իրականացումն է, որի իրականացման համար անհրաժեշտ պայման է հանդիսանում բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի կայացումը: Հետևաբար գործարար և ներդրումային միջավայրերի բարելավմանն ուղղված ջանքերի շարունակականությունը չափազանց կարևորվում է նաև ոլորտային տնտեսական քաղաքականությունների իրականացման ենթատեքստում: Նշված բաժինն են վերաբերվում բյուջեի ծախսային մասում ներառված հետևյալ ծրագրերը՝ Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին, Զբոսաշրջության աջակցության ծառայություններ, Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ, ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության ծրագիր, Որակի ենթակառուցվածքների բարեփոխում:
205.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	5. Էջ 10-ից հանել առաջին 3 պարբերությունը: Մարզերի ի՞նչ տնտեսական անհամասնությունների մեղման մասին է խոսքը: Համաձայն պաշտոնական վիճակագրության տնտեսության կենտրոնացումը Երևանում շարունակվում է: Կառավարությունն ունի 1 շնչին ընկնող համախառն ռեզիդենտ արդյունքի հաշվարկի դինամիկան: Կա՞ն հարթեցման միտումներ:	Տարածքային զարգացման անհամաչափությունների մեղման նպատակով վերջին տարիների զգալիորեն վերաբաշխվել է ինչպես պետական բյուջեով այնպես էլ այլ աղբյուրներով իրականացվող կապիտալ ներդրումները մարզերի և Երևանի միջև: Մասնավորապես, եթե 2007 թվականին երկրում իրականացված կապիտալ ներդրումների 87,7 %-իրականացվել է Երևանում, իսկ 13.3 %-ը մարզերում, ապա 2012 թ-ին այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար 53.5 % և 46.5%: Ինչ վերաբերում է 1 շնչին ընկնող համախառն ռեզիդենտ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			արդյունքի հաշվարկի դինամիկային, ապա նշենք, որ ՀՀ ԱՎԾ կողմից նման շուցանիշի հաշվարկներ չեն իրականացվում, սակայն հիմնական ճյուղերով համախառն թողարկումների ծավալների և բնակչության թվաքանակի ըստ մարզերի ներկայացվող տեղեկատվության հիման վրա կարելի է կատարել այն եզրահանգումը, որ այս առումով ևս հարթեցման միտումներ առկա են: Մասնավորապես, ըստ հիմնական ճյուղերի թողարկումների ծավալները ցույց են տալիս, որ վերջին 4 տարիների ընթացքում համախառն թողարկման ծավալների կենտրոնացումը Երևանում էապես թուլացել է՝ եթե 2009 թվականին թողարկման ծավալի 73,4%-ն էր բաժին ընկնում Երևանին, ապա 2012 թվականին այդ կշիռը 68,8% էր կազմում: Միաժամանակ, Երևանում բնակչության թվաքանակի էական փոփոխություն չի արձանագրվել, ինչը անուղղակիորեն վկայում է ըստ մարզերի 1 շնչի հաշվով թողարկման հարթեցման միտումների մասին:
206.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	6. Ուղերձի էջ 16-ում պետք է կոնկրետ գրել, թե ի՞նչ է նախատեսվում անել ատոմակայանի նոր էներգաբլոկի շինարարության մասով: Դրա հետ կապված կոնկրետ փոփոխություններ անել բյուջեում:	Կշարունակվեն բանակցությունները հնարավոր ներդրողների հետ: Միաժամանակ ՀՀ քաղաքաշինության նախարարությունը կկազմակերպի նոր միջուկային էներգաբլոկի կառուցման համար շինարարական առաջնահերթ նորմերի մշակումը (մասնավորապես՝ ատոմային էլեկտրակայանների շինությունների հիմքերի նախագծման նորմ): Ընդ որում ՀՀ բյուջեի նախագծում փոփոխություններ անելու անհրաժեշտություն չկա, քանի որ այդ աշխատանքները կկատարվեն նախարարություններին հատկացված գումարների հաշվին:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
207.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	7. Էջ 22-ում հիմնավորել ուղևորափոխադրումների գծով երկաթուղին սուբսիդավորելը: Առաջարկում ենք նշել. մինչև ե՞րբ պետք է այդ սուբսիդիաներն իրականացվեն: Բացի այդ, առաջարկում ենք սուբսիդավորել ուղևորներին, այլ ոչ թե ուղևորափոխադրողին:	Խնդիրը կանոնակարգվում է ՀՀ կառավարության 07.02.2008թ. N 83-Ա որոշմամբ: Կոնցեսիոն պայմանագրի համաձայն Կոնցեսիոն սուբսիդավորում է (մասնակի փոխհատուցում է) համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումների կոնցեսիոնների տարեկան վնասը կոնցեսիոնների կողմից անկախ աուդիտորի կողմից այդ վնասների հաստատված հաշվարկների ներկայացման պարագայում: Սուբսիդիայի համաձայնեցված չափը կազմում է 2009-2010 թվականներին՝ 10 տոկոս, 2011-2012 թվականներին՝ 15 տոկոս, 2013 թվականին՝ 20 տոկոս, 2014-2015 թվականներին՝ 25 տոկոս, 2016 թվականից մինչև 2038 թվականը՝ 30 տոկոս՝ ուղևորափոխադրումային ծառայությունների վնասի նկատմամբ: Սուբսիդիայի չափը չի կարող գերազանցել կամ հավասար լինել տվյալ տարվա համար հայտարարված կոնցեսիոն փոփոխական տարեկան վճարի գումարին (կոնցեսիոն վճարը հաշվարկվում է տվյալ տարվա համախառն եկամտի 2 %-ի չափով):
208.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	8. Ուղերձի արտաքին քաղաքականության հատվածում Հայաստանը զարգացնում է իր հարաբերությունները և ՌԴ, և ԱՄՆ, և Եվրամիության հետ: Կարծես թե կառավարությանը հայտնի չէ, որ Հայաստանը ՄՄ-անը անդամակցելու որոշում է կայացրել: Ի դեպ, բյուջեի ոչ եկամուտների, և ոչ էլ ծախսերի մեջ ՄՄ-ին անդամակցելու հետ կապված ոչինչ նախատեսված չէ: Եկամուտների վրա ի՞նչպես է ազդելու ՄՄ անդամակցությունը: ՄՄ անդամակցության հետ կապված ի՞նչպիսի ծախսեր են պահանջվում: Առաջարկվում է այս ամենը	2014թ. պետական բյուջետային ուղերձում առկա է հետևյալ ձևակերպումը՝ «Հայաստանի ներգրավումը Եվրասիական տնտեսական տարածության ինտեգրացիոն գործընթացներին», որը վերաբերում է Մաքսային Միությանն անդամակցությանը (Սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին Հայաստանի Հանրապետության կառավարության զեկույց, մաս I): Ինչ վերաբերում է պետական բյուջեում նշումների բացակայությանը, ապա դեռ վաղաժամ է մինչև անդամակցությունը եկամուտները կամ ծախսերը պետական բյուջեում ամրագրելու համար:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		հստակ ամրագրել բյուջեում:	
209.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	9. 2014թ բյուջեի ընդհանրական գնահատականն այսպիսին է. 1092 մլրդ դրամ հարկային եկամուտների պայմաններում աճը 2013թ բյուջեի սպասվելիք կատարողականի նկատմամբ կազմում է 11%՝ ուղիղ այնքան, ինչքան տնտեսական աճի և գնաճի արտադրյալն է: Նկատի ունենալով որ տնտեսական աճի (եթե այն լինի) մեծությունը 5,2% է, իսկ առավելագույն գնաճը 5,5%, ապա ստացվում է, որ ստվերի ու կոռուպցիայի ոչ մի պայքար էլ չի նախատեսվում: Եվ սա մի երկրում, ուր ստվերը կազմում է տնտեսության 39-51%, իսկ կոռուպցիայի ընկալման ինդեքսով Հայաստանը 174 երկրների մեջ 105-րդ տեղում է: Առաջարկվում է վերանայել բյուջեի եկամտային մասը և այն առնվազն ավելացնել 90-110 մլրդ դրամով. պրոգրեսիվ եկամտահարկի, ռոյալթիների և թանկարժեք գույքի հաշվին:	ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ առաջին անգամ պետական բյուջեն չի նախատեսում հարկային վարչարարության լրացուցիչ բեռի ավելացում: Այսինքն, առաջին անգամ հարկեր - ՀՆԱ ցուցանիշը պահպանվում է նույն մակարդակի վրա: Նշյալ քաղաքականության հիմնավորումն հետևյալն է՝ 1. այդ առումով 2013 թվականին և դրան նախորդող տարիներին բավականին մեծ ծավալի միջոցառումներ են իրականացվել և վարչարարությունը խստացել է, իր բացասական ազդեցությունը ունենալով բիզնես միջավայրի վրա, 2. այսուհետ շեշտադրումն արվելու է ոչ թե վարչարարության գործիքների խստացման, այլ ռիսկերի վրա հիմնված վերահսկողության մեթոդների ներդրման վրա, որպեսզի ստուգումների քանակը նվազեցվի և առաջին հերթին բացահայտվի ռիսկային ոլորտներն ու ստուգումներ իրականացվի ռիսկային ոլորտներում: Ընդհանուր առմամբ, այս քաղաքական որոշումները պետք է հարկային ճնշումները 2014 թվականին 2013 թվականի համեմատ նվազեցնեն:
210.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Առաջարկվում է եկամտահարկի նոր, պրոգրեսիվ սանդղակ մտցնել. մինչև 100 հազ դրամ 12%, 100 հազ-ից մինչև 300 հազ. դրամ՝ 24%, 300 հազ. դրամից մինչև 1 մլն դրամ՝ 30% , 1 մլն դրամից մինչև 5 մլն-ը՝ 36% և 5մլն-ից ավել ստացած եկամտի 40%-ը:	2013 թվականի հունվարի 1-ից կիրառվող եկամտային հարկի դրույքաչափերն իրականում պրոգրեսիվ բնույթ ունեն, ինչը նաև նպաստում է որպեսզի պետությունն իրականացնի եկամուտների վերաբաշխման իր գործառույթը: Միաժամանակ, գտնում ենք, որ կուտակային կենսաթոշակային համակարգի շրջանակներում իրականացվող համակարգային փոփոխությունների ներկայիս անցումային փուլում ֆիզիկական անձանց եկամուտների հարկման դրույքաչափերի վերանայմանը

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			պետք է անդրադառնալ ոչ միայն պետական բյուջեի հարկային եկամուտների տեսանկյունից, այլ նաև կենսաթոշակային համակարգի բարեփոխումների իրականացման տեսանկյունից՝ հաշվի առնելով այն կարևոր հանգամանքը, որ համակարգային փոփոխությունները չպետք է ուղեկցվեն հարկային բեռի բարձրացմամբ (բացառությամբ ամսական կտրվածքով 2 մլն. դրամից ավելի եկամուտ ստացողների հարկային բեռի): Միաժամանակ, հայտնում ենք, որ ներկայացված առաջարկությունը և դրա ընդունման արդյունքում ակնկալվող հարկային եկամուտները հիմնավորված չեն կոնկրետ հաշվարկներով ու վերլուծություններով: Այս առումով, հայտնում ենք, որ ներկայացված առաջարկությունը կարող է քննարկվել պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումից որոշակի ժամանակ հետո՝ կոնկրետ հաշվարկների ու վերլուծությունների ներկայացման պարագայում:
211.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	10. ՀՀ 2014թ Պետական բյուջեի մասին օրենքով բյուջեի եկամուտները (1134 մլրդ դրամ) հաստատել ոչ միայն մեկ տողով, այլ ըստ հարկատեսակների՝ սահմանելով տվյալ հարկատեսակի գծով եկամուտների նվազագույն ծավալ:	ՀՀ կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում բյուջետային եկամուտների (այդ թվում նաև հարկային եկամուտների) հաստատվող գումարները ներկայացված են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված ձևաչափով:
212.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	11. Ռոյալթիների մեծության գործակիցը ավելացնել 2 անգամ:	«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 13.4-րդ հոդվածով սահմանված ռոյալթիի հաշվարկման բանաձևի, տարեկան արդյունքներով ռոյալթիի հաշվարկման բազայի (իրացումից հասույթի) նկատմամբ կիրառվող ռոյալթիի դրույքաչափը հաշվարկելու համար ռոյալթիի նվազագույն 4 տոկոս դրույքաչափին գումարվում է շահույթի և իրացումից հասույթի ութապատիկի հարաբերության տոկոսային մեծությունը:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	<< կառավարության դիրքորոշումը
			Շահույթի և իրացումից հասույթի ութապատիկի հարաբերության տոկոսային մեծությունը սահմանվել է որպես ռոյալթիի նվազագույն դրույքաչափին ավելացվող՝ շահութաբերությունը հաշվի առնող բաղադրիչ, որը միաժամանակ հավասարակշռում է բարձր և ցածր շահութաբերություն ունեցող հանքավայրերի համար ռոյալթիի բեռը: Այսպես, 10 տոկոս շահութաբերության դեպքում ռոյալթիի դրույքաչափը կկազմի 5,25 տոկոս, 20 տոկոս շահութաբերության դեպքում՝ 6,5 տոկոս, 25 տոկոս շահութաբերության դեպքում՝ 7,1 տոկոս, 30 տոկոս շահութաբերության դեպքում՝ 7,75 տոկոս, իսկ 40 տոկոս շահութաբերության դեպքում՝ 9 տոկոս: Հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության եւ արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» 2002 թվականի նոյեմբերի 5-ի ՀՕ-440-Ն օրենքով սահմանված կարգով մետաղական օգտակար հանածոների արդյունահանումից ռոյալթիներ վճարվում էին միայն 25 տոկոսը գերազանցող շահութաբերություն ունեցող արդյունահանողները, այն էլ՝ օգտակար հանածոյի համախառն հաշվարկային արժեքի 0.1 տոկոսի չափով՝ շահութաբերության նորմայի 25 տոկոսը գերազանցող յուրաքանչյուր 0.8 տոկոսի համար: Անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ նշված բանաձևում կիրառվում է «շահույթը՝ նախքան հարկումը», որը որոշվում է որպես ռոյալթիի հաշվարկման բազայի (արտադրանքի իրացումից հասույթի) եւ բացառապես «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերություն (ընդ որում, բացառելով ֆինանսական գործունեության գծով ծախսերը եւ նախորդ տարիների հարկային վնասները): Միաժամանակ, ռոյալթիի հաշվարկման բազան արտադրանքի իրացումից հասույթն է, որը որոշվում է ՀՀ կառա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			վարության 2011 թվականի նոյեմբերի 29-ի «Ռոյալթիների հաշվարկման համար իրացումից հասույթի հաշվարկման կարգը հաստատելու մասին» N 1901-Ն որոշմամբ հաստատված կարգով: Առաջարկի ընդունման դեպքում ռոյալթիի դրույքաչափի հաշվարկման բանաձևում շահույթի և իրացումից հասույթի քառապատիկի կիրառման արդյունքում 10 տոկոս շահութաբերության դեպքում ռոյալթիի դրույքաչափը կկազմի 6.5 տոկոս, 20 տոկոս շահութաբերության դեպքում՝ 9 տոկոս, 25 տոկոս շահութաբերության դեպքում՝ 10,25 տոկոս, 30 տոկոս շահութաբերության դեպքում՝ 11.5 տոկոս, իսկ 40 տոկոս շահութաբերության դեպքում՝ 14 տոկոս: Միաժամանակ, նշենք, որ միջազգային պրակտիկայում կիրառվում են ռոյալթիի հաշվարկման տարբեր եղանակներ (ադվալորային՝ վաճառված արտադրանքի արժեքից, հաստատագրված՝ արտադրանքի միավոր ծավալից կամ քաշից, շահույթից հաշվարկվող և այլն): Տարբեր երկրներում պինդ օգտակար հանածոների համար ռոյալթիի դրույքաչափերը տարբեր հանածոների համար սովորաբար տատանվում են 1 տոկոսից (ածուխ) մինչև 24 տոկոսի (ադամանդ) սահմաններում: Ընդ որում, համաձայն մեր կողմից կատարված ուսումնասիրությունների Ինդոնեզիայում 2012թ. դրությամբ ռոյալթիի դրույքաչափը սահմանված է պղնձի համար՝ 4 տոկոս, ոսկու համար՝ 3.75 տոկոս, արծաթի համար՝ 3.25 տոկոս, Ռուսաստանում պղնձի համար՝ 8 տոկոս, ոսկու համար՝ 6 տոկոս, Պերուում ռոյալթիի դրույքաչափերը սահմանված են 1-ից 12 տոկոս, Ավստրալիայում՝ 2.7-ից 7.5 տոկոս, Գանայում՝ 5 տոկոս: Այս առումով, գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում ռոյալթիների դրույքաչափերը այլ երկրների համեմատությամբ ցածր չեն և բարձրացնելով ռոյալթիների ներկա դրույքա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			չափերը՝ հանքարդյունաբերության ոլորտում կատարվող ներդրումները կարող են կրճատվել, քանի որ Հայաստանի Հանրապետությունը ներդնողների համար կհամարվի պակաս գրավչություն ունեցող երկիր: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ներկայացված առաջարկի ընդունումը համարում ենք ոչ նպատակահարմար:
213.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	12. Ռոյալթիները կիրառել բոլոր հանքերի վրա:	Մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի արդյունահանման համար ռոյալթիի համակարգը ներդրվել է 2012 թվականի հունվարի 1-ից: 2012 թվականին մետաղական օգտակար հանածոների հանքավայր շահագործողները ռոյալթիները վճարել են 2011 թվականին գործող բնօգտագործման վճարի և ռոյալթիի հանրագումարի 1/3-ի չափով, իսկ ռոյալթիի ներդրման առաջին տարվա արդյունքները հայտնի են դարձել միայն 2012 թվականի տարեկան հաշվետվությունների ամփոփումից հետո՝ 2013 թվականին: Հետևաբար, հաշվի առնելով այն, որ ներկայումս ամփոփվում են այդ համակարգի կիրառության միայն առաջին տարվա արդյունքները՝ գտնում ենք, որ առավել նպատակահարմար է ոչ մետաղական օգտակար հանածոների մասով ռոյալթիի համակարգի ներդրման առաջարկությունը քննարկել որոշակի ժամանակ հետո՝ մետաղական օգտակար հանածոների մասով ռոյալթիի նոր համակարգի կիրառության առաջին 2-3 տարիների փորձով նոր համակարգի արդյունավետության վերլուծությունների արդյունքների առկայության պարագայում:
214.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	13. 150 մլն դրամից ավել կադաստրային արժեք ունեցող գույքի հարկման գործակիցը սահմանել 1,5%, իսկ 500 մլն դրամից ավելին՝ 2%:	2013 թվականին մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Գույքահարկի հարկման համակարգի արդյունավետության բարձրացման ուղիները» հայեցակարգը, որի համաձայն, առաջիկա տարիներին գույքահարկի համակարգի զարգացման հիմնական ուղղություններից մեկը լինելու է բարձրարժեք գույքի մասով հարկման առավել բարձր (պրոգրեսիվ) դրույ-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			քաջափերի կիրառությունը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ նպատակահարմար ենք համարում ներկայացված առաջարկությունը քննարկել վերոնշյալ հայեցակարգից բխող՝ գույքային հարկերի համակարգին առնչվող՝ առաջիկա օրենսդրական փոփոխությունների շրջանակներում:
215.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	14. Ի՞նչու է շարունակում անկում ապրել ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը: Ու՞ր են գնում բանկերի վարկերը, որոնց հավելաճը շուրջ 15% է, մինչդեռ տնտեսական աճը՝ 4%:	Ներդրումների նվազման տեմպեր սկսել են արձանագրվել ետզնաժամային ժամանակահատվածում և դա բնական էր, քանի որ մինչզնաժամային ժամանակահատվածում ներդրումների իրականացման հիմնական ուղղվածությունը բնակարանային շինարարությունն էր, որը 2008 թվականին հասել էր իր գագաթնակետին: Այսպես, ընդամենը 5 տարվա ընթացքում՝ մինչև 2009 թվական բնակչության միջոցների հաշվին շինարարությունը աճել է ավելի քան 3,5 անգամ, իսկ վերջինիս կշիռը ընդհանուր շինարարության մեջ 2008 թվականին շուրջ 70%-ի է հասել: Եթե դիտարկենք շինարարությունը ըստ տնտեսության ոլորտների, ապա անշարժ գույքի հետ կապված գործառնությունների կշիռը շինարարության մեջ 2008 թվականին կազմել է շուրջ 60%: Ետզնաժամային ժամանակահատվածում տնտեսության մեջ արձանագրված կառուցվածքային տեղաշարժերի արդյունքում բնակարանային շինարարությունը կտրուկ կրճատվել է, ինչը նշանակում է, որ կրճատվել են նաև ներդրումները այդ ոլորտում: 2012 թվականին 2008 թվականի համեմատ բնակարանային շինարարության կրճատվել է 84 տոկոսով՝ ընդհանուր շինարարության մեջ կազմելով ընդամենը 21 %: Կառավարության կողմից որդեգրված արդյունաբերական արտահանման խթանման քաղաքականության արդյունքում արդյունաբերության դերի բարձրացումը մի կողմից նվազեցրել է պահանջը խոշորածավալ ներդրումների նկատմամբ, քանի որ ներդրումներն այս ոլորտում առավել արտադրողական են, քան շինարարության ոլորտում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			Ինչ վերաբերում է վարկերի ուղղվածությանը, ապա նշենք, որ 2012 թվականի տարեվերջի տվյալներով բանկերի վարկային պորտֆելի կառուցվածքում գերակշռել են արդյունաբերությանը տրամադրված վարկերը՝ կազմելով ընդհանուր պորտֆելի 24.4%-ը: Իր կշռով երկրորդը առևտրի ոլորտն է, որին բաժին է ընկել ընդհանուր վարկերի 21.6%-ը: Պատահական չէ, որ այս ոլորտները հատկապես ետճգնաժամային ժամանակահատվածում այլ ոլորտների նկատմամբ առավել բարձր աճի տեմպեր են ունեցել:
216.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	15. Առաջարկվում է 10%-ոց հարկ սահմանել վերավարկավորման վրա:	Եթե խոսքը վերաբերում է բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ստացվող և տրամադրվող վարկերի տոկոսադրույքների տարբերությունից ստացվող եկամտին, ապա նշված եկամուտից ձևավորվում է բանկերի և վարկային կազմակերպությունների հարկվող շահույթը, որը ներկայումս հարկվում է շահութահարկի 20 տոկոս դրույքաչափով, և նշված եկամտի համար լրացուցիչ հարկատեսակի սահմանումը կարող է հանգեցնել վարկային ռեսուրսների տոկոսադրույքի բարձրացման: Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ վերավարկավորման համար նոր հարկատեսակի սահմանումը համարում ենք ոչ նպատակահարմար:
217.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	16. Սկսել 18 տարին լրացած բոլոր քաղաքացիների եկամուտների և գույքի պաշտոնական հայտարարագրումը: Խնդիրը պետք է լուծել մինչև 5 տարի ժամանակահատվածում: 2014թ հանձնընդհանուր հայտարարագրման խնդիրը լուծել 50 և ավելի տարիք ունեցող բոլոր քաղաքացիների համար:	Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգը ներկայումս Հայաստանի Հանրապետությունում կիրառվում է միայն պաշտոնատար անձանց մասով: Ինչ վերաբերում է նշյալ համակարգի կատարելագործմանն ու կիրառության շրջանակի ընդլայնմանը, ապա հայտնում ենք, որ սկզբունքորեն դեմ չենք ներկայացված առաջարկին, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարկահավաքման խնդիր լուծման և կոռուպցիոն երեւույթների բացահայտման դեմ պայքարի միջոցառումների համատեքստում հայտարարագրման

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			համակարգերի կիրառությունն արդյունավետ է միայն այն դեպքերում, երբ հայտարարագրումն իրականացվում է համատարած՝ հայտնում ենք, որ ֆիզիկական անձանց գույքի ու եկամուտների հայտարարագրման համակարգի համատարած կիրառության խնդիրը կարելի է քննարկել միայն հարկային մարմիններին հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային տեխնոլոգիաների լայնամասշտաբ կիրառությանն անցնելուց հետո, երբ յուրաքանչյուր ֆիզիկական անձ հնարավորություն կունենա առանց հարկային մարմին այցելության կազմել և էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել իր հայտարարագիրը: Ընդ որում, հայտարարագրերի ներկայացման էլեկտրոնային համակարգի կիրառությունը հնարավորություն կընձեռի, որպեսզի հայտարարագրման ենթակա տեղեկատվությունը ամբողջ ծավալով մշակվի ու վերլուծության ենթարկվի, առանց որի հայտարարագրման համակարգի ներդրումը կլինի ուղղակի ինքնանպատակ:
218.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	17. Պետք է բարձրացվեն օղու, լիկյորների վրա դրվող ակցիզները, իսկ գինու ակցիզն իջեցնել: Գինենյութի վրա դրված ակցիզը պետք է հաշվանցել ավելացված արժեքի նման: Մյուս ակցիզային հարկերը պետք է խմբագրել այն հաշվով, որպեսզի ներքին արտադրողները չգտնվեն ավելի վատ պայմաններում, քան ներկրողները: Միավոր բացարձակ լիտրի հաշվարկով գինու և գինենյութի ակցիզը մի քանի անգամ ցածր պետք է լինի սպիրտային խմիչքների ակցիզից:	Ներկայացված առաջարկությունները համահունչ են ակցիզային հարկի բնագավառում ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականության ուղղություններին: 2012 թվականի դեկտեմբերի 19-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ՀՕ-250-Ն օրենքով պտղային, հատապտղային և մրգային գինիների համար սահմանված ակցիզային հարկի դրույքաչափերը իջեցվել և հավասարեցվել են խաղողի գինիների համար սահմանված դրույքաչափերին: Մասնավորապես, պտղային, հատապտղային և մրգային գինիների համար սահմանվել է տեղական արտադրության դեպքում՝ բացթողնման գնի (առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի), իսկ ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի 10 տո-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			կոսի, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 100 դրամ դրույքա- չափ, նախկինում գործող՝ տեղական արտադրության դեպքում՝ բացթողնման գնի (առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի), իսկ ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի 25 տոկոսի, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 270 դրամի փոխարեն: Ինչ վերաբերում է օղու և լիկյորների համար սահմանված ակցի- զային հարկի դրույքաչափերին, ապա հայտնում ենք, որ ակցի- զային հարկով հարկման ենթակա այլ ալկոհոլային խմիչքների համեմատությամբ, օղու և լիկյորի համար սահմանված են ակցի- զային հարկի ավելի բարձր դրույքաչափեր: Ավելին, օղու մասով ներկայումս կիրառվում է նաև օտարման նվազագույն թույլատրե- լի գին՝ կառավարելու համար օտարվող ապրանքի գնի թերհայ- տարարագրման միջոցով ակցիզային հարկից խուսափելու ռիսկերը: Միաժամանակ, հայտնում ենք, որ գործող օրենսդրությամբ նա- խատեսված է ակցիզային հարկի գծով հաշվանցումներ կատա- րելու հնարավորություն: Ընդ որում, գինենյութը ակցիզային հար- կով հարկման ենթակա չէ: Ինչ վերաբերում է տեղական արտադրողների ու ներմուծողների համար սահմանված հարկային բեռի հարաբերակցությանը, ապա հայտնում ենք, որ ակցիզային հարկի հաշվարկային (ադ- վալորային) դրույքաչափը կիրառվում է՝ տեղական արտադրու- թյան ապրանքների մասով՝ բացթողնման գնի, իսկ ներմուծվող ապրանքների մասով՝ մաքսային արժեքի նկատմամբ: Հետևաբար, հաշվի առնելով, որ ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ՀՀ-ում արտադրվող ապրանքի բացթողնման գինը սովորաբար ավելի ցածր է, քան նույն ապրանքի ներմուծման դեպքում մաքսային արժեքը, ստացվում է, որ տեղական ար- տադրության ապրանքների համար սահմանված ակցիզային հարկի բեռը, ըստ էության, ավելի ցածր է նույն ապրանքների

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			ներմուծման համար սահմանված ակցիզային հարկի համեմատությամբ:
219.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	18. Պետք է նորմալ կազմակերպել շահութահարկի գանձման աշխատանքները: Հաշվարկները ցույց են տալիս, որ եթե 2014-ին ՀՆԱ-ն լինելու 4,7 տրլն դրամ, ապա տնտեսությունում ստացվող համախառն շահույթը կազմելու է 1,9-2,0 տրլն դրամ: Այս պարագայում նկատի ունենալով որոշ ոլորտներում շահութահարկի բացակայությունը, ստացվում է որ շահութահարկը պետք է կազմի առնվազն 270 մլրդ դրամ: Այսօր փաստացի թիվը 2 անգամ ցածր է (2014թ – մոտ 140 մլրդ դրամ): Համապատասխան միջոցների ձեռնարկման և քաղաքական կամքի դրսևորման դեպքում արդեն 2014-ին կարելի կլիներ ավելացնել շահութահարկի գծով մուծումները 30 մլրդ դրամով, իսկ 2015-ին ստանալ լրացուցիչ ևս 100 մլրդ դրամ շահութահարկ:	ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծի բացատրագրում ներկայացված շահութահարկի գծով բյուջետային եկամուտների կանխատեսման համար դիտարկվել են ազգային հաշիվների համակարգի եկամուտների ձևավորման հաշվի «Տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ» (ըստ տնտեսական գործունեության տեսակների) հոդվածի ցուցանիշը, որի հիման վրա գնահատվել է շահութահարկի փաստացի բազան: Նկատենք, որ այս հոդվածը, ըստ վիճակագրական մեթոդաբանության, ներառում է ավելացված արժեքի այն մասը, որը մնում է արտադրողներին վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության և արտադրության հարկերի վճարման հետ կապված ծախսերը կատարելուց հետո (զուտ շահույթ), ինչպես նաև տնային տնտեսություններին պատկանող ձեռնարկությունների արտադրական գործունեության արդյունքում ձևավորված շահույթը (զուտ եկամուտները), տնտեսությունների կողմից սեփական կարիքների համար արտադրվող ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև տնային տնտեսությունների կողմից ստացվող տոկոսների, դիվիդենդների, վարձավճարների և նմանատիպ այլ եկամուտների արժեքը: Այն նվազեցնելով գյուղատնտեսության (ամբողջությամբ), շրջանառության հարկ, հաստատագրված և արտոնագրային վճար վճարողների զուտ շահույթի և զուտ խառը եկամուտների հաշվարկային ծավալների հանրագումարների չափով (2011 թվականի գնահատված ծավալը կազմել է ՀՆԱ-ի 16 տոկոսը) գնահատվել է 2014 թվականի շահութահարկի հարկման բազան (1,239.5 մլրդ դրամ): Շահութահարկի փաստացի դրույքաչափը քննարկելիս, օրենքով նախատեսված՝ հարկվող շահույթի հաշվարկման առանձնահատկություններից բացի հարկ է հաշվի առնել այն հանգաման-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			քը, որ բերված գնահատականներում որպես շահութահարկի մակրոտնտեսական հարկման բազա օգտագործված զուտ շահույթը ներառում է նաև տնային տնտեսություններին պատկանող ձեռնարկությունների արտադրական գործունեության արդյունքում ձևավորված շահույթը (զուտ եկամուտները):
220.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	19. Մենաշնորհ ու շուկայում գերիշխող դիրք ունեցող ընկերությունների համար սահմանել լրացուցիչ շահութահարկ՝ մոնոպոլ շահույթի 50%-ի չափով: Այս միջոցառման ներդրման հետևանքում կարելի է 2014-ին լրացուցիչ ստանալ առնվազն 10, իսկ 2015-ին 25 մլրդ դրամ:	Նախ անհասկանալի է «մոնոպոլ շահույթ» հասկացությունը: Արդյո՞ք խոսքը ոչ բնական մենաշնորհների մասին է: Եթե այդպես է, ապա մեր ունեցած տեղեկատվությամբ, աշխարհում հարկման նման փորձ չկա: Բացի այդ, գտնում ենք, որ մենաշնորհային շահույթի հարկումը ենթադրում է բարդ հարկային վարչարարություն, ինչը նաև նշանակում է, որ կիրառական հարթության վրա այդ մոտեցման արդյունավետությունը շատ ցածր կլինի: Ի վերջո մենաշնորհային հատկանիշներով բնութագրվող տնտեսավարող սուբյեկտները կարող են շատ արագ ձևականորեն բաժանվել մի քանի տնտեսավարող սուբյեկտների՝ դրանով իսկ խուսափելով շահութահարկի բարձր դրույքաչափով հարկումից: Հաշվի առնելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ քաղաքականության ու վարչարարական լուծումների արդյունավետության տեսանկյունից առավել նպատակահարմար է կարգավորել ըստ հակամենաշնորհային օրենսդրությամբ, այլ ոչ թե հարկային քաղաքականությամբ:
221.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	20. Մեկընդմիջտ պետք է լուծել ԱԱՀ վերադարձի խնդիրը հանրապետությունից մեկնող զբոսաշրջիկների, գործարարների, այլ ոչ ռեզիդենտների համար: ԱԱՀ-ի վերադարձի բացակայությունը և ավիատոմսերի բարձր գները զբոսաշրջության զարգացման հիմնական խոչընդոտներն են: Այս փոփոխությունները բյուջեի եկամուտները կարող են պակաս-	Հանրապետության տարածքում ձեռք բերվող և արտահանվող ապրանքների մասով ԱԱՀ-ի վերադարձման համակարգի գործարկման ուղղությամբ արդեն իսկ աշխատանքներ են կատարվում: Մասնավորապես, այդ նպատակով 2012 թվականի տարեվերջին օրենսդրական փոփոխություններ կատարվեցին «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում, իսկ ներկայումս ՀՀ կառավարությունը քննարկում է «ՀՀ տարածքում ձեռք բերվող և արտահանվող ապրանքների մասով ԱԱՀ-ի գումար-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		սեցնել մինչև 5 մլրդ դրամով, բայց էապես կխթանեն զբոսաշրջությունը:	Ների վերադարձման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 1998 թվականի հունիսի 17-ի թիվ 372 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, քանի որ ՀՀ կառավարության գործող որոշումը ընդունվել է շուրջ 15 տարի առաջ և կիրառական առումով այն չի համապատասխանում ինչպես միջազգային փորձին: Ընդ որում, գործարար շրջանակները նույնպես հետաքրքրված են նշյալ համակարգի ներդրմամբ և պատրաստակամություն են հայտնել՝ ներգրավվելու անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման գործընթացներում:
222.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	21. Պետք է շեշտակիորեն կրճատել գործունեության թույլտվության գծով տրվող լիցենզիաների քանակը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ արդեն 2014-ին գործող շուրջ 100 լիցենզիաներից կարելի է թողել կեսը, իսկ 2015-ին կրճատել ևս 1/3-ով: Ի՞նչի համար են, օրինակ, տաքսի վարելու և կադաստրում չափագրում իրականացնելու համար լիցենզիաները: Այս փոփոխությունները բյուջեի եկամուտները կարող են պակասեցնել մինչև 3,5 մլրդ դրամով:	Գործարար միջավայրի բարելավման միջոցառումների համատեքստում վերջին տարիներին արդեն իսկ բավականաչափ լիցենզիաներ կրճատվել են, իսկ որոշների մասով պարզեցվել են ընթացակարգերը: Այս առումով, լիցենզիաների ոլորտում իրականացվող քաղաքականությունն արդեն իսկ համահունչ է ներկայացված առաջարկությանը: Միաժամանակ, հայտնում ենք, որ կան գործունեության այնպիսի ոլորտներ, որոնց մասով լիցենզավորման պահանջի կիրառությունը, այնուամենայնիվ արդարացված է: Ընդվորում ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել առաջիկայում անրադառնալ ՀՀ պետական մարմինների կողմից տրվող թույլտվությունների և հավաստումների կրճատմանը և ընթացակարգերի պարզեցմանը:
223.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Բոլոր համայնքների սեփական եկամուտները 35 մլրդ դրամ են: Քանի որ այդ միջոցները բավարար չեն, պետական բյուջեից առ համայնքներ նախատեսված է դոտացիա՝ 79 մլրդ դրամի չափով: Այսինքն, միջին հաշվով համայնքներն իրենց կողմից տնօրինվող	1. Բոլոր համայնքների 2014 թվականի ծախսերի ընդհանուր ծավալը կանխատեսվում է շուրջ 119.4 մլրդ դրամի չափով: Դրանից պետության կողմից համայնքներին պատվիրակված լիազորությունների կատարման ծախսերը կկազմեն շուրջ 30.7 մլրդ դրամ: Համայնքների սեփական լիազորությունների գծով ծախսերը կկազմեն շուրջ 88.7 մլրդ դրամ, որի դիմաց համայնք-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		միջոցների $\frac{3}{4}$-ը ստանում են ֆինանսների նախարարից: Այսպիսով, տեղական ինքնակառավարումը Հայաստանում ֆիկցիա է, քանզի միջոցների մեծ մասը տրամադրում է կենտրոնը: Մենք գտնում ենք, սա անթույլատրելի է: Այս բյուջեով ինչպես և նախկինում սպանվում է տեղական ինքնակառավարումը: Հարկավոր է, որպեսզի ուղղակի հարկերը ևս (եկամտահարկ, շահութահարկ) ամբողջությամբ կամ մասնակիորեն փոխանցվեն տեղական ինքնակառավարման մարմիններին՝ տնտեսավարող (կամ հարկվող) սուբյեկտի գրանցման հասցեով: Առաջարկում ենք, 2014թ սկսած տեղական ինքնակառավարման տրամադրության տակ թողնել եկամտահարկի և շահութահարկի 25%-ը: Գույքահարկի և հողի հարկի գանձման պրակտիկան ցույց տվեց, որ տեղական ինքնակառավարման մարմինները, Երևանի քաղաքապետարանը շատ ավելի լավ են զբաղվում այս “մանր” հարցերով: Իսկապես, ի՞նչ կարիք կա փողերը շրջաններից բերել Երևան և հետո ետ տանել շրջաններ: Չ՛է որ դա սպանել է տեղական ինքնակառավարման ինստիտուտը: Չ՛է որ մեծացնում է կոռուպցիոն ռիսկերը վարչապետի աշխատակազմում և ֆինանսների նախարարությունում:	ների սեփական մուտքերը կանխատեսվում են շուրջ 39.6 մլրդ դրամ: Այսպիսով, համայնքների սեփական լիազորությունների գծով ծախսերի շուրջ 44.6 %-ը կֆինանսավորվի համայնքների սեփական եկամուտների հաշվին: Մյուս կողմից, հաշվի առնելով հանրապետությունում ոչ խոշոր համայնքների անչափ մեծ թիվը և դրանով պայմանավորված նրանցում տեղական ինքնակառավարման խնդիրների լուծման բնագավառում առաջացող զանազան բարդույթները, գտնում ենք, որ համայնքների ֆինանսական բազայի ամրապնդման հարցը նպատակահարմար է դիտարկել համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման գործընթացների շրջանակներում: 2. Ինչ վերաբերում է եկամտահարկի և շահութահարկի 25%-ը 2014թ. սկսած տեղական ինքնակառավարման տրամադրության տակ թողնելու հարցին, ապա նման մասհանումների իրականացումը ներկայումս գտնում ենք ոչ նպատակահարմար, հաշվի առնելով համայնքների միջև այդ հարկերի ոչ համամասնորեն ձևավորումը, պայմանավորված հանրապետությունում տնտեսաարտադրական կարողությունների ու ազգաբնակչության, ըստ համայնքների, տարիների ի վեր ձևավորվող խիստ անհամաչափ տեղաբաշխման հանգամանքներով: Նման պայմաններում մասհանումների համակարգը միտված կլինի սակավաթիվ համայնքների (հիմնականում Երևանի) ֆինանսական բազայի ամրապնդմանը՝ էլ ավելի մեծացնելով համայնքների միջև առկա ֆինանսական անհավասարության աստիճանը: Հարկ է նշել նաև, որ հարկ վճարողի եկամուտների ձևավորման վայրի վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու անհնարինությունը էականորեն դժվարացնում և անարդյունավետ է դարձնում մասհանումների գործընթացը, քանի որ շատ դեպքերում հարկ վճարողի գրանցման վայրը չի համընկնում հարկ վճարողի գործունեության իրականացման վայրերի հետ: Հարկ է նշել, որ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեսքերը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			դեռևս 1998-1999 թվականներին օրենքի պահանջի համապատասխան համայնքների բյուջեներին կատարվում էին եկամտահարկի գումարների մասհանումներ: Սակայն վերը նշված հիմնախնդիրների առկայությունը ցույց տվեց մասհանումների իրականացման բացարձակ անարդյունավետությունը, որից ելնելով էլ օրենքում կատարվեցին համապատասխան փոփոխություններ, որոնց համաձայն՝ համայնքների բյուջեներին եկամտահարկից մասհանումների կատարումը 2000 թվականից դադարեցվեց: Ուստի, հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաև համայնքների բյուջեներին շահութահարկի ու եկամտային հարկի գումարներից մասհանումների գործընթացն ի սկզբանե չվարկաբեկելու նկատառումով, գտնում ենք, որ մասհանումների կատարման հարցին նպատակահարմար է անդրադառնալ վերը նշված հիմնախնդիրների կարգավորման հստակ մեխանիզմների մշակումից հետո: 3. Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարման համակարգին պետական բյուջեից մեծածավալ հատկացումների նախատեսման պարագայում պետական մարմիններում կոռուպցիոն ռիսկերի մեծացման հարցին, ապա տեղեկացնում ենք, որ տրամադրվող միջոցների գերակշիռ մասը՝ ֆինանսական համահարթեցման դոտացիաների տեսքով տրվող միջոցներն են, որոնց հաշվարկման և ըստ համայնքների բաշխման կարգը (նաև բանաձևերը) սահմանված են օրենքով, ինչը նվազագույնի է հասցնում տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինների միջև շփումների անհրաժեշտությունը և հնարավորությունը:
224.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	22. Տնտեսվարող որևէ սուբյեկտ (հիմնադրամներ, կրոնական կազմակերպություններ, ամեն տեսակ բարեգործություն) հարկային արտոնություն չպետք է ունենա: Սրա բացառումը թույլ	Հարկման բազայի ընդլայնումը և գործող հարկային արտոնությունների կրճատումը համահունչ է ՀՀ կառավարության կողմից ներկա փուլում մշակվող ու իրականացվող հարկային քաղաքականության նպատակադրումներին ու ուղղություններին:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		կտա 2013-ին մոբիլիզացնել մինչև 5, իսկ 2014-ին՝ 20 մլրդ դրամ:	Մասնավորապես, ս.թ. հուլիսի 25-ին ՀՀ կառավարությունը հաստատել է Հարկային և մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների վերաբերյալ ուղեցույցը, որով ամրագրված է, որ առաջիկա տարիներին հարկային քաղաքականությունն ուղղված է լինելու հարկման բազայի ամրապնդմանը և գործող արտոնությունների շրջանակի կրճատմանը: Հատկանշական է նաև այն, որ գործող օրենսդրական կարգավորումների ներքո նշված ոչ առևտրային սուբյեկտները օրենքով նախատեսված դեպքերում կրում են հարկային պարտավորություններ (օրինակ՝ հիմնադրամները ընթացիկ տարում ԱԱՀ-ի շեմը գերազանցելու դեպքում օրենքով սահմանված կարգով դառնում են ԱԱՀ վճարողներ, քանի որ օրենսդրությամբ նրանց թույլատրված է կանոնադրությամբ նախատեսված լինելու դեպքում՝ զբաղվել նաև ձեռնարկատիրական գործունեությամբ): Մյուս կողմից, հասարակական, կրոնական կազմակերպությունների կամ հիմնադրամների հարկման մոտեցումները, կարծում ենք, պետք է քննարկել ոչ այնքան հարկային քաղաքականության և պետական բյուջեի եկամուտների ավելացման, որքան քաղաքացիական հասարակության ձևավորմանն աջակցության համատեքստում: Միաժամանակ, հայտնում ենք, որ ներկայացված առաջարկությունների մասով տրված ֆիսկալ գնահատականները հիմնավորված չեն համապատասխան վերլուծություններով ու հաշվարկներով:
225.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	23. Պետք է բացառել ոչ պետական լոտոների, վիճակախաղերի, զառերի գոյությունը: Նման ինստիտուտների շահագործման բացառիկ իրավունքը պետք է տրվի ՀՀ Ֆինանսների նախարարությանը: Գործող տոտալիզատորները, խաղային (մշակույթային) դրույքներ կա-	1. Անհասկանալի է այն մոտեցումը, որ մասնավոր հատվածի կազմակերպությունները չպետք է ներգրավված լինեն լոտոների, տոտալիզատորների կամ խաղատների գործունեության ոլորտում: Եթե խնդիրը բավարար վերահսկողության ապահովումն է, ապա գործունեության նշյալ տեսակները նախ ենթակա են լիցենզավորման և բացի այդ, լիազոր մարմինը մշտական հսկո-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		տարելու հաստատությունները պետք է գործեն պետության ներկայացուցչի հսկողության տակ: Բոլոր խաղատներում և նմանատիպ ձեռնարկներում պետությունը պետք է ունենա իր ներկայացուցիչը: Խաղատների նկատմամբ պետական հսկողության սահմանումը թույլ կտա լրացուցիչ հավաքագրել 6 մլրդ դրամ:	դություն է սահմանում նշյալ ոլորտներում գործող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ: 2. 2014թ. հունվարի 1-ից խաղային բնագավառում հաստատագրված վճարների և պետական տուրքի մոտեցումը փոխարինվում է մեկ պետական տուրքի վճարման մոտեցմամբ՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույքաչափերով: Հետևաբար յուրաքանչյուր խաղատանը պետության ներկայացուցիչ ունենալու առաջարկութնը գտնում ենք անպատահարմար, քանի որ դա ոչ թե կնպաստի լրացուցիչ 6 մլրդ դրամ հավաքագրելուն, այլ ընդհակառակը կհանգեցնի ՀՀ պետական բյուջեի միջոցների լրացուցիչ ծախսերի առաջացմանը, հաշվի առնելով այն, որ անհրաժեշտ կլինեն լրացուցիչ հաստիքներ և այլն: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վերահսկողության (այդ թվում նաև Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից) և լիցենզավորման գործուն մեխանիզմների ներդրման նպատակով իրականացվում են օրենսդրական դաշտի կատարելագործման աշխատանքներ (իրավական ակտերի նախագծերը դրված են շրջանառության մեջ), որոնց համաձայն սահմանվում են տեխնիկական նոր չափանիշներ խաղատների և շահումով խաղերի կազմակերպիչների համար: Մասնավորապես՝ ծայնագրող տեսախցիկային համակարգերի պարտադիր պահանջներ, խաղային ավտոմատների խաղային ծրագրերի սերտիֆիկացման և կոդավորման մեխանիզմների, ինչպես նաև խաղային ավտոմատներում տեխնիկական սարքի առկայության և կիրառման պահանջ, որը հնարավորություն կտա լիազոր մարմնին ճշտելու խաղերի ընթացակարգը և պահանջների պահպանման ճշտությունը:
226.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր	24. Պետական բյուջեում բացի փաստացի բացարձակ ծախսերից մի քանի ոլորտների	Գիտության ոլորտի ֆինանսավորման ավելացումն իրականացվում է ըստ «Գիտության և գիտատեխնիկական գործունեության

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Հրանտ Բագրատյան	(գիտություն, երեխաների ծնդաբերության հետ կապված նպաստներ, արտաքին պարտք) համար սահմանել նաև ծախսերի լիմիտ հասկացությունը. ոլորտին թույլատրվում է բյուջեի ծախսերը արդյունավետորեն իրացնելու դեպքում օգտվել լիմիտից և կատարել լրացուցիչ ծախսեր: Մասնավորապես, գիտության ծախսերի լիմիտը սահմանել ՀՆԱ 1%-ի չափով՝ 40 մլրդ դրամ:	մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով՝ «բյուջեի եկամտային մասի աճին համամասնորեն ավելացվող գումարից ոչ պակաս հատկացումների» չափով, իսկ երեխաների ծննդաբերության հետ կապված նպաստների համար սահմանված են կոնկրետ նպաստի չափեր, ըստ որում, դրանք տարբերակված են այնպես, որ խրախուսեն ծննդաբերության աճը, իսկ առանձին ծախսերի համար լիմիտների սահմանումը գտնում ենք ոչ նպատակահարմար, քանի որ նշված ծրագրերով անհրաժեշտության դեպքում լրացուցիչ միջոցներ կարող են հատկացվել նաև ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից: ՀՀ կառավարության արտաքին պարտքը մեծամասամբ (բացառությամբ երկու վարկային ծրագրի և արտարժույթով պետական պարտատոմսերի, որոնք 31.10.2013թ. դրությամբ կազմում են ՀՀ կառավարության արտաքին պարտքի 21.5 տոկոսը) բաղկացած է ՀՀ միջազգային վարկային կամ փոխառության պայմանագրերով ստանձնած պարտավորություններից և համաձայն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի՝ եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Միաժամանակ Պետական պարտքի մասին օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված է, որ պետական պարտքի մարման և սպասարկման ենթակա գումարները վճարվում են ամբողջությամբ և ժամանակին: Եթե տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա պետական պարտքի մարման և սպասարկման ենթակա վճարումները կարող են իրականացվել առանց սահմանափակման՝ արտահայտվելով այդ տարվա պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:
227.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր	25. Բացառել ՀՀ 2014թ պետական բյուջեի մասին օրենքի հոդված 11-ի 4-րդ և 5-րդ	Առաջարկությունը չի ընդունվել: 1. «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Հրանտ Բագրատյան	ենթակետերը:	ձայն հիմնադրամ է համարվում քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպությունը, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական և (կամ) այլ հանրագույն նպատակներ: «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ կետի նպատակն է ՀՀ կառավարության սահմանած դեպքերում (հիմնադրամների նկատմամբ կիրառվող չափորոշիչները սահմանված են ՀՀ կառավարության 08.06.2006թ N 797-Ն որոշմամբ) նպաստավոր պայմաններ ստեղծել հիմնադրամների գործունեության համար՝ պետական սեփականություն համարվող գույքը հիմնադրամներին վարձակալության հանձնելիս՝ հաշվարկված վարձակալական վճարները հիմնադրամների տնօրինությանը որպես Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրամներում կատարվող կամավոր գույքային վճար թողնելու միջոցով: Նշված կետը սահմանում է նաև նման դեպքերում բյուջետային ձևակերպումների կատարման առանձնահատկությունները: 2. ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 5-րդ կետի նպատակն է պայմաններ ստեղծել բյուջետային տարվա առանձին հատվածներում բյուջետային ռեսուրսների ժամանակավոր բնույթ կրող անբավարարության առաջացման դեպքերում այդ տարվա պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված բյուջետային ելքերի անխափան ֆինանսավորման համար: Մասնավորապես, այդ նպատակով ժամանակավորապես՝ մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ը վերականգնելու պայմանով, առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) ստացված միջոցների կուտակման նպատակով բաց-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			ված գանձապետական միասնական հաշվի սեփականաշնորհման հատուկ ենթահաշվում (արտաբյուջետային հաշվում) միջոցների առկա մնացորդի՝ պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված բյուջետային ելքերի ֆինանսավորմանը չուղղված գումարը ներգրավելու միջոցով:
228.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	26. Բյուջետային ոլորտի աշխատողների աշխատավարձը բարձրացնել հավասարաչափ՝ եռամսյակներով:	ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերի կարգավորման նպատակով նախատեսվում է ներդնել մեկ միասնական համակարգ, ըստ եռամսյակների աշխատավարձերի հավասարաչափ բարձրացումը կխաթարի համակարգի ամբողջական ներդրման հնարավորությունը, որը նպատակահարմար չէ:
229.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	27. Առաջարկվում է բյուջետային ուղերձում առանձին աղյուսակով ցույց տալ 2014թ սպասվող գնաճը և ըստ ոլորտների անվանական ու իրական աշխատավարձերի շարժը:	Մասամբ ընդունվել է, կներկայացվեն ընդհանուր տնտեսության գծով կանխատեսումներ: Առաջարկի կապակցությամբ ներկայացնում ենք 2008-2012թթ. և 2013 ու 2014 թվականների սպասվող միջին գնաճը և անվանական ու իրական աշխատավարձերի շարժը: Այսպես, նշյալ ժամանակահատվածում միջին գնաճի ինդեքսի դինամիկան. 2012թ.՝ 102.6, 2013թ. սպասվողը՝ 106.0, 2014թ. սպասվողը՝ 105.5: Անվանական աշխատավարձերի շարժի դինամիկան հետևյալն է 2012թ.՝ 104.7, 2013թ. սպասվողը՝ 108.7, 2014թ. սպասվողը՝ 109.9: Իրական աշխատավարձերի շարժի դինամիկան հետևյալն է 2012թ.՝ 102.0, 2013թ. սպասվողը՝ 102.5, 2014թ. սպասվողը՝ 104.2:
230.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	28. Կոնկրետ տողով միջոցներ նախատեսել սիրիահայերին օգնելու, հայրենիք տեղափոխվելու, նրանց բնակարաններով ու աշխատանքային պայմաններով ապահովելու, հայրենիքում նոր կյանք սկսելու համար դրամագլխով	«Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին » ՀՀ օրենքի նախագծով ՀՀ սփյուռքի նախարարությանը «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակներում «Սփյուռքահայերի ինտեգրման ծրագիր» միջոցառման իրականացման համար նախատեսված է 10.0 մլն

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		օգնելու նպատակներով և այլն:	դրամ («Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 1 հավելվածի աղյուսակ N 16): Բացի այդ, առանձին գերատեսչությունների (ՀՀ կրթության և գիտության, ՀՀ առողջապահության, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և այլ) կողմից իրականացվող ծրագրերում ներառված են նաև սիրիահայերը: Միաժամանակ, սիրիահայերի բնակապահովման հարցին աջակցելու նպատակով ընդունվել է ՀՀ կառավարություն 2013 թվականի հունիսի 6-ի N656-Ն որոշումը, որի համաձայն՝ Սիրիայի Արաբական Հանրապետությունում տիրող իրավիճակի հետևանքով հանրապետությունում բնակվող Սիրիայի Արաբական Հանրապետության ազգությամբ հայ քաղաքացիների համար Աշտարակ քաղաքում «Նոր Հալեպ» թաղամաս հիմնելու նպատակով հատկացվել է 4.8 հա մակերեսով հողամաս: Դրա հետ մեկտեղ, հիմնվող «Նոր Հալեպ» թաղամասում կառուցվող բնակելի տների (բնակարանների) հատկացման հետ կապված հարցերը (հատկացման պայմանները, առաջնահերթության որոշման և այլն) կարգավորելու նպատակով մշակվել և քննարկման փուլում է գտնվում ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծը:
231.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բազրադյան	29. Առաջարկվում է կոնկրետ միջոցներ հատկացնել պրոֆտեխկրթության մասնակի վերականգման ուղղությամբ: Դրա հետ կապված կոնկրետ նշել քանի ՊՏՈՒ և ի՞նչ մասնագիտություններ են բացվելու:	ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն» դասի գծով նախատեսվել է 2854.3 մլն դրամ, որը ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 292.2 մլն դրամով կամ 11.4 տոկոսով՝ պայմանավորված ինչպես աշխատավարձերի բարձրացմամբ, այնպես էլ սովորողների թվաքանակի 264-ով ավելացմամբ (2014 թվականին սովորողների թիվը կկազմի 7885) և սակագների փոփոխություններով: 2005 թվականին «Նախնական մասնագիտական (արհեստա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			գործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո վերաբացվեցին արհեստագործական ուսումնարանները: 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ծրագրեր իրականացվում են 56 պետական ուսումնական հաստատություններում (25 ՆՄՈՒՀ, 25 ՄՄՈՒՀ, 5 կրթահամալիր, 1 ԲՈՒՀ): 2006թ. հունվարի 12-ի N 73-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատել է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը՝ ըստ կրթական ծրագրերի, ուսուցման հիմքի, ձևի, տևողության և որակավորումների, որոնք ներառում են արհեստագործական կրթության շուրջ 100 մասնագիտություն՝ շուրջ 350 որակավորմամբ, որոնցից ներկայումս, ելնելով աշխատաշուկայի պահանջարկից, ուսուցանվում է շուրջ 55 մասնագիտություն:
232.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	30. Առաջարկում ենք 2014-ի հունվարի 1-ից նվազագույն աշխատավարձը սահմանել 75 հազ դրամ, իսկ միջին կենսաթոշակը միջին բյուջետային աշխատավարձի 30 տոկոսը:	Նվազագույն աշխատավարձի բարձրացումը համահունչ է ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությանը: ՀՀ կառավարության ծրագրի իրականացմամբ 2012-2017 թվականների ընթացքում նախատեսվում է նվազագույն աշխատավարձի մակարդակի առնվազն կրկնապատկում՝ հասցնելով մինչև 70000 դրամի: Դրա հետ մեկտեղ, պետք է նկատի ունենալ մի շարք հանգամանքներ՝ ՀՀ պետական բյուջեի հնարավորությունները և ծրագրի իրականացման փուլայնությունը: Այդ տեսանկյունից օրենքի նախագծով առաջարկվող նվազագույն ամսական աշխատավարձը 2014 թ. հունվարի 1-ից 75000 դրամ սահմանելու դեպքում այն ՀՀ 2014-2016 թթ միջնաժամկետ ծախսերի ծրագրով ամրագրված աշխատավարձերի բարձրացման քաղաքականությանը համապատասխան կիրարկելու դեպքում արդեն 2014 թվականին

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			կհանգեցնի մոտավորապես 155.0 մլրդ դրամ լրացուցիչ ծախսերի անհրաժեշտության, ինչն իրատեսական չէ: Բացի այդ՝ առաջարկվող նվազագույն ամսական աշխատավարձի աճի նման բարձր տեմպերը կգերազանցեն տնտեսության հնարավոր առավելագույն արտադրողականության աճի և գնափ գումարային տեմպերին (8-10 տոկոս), որի դեպքում կարող է կտրուկ բարձրանալ գործազրկության մակարդակը՝ հատկապես արտադրողականության ցածր մակարդակ ունեցող տնտեսության ճյուղերում, կամ կբարձրանա աշխատողների չգրանցման դեպքերի թիվը: Արտադրողականության համեմատ աշխատավարձերի ավելի բարձր տեմպերով աճը կհանգեցնի գնաճի ավելացման, ինչը ոչ միայն համահունչ չի լինի, այլ նաև խոչընդոտ կհանդիսանա միջնաժամկետ հատվածում 5-7 տոկոս տնտեսական աճի ապահովման համար: Ինչ վերաբերում է միջին կենսաթոշակը միջին բյուջետային աշխատավարձի 30 % հավասար սահմանելու վերաբերյալ առաջարկությանը, ապա հարկ է նշել, որ կենսաթոշակային ոլորտում ՀՀ կառավարության կողմից վարվող քաղաքականությունն ընդհանուր առմամբ ուղղված է կենսաթոշակառուների շրջանում աղքատությունը նախ՝ նվազեցնելու, ապա իսպառ բացառելու ուղղությամբ շարունակական ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև կենսաթոշակների շարունակական աճի ապահովմանը, որի արդյունքում ակնկալվում է միջին աշխատանքային կենսաթոշակի չափը հասցնել աղքատության գծի առնվազն 125 տոկոսին: Այս առումով իրականացվող ծրագրային խնդիրների հնարավոր լուծումները պետք է դիտարկվեն իրատեսական ֆինանսական ռեսուրսներով ապահովվածության դաշտում: Այս մոտեցմամբ, ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող օրենքների նախագծերի փաթեթի շրջանակներում ՀՀ Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվել աշխատանքային

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			և զինվորական կենսաթոշակների հաշվարկման սկզբունքների (բանաձևերով արտահայտված) փոփոխությունների վերաբերյալ ՀՀ օրենքների նախագծեր: Միաժամանակ ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թվականի հունվարի-սեպտեմբերին» ամսական զեկույցի տվյալների՝ ընթացիկ տարվա առաջին 9 ամիսների պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 116.5 հազ. դրամ: Վերջինիս նկատմամբ կիրառելով 2014 թ. համար պետական (բյուջետային) աշխատավարձի աճը (շուրջ 23%), այն կկազմի 143.3 հազ. դրամ, որի նկատմամբ կենսաթոշակի միջին ամսական չափը կազմում է 25.2 %, իսկ 30% հասցնելու համար այն անհրաժեշտ է ավելացնել շուրջ 7.0 հազ. դրամով (36.1 հազ. դրամ) կամ լրացուցիչ շուրջ 38.0 մլրդ դրամ, որը նախատեսել հնարավոր չէ, ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
233.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Գազի գնի բարձրացման հետևանքները մեղմելու համար առաջարկում ենք հանրապետությունով մեկ ստեղծել գազի, ջրի և այլն սպառման կոոպերատիվներ:	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը 16.10.2013թ. N01/19.2/4142-13 գրությամբ պատասխանել է ՀՀ ԱԺ պատգամավոր Հ. Բագրատյանին՝ գտնելով ոչ նպատակահարմար գազի գնի հարաբերական նվազեցման նպատակով սպառողներին կոոպերատիվներում միավորելու վերջինիս առաջարկությունը, քանի որ այն չի բխում գործող իրավակարգավորման պահանջներից և խնդրահարույց է ոչ միայն սպառողների իրավունքների իրացվելիության, այլ նաև գազամատակարարման գործընթացի հստակ և անվտանգ կանոնակարգման իմաստով:
234.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Առաջարկում ենք ՀՀ Նախագահի, Կառավարության անդամների և ԱԺ աշխատավարձերը բարձրացնել այսօր, բայց գործողության մեջ	ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերի կարգավորման նպատակով նախատեսվում է ներդնել մեկ միասնական համակարգ, որը

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		դնել 2017թ հունիսի մեկից, իսկ ՀՀ Նախագահին՝ 2018 մայիսի 1-ից: Իշխանությունն իրավունք չունի իր աշխատավարձը բարձրացնել: Գործող իշխանությունը պետք է բարձրացնի հաջորդ իշխանության աշխատավարձը: Ընդմադիր պատգամավորների աշխատավարձն այդ նույն որոշմամբ (օրենքով) պետք է բարձացվի 2014թ հունվարի մեկից:	վերաբերում է ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում ստացող կազմակերպությունների բոլոր աշխատողներին և դրանց մի մասի աշխատավարձի բարձրացման հետաձգումը գտնում ենք ոչ նպատակահարմար:
235.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Բացարձակապես անընդունելի է մատակարարներին սուբսիդավորելու ընթացակարը: Նման գործողություններ մենք տեսնում ենք գյուղացիական տնտեսություններին կամ երաուղու ուղևորափոխադրումների պարաաում: Բոոր այս սուբսիդիաները փողի կամ սերտիհատների տեսքով պետք է անմիջականորեն տալ սպառողներին՝ գյուղացիական տնտեսություններին, ուղևորներին:	Երկաթուղու ուղևորափոխադրումների սուբսիդավորման դադարեցման դեպքում Հարավկովկասյան երկաթուղին կդադարեցնի ուղևորափոխադրումները, որի արդյունքում զգալի տնտեսական ու սոցիալական խնդիրներ կառաջանան: Մասնավորապես, նկատի ունենալով, որ երկաթուղուց առավելապես օգտվում է բնակչության անապահով խավը. Ինչպես նաև այն, որ երկաթուղին նպաստում է նաև գյուղատնտեսական մթերքների փոխադրումների արդյունավետ իրականացմանը, սուբսիդիայի դադարեցումը՝ այն սպառողներին տրամադրելու պարագայում, գտնում ենք ոչ նպատակահարմար: Պետք է հաշվի առնել, որ ուղևորափոխադրումների դադարեցման դեպքում, զգալիորեն դժվար կլինի հետագայում այն վերականգնելը, քանի որ դրանց վերականգնման համար անհրաժեշտ կլինեն շատ ավելի ծախսումներ, քան դրանք տրամադրվում են սուբսիդիայի տեսքով: Ներկայում գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերի նպատակն է պետական աջակցության ուղղորդումը անմիջապես գյուղմթերքի արտադրությանը, այլ ոչ թե ուղղակիորեն գյուղացիական տնտեսությունների սուբսիդավորմանը: Բացի այդ թե պարարտանյութի և թե դիզելային վառելիքի սուբսիդավորման մեխանիզմների առավելություններից մեկն այն է, որ գյուղացիական տնտեսությունները ազատվում են պարար-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեսքով կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			տանյութի և դիզելային վառելիքի շուկայում գների հնարավոր տատանումներից (փողի կամ սերտիֆիկատների տեսքով սուբսիդավորման դեպքում որոշման ընդունումից մինչև փաստացի տրամադրումն ընկած ժամանակահատվածում գնային տատանումները կարող են փոքրացնել տրամադրվող աջակցության արդյունավետությունը):
236.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	31. 2013-ին անցում կատարել վճարովի զինվորական ծառայության: Արդեն 2013-ի մայիսի զորակոչիկների մի մասի համար սահմանել 2012-ի փաստացի ձևավորված միջին բյուջետային աշխատավարձին հավասար վճարումներ: Վճարումներ կատարելուն զուգընթաց քայլեր ձեռնարկել պայմանագրային զինվորական ծառայության համակարգի աստիճանական ներդրման ուղղությամբ:	Պայմանագրային զինվորական ծառայության համակարգը ՀՀ զինված ուժերում ներդրված է, և նախատեսվում է յուրաքանչյուր տարվա ընդհանուր թվակազմի մեջ պայմանագրային շարքային զինծառայողների թվաքանակի ավելացում մինչև 10%-ի չափով: Միաժամանակ ներդրված է պայմանագրային զինվորական ծառայության սերժանտական (կրտսեր հրամանատարական) ինստիտուտը, որի գծով նույնպես նախատեսվում է շրջանակների ընդլայնում:
237.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	32. Վերանայել ԿԲ-ի 28 մլրդ դրամի ներդրումների ծրագիրը: Սրա հաշվին առնվազն 20 մլրդ դրամով ավելացնել պետական բյուջեի եկամուտները:	Ազգային ժողովի կենտրոնական բանկի 2014 թվականի ծախսերի նախահաշվի և կապիտալ ներդրումների ծրագրով նախատեսված է իրականացնել 28 մլրդ դրամի կապիտալ ներդրումների ու հիմնական միջոցների ձեռքբերման ծրագիր: Նշված գումարի 82 տոկոսը՝ մոտ 23 մլրդ դրամը, նախատեսված է ներդնել այլ իրավաբանական անձանց, մասնավորապես՝ «Ազգային հիփոթեքային ընկերություն» և «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ կապիտալում: Նշված ներդրումները նպատակաուղղված են Հայաստանի Հանրապետությունում հիփոթեքային շուկայի զարգացմանը: Դրանց հաշվին առավել շատ երիտասարդ ընտանիքներ կարող են օգտվել պետական վարկավորման ծրագրերից, ինչը կարևոր սոցիալական նշանակություն ունի երկրի համար:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			Ինչ վերաբերվում է պարոն Բագրատյանի այն պնդմանը, որ ներդրումների կրճատման հաշվին հնարավոր էր ավելացնել պետական բյուջեի եկամուտները, ապա նշենք, որ դրանք իրականացվում են էմիսիոն միջոցների հաշվին: Իրավաբանական անձանց կապիտալում ներդրումների ծրագրի իրականացումը չի ազդում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական արդյունքի վրա, հետևաբար ներդրումների կրճատումը չի կարող հանգեցնել ինչպես Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, այնպես էլ պետական բյուջեի եկամուտների ավելացմանը:
238.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)	Դեռևս 2012թ.-ին իմ կողմից արվել է առաջարկություն ՀՀ 2013թ.-ի պետական բյուջեի ծրագրում ընդգրկելու Ավշար-Նոյակերտ, Ավշար-Այգավան-Եղեգնավան միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքները: Կառավարության կողմից առաջարկվել է հարցը քննարկել 2014-2016թթ. ՄԺԾԾ շրջանակներում: Արարատի մարզում միջհամայնքային ճանապարհները ներկայումս գտնվում են անբարվոք վիճակում, որը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակիչների համար: Տվյալ դեպքում խիստ կարևոր է Ավշար-Նոյակերտ, Ավշար-Այգավան-Եղեգնավան միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների իրագործումը, որը ներկայումս չի ապահովում նույնիսկ անցանելիության համար նվազագույն պահանջները: Տվյալ համայնք-	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		ների համար այն կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում և կենսական նշանակություն ունի նրանց միջև կապ հաստատելու և ներկայումս ստեղծված ճանապարհային բարդություններից խուսափելու տեսանկյունից: Կարևորելով Արարատի մարզի մի շարք համայնքներում սոցիալ-տնտեսական ենթակառուցների վերանորոգման, ինչպես նաև վերը նշված համայնքների միջև առկա ճանապարհային հատվածի բարեկարգման խիստ անհրաժեշտությունը՝ խնդրում եմ 2014թ. պետական բյուջեի նախագծում ներառել ՀՀ Արարատի մարզի Ավշար-Նոյակերտ, Ավշար-Այգավան-Եղեգնավան միջհամայնքային ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների իրականացման ծրագիրը: Ծրագրի արժեքը կազմում է 50,000.398 հազ. ՀՀ դրամ: Նախագծահաշվարկային փաստաթղթերն առկա են:	
239.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)	Դեռևս 2012թ.-ին իմ կողմից կառավարությանն արվել է առաջարկություն բյուջեի նախագծում ընդգրկելու Եղեգնավան և Այգավան համայնքների ճանապարհների ասֆալտապատման աշխատանքները: Կառավարության կողմից առաջարկվել է հարցը քննարկել 2014-2016թթ. ՄԺԾԾ շրջանակներում: Արարատի մարզի Եղեգնավան-Այգավան միջհամայնքային ճանապարհը ներկայումս գտնվում է անմխիթար և անանցանելի	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		վիճակում: Այն կենսական նշանակություն ունի համայնքների համար և հանդիսանում է միջ-համայնքային կարևորագույն ճանապարհներից մեկը և միաժամանակ առավել կարճ ճանապարհ է բացում թե համայնքների միջև, և թե դեպի ք. Վեդի, որտեղ տեղակայված են մի շարք պետական և համայնքային կառույցներ: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ ճանապարհը ներկայումս գտնվում է անանցանելի վիճակում և համայնքների համար ունի կենսական նշանակություն՝ խնդրում եմ 2014թ. պետական բյուջեի նախագծում ներառել՝ ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան-Այգավան միջհամայնքային ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների իրականացման ծրագիրը: Ծրագրի արժեքը կազմում է 174,158.974 հազ. ՀՀ դրամ: Նախագծահաշվարկային փաստաթղթերն առկա են:	
240.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)	Արարատի մարզի Սիսավան համայնքն ունի մոտ 2500 բնակչություն, 3-5 տարեկան 128 երեխա, որոնք մանկապարտեզ հաճախելու կարիք ունեն: Խնդիրը կապված է հենց նրա հետ, որ համայնքը չունի մանկապարտեզ և այդ երեխաները որևէ կերպ չեն կարող օգտվել մանկապարտեզ հաճախելու հնարավորությունից: Բնակիչներից միայն 13 ընտանիք է կարողացել իրենց երեխաներին տեղավորել այլ համայնքների մանկապարտեզներ: Հրատապ հարց է դարձել, որ համայնքն ունե-	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Արարատի մարզի Սիսավան համայնքի մանկապարտեզի կառուցման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		նա թեկուզև փոքր մանկապարտեզ և կարողա- նա սպասարկել բնակիչներին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ հարցի լուծման համար պահանջվում է անհա- պաղ պետական օժանդակություն, ինչպես նաև կարևորելով Սիսավան համայնքի մանկա- պարտեզ ունենալու խիստ անհրաժեշտությու- նը՝ խնդրում եմ 2014թ. պետական բյուջեի նախագծում ներառել՝ ՀՀ Արարատի մարզի Սիսավան համայնքում մանկապարտեզ կառուցելու աշխատանքների իրականացման ծրագիրը: Ծրագրի արժեքը կազմում է 145.517.82 հազ. ՀՀ դրամ: Նախագծահաշվարկային փաս- տաթղթերն առկա են:	
241.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)	Դեռևս 2010թ.-ից իմ կողմից կառավարու- թյանն արվել են առաջարկություններ՝ բյուջեի նախագծում ընդգրկելու Ուրցաձորի միջնա- կարգ դպրոցի վերակառուցման աշխատանք- ների ծրագիրը: Ի պատասխան կառավարու- թյունը խոստացել է քննարկել հարցը ՀՀ 2012- 2014 և այնուհետև 2014-2016 թվականների ՄԺԾԾ շրջանակներում: Ցավոք պետք է նշել, որ տվյալ հարցի հետ կապված որևէ որոշում դեռևս չի կայացվել: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դպրոցի համար վերը նշված աշխատանքների իրագործումն ունի կենսական նշանակություն և պահանջում է հրատապ լուծում՝ խնդրում եմ 2014թ. պետական բյուջեի նախագծում	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պե- տական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտ- քերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Արարատի մարզի Ուրցաձոր համայնքի դպրոցի հիմնանո- րոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզա- կան օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28- 17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		ներառել՝ ՀՀ Արարատի մարզի գ. Ուրցաձորի միջնակարգ դպրոցի վերակառուցման աշխատանքների ծրագիրը: Առաջարկության իրացման արդյունքում հնարավոր է նաև իրականացնել շարունակական ֆինանսավորման մեխանիզմ: Ծրագրի արժեքը կազմում է 40,254.24 հազ. ՀՀ դրամ: Նախագծահաշվարկային փաստաթղթերն առկա են:	
242.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)	2012թ.-ին հանդես եմ եկել առաջարկությամբ՝ 2013թ. պետական բյուջեի ծրագրում ներառելու Վեդի քաղաքի թիվ 2 մանկապարտեզի տանիքի վերանորոգման աշխատանքների իրականացման ծրագիրը: 2013թ. պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից ելնելով՝ կառավարությունը չի ընդունել առաջարկությունը: Խնդիրը կապված է Արարատի մարզի Վեդի քաղաքի թիվ 2 մանկապարտեզի հետ, որի տանիքը գտնվում է ծայրահեղ վատ վիճակում և ակնհայտ է, թե անձրևաջրերի ինչպիսի հոսք կարող է տեղի ունենալ տվյալ մանկապարտեզում: Տվյալ մանկապարտեզը սպասարկում է մեծ թվով ընտանիքների երեխաներին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ հարցի լուծման համար պահանջվում է անհապաղ պետական օժանդակություն՝ խնդրում եմ 2014թ. պետական բյուջեի նախագծում ներառել:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		ռել' ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի թիվ 2 մանկապարտեզի տանիքի վերանորոգման աշխատանքների իրականացման ծրագիրը: Ծրագրի արժեքը կազմում է 39,993.50 հազ. ՀՀ դրամ: Նախագծահաշվարկային փաստաթղթերն առկա են:	
243.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Թևան Պողոսյան (122 ընտրատարածք) Ալեքսանդր Արզումանյան (125 ընտրատարածք) Սամվել Ֆարմանյան (002 ընտրատարածք) Խաչատուր Քոքոբեյլան (123 ընտրատարածք) Արծվիկ Մինասյան (120 ընտրատարածք) Էդմոն Մարության (030 ընտրատարածք) Նաիրա Զոհրաբյան (084 ընտրատարածք) Էլինար Վարդանյան (087 ընտրատարածք) Ստեփան Մարգարյան (088 ընտրատարածք) Արամ Մանուկյան (111 ընտրատարածք) Նիկոլ Փաշինյան (114 ընտրատարածք)	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կողմից իրականացվող «Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» ծրագրի համար նախատեսված գումարները ավելացնել 1.5 միլիարդ դրամով: 2014թ. բյուջեում գիտության թեմատիկ ֆինանսավորման 1 միլիարդ 500 միլիոն դրամով ավելացման հաշվարկը կատարվել է հետևյալ տրամաբանությամբ. - ավելացնել գործող գիտական թեմատիկ դրամաշնորհների քանակը ներկայումս նախատեսվածի համեմատ ավելացնել 100-ով, - ավելացնել յուրաքանչյուր դրամաշնորհով հատկացվող գումարի չափը, - թեմաներում ներգրավված աշխատողների աշխատավարձը (ներկայիս՝ 70 000 դրամը) հավասարեցնել քաղաքացիական ծառայողների առաջատար պաշտոնների 1-ին ենթախմբի համար նախատեսված աշխատավարձի չափին, - թեմատիկ դրամաշնորհներում 4 գիտաշխատողի փոխարեն ներգրավել 5 գիտաշխատող,	- Ներկայումս պետական բյուջեից ֆինանսավորվում է 264 թեմա, որից 159-ը՝ թեմատիկ ֆինանսավորման շրջանակում, 31-ը՝ երիտասարդ գիտաշխատողների աջակցության համար, 25-ը՝ ասպիրանտների անհատական աջակցության համար, 49-ը՝ միջազգային համագործակցության ծրագրերով (հայ-ֆրանսիական, հայ-գերմանական, հայ-ռուսական և հայ-բելառուսական): - Բնական, բժշկական, գյուղատնտեսական գիտությունների և ճարտարագիտության ու տեխնոլոգիաների բնագավառների համար մեկ թեմայի ֆինանսավորման առավելագույն չափը կազմում է 16 000 հազար դրամ, իսկ հայագիտության և հումանիտար ու հասարակական գիտությունների բնագավառների համար այն կազմում է 12 000 հազար դրամ, ինչը համապատասխանում է միջազգային չափանիշներին և նախորդ տարիների փորձը ցույց է տվել, որ այդ գումարի շրջանակներում հնարավոր է իրականացնել գիտահետազոտական խմբի սարքավորումների արդիականացում և գիտական գործուղումներ (բացի աշխատավարձից): - Թեմաներում ընդգրկված գիտաշխատողների միջին հաշվարկային աշխատավարձը 2013-2014թթ. կազմում է 100 հազար դրամ: - Ներկայումս բնական, բժշկական, գյուղատնտեսական գիտությունների և ճարտարագիտության ու տեխնոլոգիաների բնագավառների թեմաներում ընդգրկված կատարողների առավելագույն թիվը 5-ն է, իսկ հայագիտության և հումանիտար ու հասարակական գիտությունների թեմաներում ընդգրկված կատարողների առավելագույն թիվը 3-ն է:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		այդ թվում՝ մեկը երիտասարդ: Նշված 4 կետերի հաշվարկների իրականացման արդյունքում ստացվում է վերոնշյալ թիվը՝ 1 միլիարդ 500 միլիոն դրամ: Կրկնապատկելով «Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» ծրագրին հատկացվող գումարների չափը, դրանով Հայաստանի Հանրապետությունը կարևոր նախապայման կստեղծի ապագայում Հայաստանում գիտական առաջընթացի զարգացման եւ տարածաշրջանային գործընթացներին ըստ արժանավույնս մասնակցելու տեսանկյունից: Որքան շատ լինեն թեմատիկ հետազոտությունների թիվը Հայաստանում, այնքան ավելի հեշտ կլինի երկրի տնտեսության կառավարման գործում գիտական պոտենցիալի ներգրավվումը, որն իր հերթին կնպաստի տնտեսության կառավարման արդյունավետության բարձրացմանը: Այս ծրագրի իրականացումը, գումարների արդարացի բաշխման դեպքում, էական փոփոխություն կմտցնի գիտնականների սոցիալական վիճակի մեջ, կնպաստի կառավարության գործողությունների նկատմամբ վստահության աճին և բնականաբար կդառնա գիտության ֆինանսավորման իմաստավորված ավելացման ցայտուն օրինակ:	րական գիտությունների բնագավառների թեմաներում գիտաշխատողների առավելագույն թիվը 4-ն է: Ընդ որում, երկու դեպքում էլ կատարողներից մեկը պետք է լինի երիտասարդ (մինչև 35 տարեկան), որը պարտադիր պայման է հանդիսանում Գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված բոլոր մրցույթների հրավերների դեպքում: Լրացուցիչ միջոցներ հատկացնել հնարավոր չէ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
244.	ՀՀ Ազգային ժողովի	ՀՀ 2014 թ. պետական բյուջեում նախատեսել	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	պատգամավոր Լյովա Խաչատրյան (012 ընտրատարածք)	216 մլն դրամ՝ Հարթավան-Եղվարդ հանրապետական նշանակության ճանապարհի Երնջատապ-Բուժական 6 կմ-անոց հատվածի ասֆալտապատման համար: Նշված հատվածի ասֆալտապատումը 70 կմ-ով կկրճատի Արթիկից Գեղարքունիքի և Կոտայքի մարզեր գնացող, քար տեղափոխող մեքենաների և տրանսպորտային այլ միջոցների ճանապարհը, բեռնաթափելով Աշտարակ-Երևան-Սևանի մայրուղի համապատասխան հատվածը: Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմված են: Եթե 2014 թվականի բյուջեում հնարավոր չլինի նախատեսել նշված գումարը, խնդրում եմ որպես այլընտրանք քննարկել առնվազն 14,5 մլն դրամ՝ հատկացնելու մասին հարցը՝ նշված ճանապարհի այդ հատվածը երթևեկելի դարձնելու աշխատանքների աշխատանքների համար:	պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
245.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Էդմոն Մարուքյան	Նախորդ տարի «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացրել էի առաջարկություն, որպեսզի Վանաձոր քաղաքի Ստեփան Շահումյանի անվան թիվ 6 դպրոցի տանիքի ու սանհանգույցների վերանորոգման համար տրամադրել 40 մլն դրամ, սակայն կառավարությունը պատասխանել էր, որ խնդրին անդրադարձ կկատարվի 2014-2016	ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 6 դպրոցի հիմնանորոգման աշխատանքները ներառված են ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման I փուլի աշխատանքների ցանկում: Մարզերի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման շրջանակներում դպրոցի վերանորոգման նպատակով ՀՀ կառավարության 07.02.2013թ-ի N130-Ն որոշմամբ ՀՀ 2013թ-ի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարու-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		թվականներին: Այս տարի 1978 թվականից կապիտալ վերանորոգման չենթարկված շենքի տանիքի մի մասը Հանրապետության նախագահի հրատապ ծրագրով նորոգվել է, սակայն մյուս մասը նորոգելու համար անհրաժեշտ է 12 մլն դրամ, իսկ 2 մասնաշենքերի աղջիկների և տղաների համար նախատեսված սանհանգույցները դեռևս անմխիթար վիճակում են և ենթակա են շտապ վերանորոգման, ինչի համար դպրոցի տնօրինության հաշվարկներով անհարժեշտ է մոտավորապես 6 մլն դրամ: Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 80-րդ հոդվածի 3-րդ մասը՝ առաջարկում եմ «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում ներառել «Վանաձոր քաղաքի թիվ 6 դպրոցի տանիքի և սանհանգույցների հիմնանորոգում» ծախսային ծրագիրը՝ 18 մլն դրամի չափով:	թյան պահուստային ֆոնդից հատկացվել է 11.5 մլն դրամ: Լրացուցիչ աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2015-2017 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:
246.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարության	Նախագծի ծախսային մասի վերլուծությունից (մասնավորապես «Լոռու մարզպետարան» բաժինը) պարզ է դառնում, որ Վանաձոր քաղաքում գտնվող 3-րդ կարգի 84 բազմաբնակարան շենքերի ամրացման խնդիրը կրկին անգամ բաց է մնացել, այնինչ յուրաքանչյուր անգամ, երբ քաղաքացիների խնդրանքով	ՀՀ քաղաքաշինության նախարարությունում առկա տվյալների համաձայն՝ հանրապետության բնակավայրերում առկա են 3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող մոտ 420 շենքեր (11 հազ բնակարան): Ընդ որում, նշված շենքերի բնակարանների մեծամասնությունը սեփականության իրավունքով պատկանում են դրանցում բնակվող բնակիչներին: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 164-րդ և 165-րդ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		դիմել են կառավարությանը, ստացել են միևնույն պատասխանը՝ «2013 թվականի պետական բյուջեով 3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բազմաբնակարան շենքերի վերակառուցման համար միջոցներ չեն նախատեսվել»: Այս շենքերի ամրացման և անհրաժեշտ ֆինանսական միջոցների հաշվարկման համար կառավարությունը միջոցներ չի հատկացնում, այնինչ խնդիրն ավելի քան հրատապ է, քանի որ այդ շենքերից շատերի մասնակի կամ ամբողջական փլուզման վտանգը օրեցօր ավելի է մեծանում, ինչի աղետալի հետևանքների մասին խոսելն անգամ ավելորդ է: Հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաև գիտակցելով, որ Հայաստանի Հանրապետության բյուջեի միջոցները սահմանափակ են՝ առաջարկում են «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսել ֆինանսավորում Վանաձոր քաղաքում գտնվող 3-րդ կարգի վթարային 84 բազմաբնակարան շենքերից առնվազն 10 ամենավատթար վիճակում գտնվող շենքերի ամրացման համար:	հողվածների դրույթների՝ բնակարանային ֆոնդի սեփականատերերը կրում են իրենց պատկանող գույքի պահպանման հոգսը (եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով), ինչպես նաև պատահական կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկը: Այդուհանդերձ, կարևորելով հանրապետությունում բնակչության անվտանգության ապահովման և բնակարանային ֆոնդի պահպանման խնդիրները, 2011 թվականի սեպտեմբերի 29-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «ՀՀ բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման, պահպանման և շահագործման բարելավման հնգամյա ռազմավարական ծրագրին հավանություն տալու մասին» N38 արձանագրային որոշումը, որում արտացոլվել են նաև համաֆինանսավորման սկզբունքով 3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բազմաբնակարան շենքերի վերականգնման ու ուժեղացման ծրագրերի իրականացման մոտեցումները պետական-մասնավոր գործընկերության մեխանիզմների կիրառմամբ: Միաժամանակ, նշված 5-ամյա ծրագրի համաձայն մշակման փուլում է գտնվում Բազմաբնակարան շենքի կառավարման մասին նոր օրենքի նախագիծը, որում նախատեսվում է ամրագրել նաև վնասված շենքերի վերականգնման պետական աջակցության գործուն մեխանիզմները: Հաշվի առնելով, որ ցանկացած ծրագրի արդյունավետ իրականացումը պայմանավորված է դրա համար անհրաժեշտ արժանահավատ տեղեկատվության առկայությամբ և ֆինանսական ռեսուրսների ապահովմամբ, ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի գործունեության շրջանակներում հավաքագրվում և համակարգչային ծրագիր են մուտքագրվում հանրապետության շենքերի անձնագրային տեղեկատվական տվյալներն ու կոնստրուկտիվ բնութագրե-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			րը: Վանաձոր քաղաքի 3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բազմաբնակարան շենքերի վերականգնման ու ուժեղացման հարցին հնարավոր է անդրադառնալ վերը նշված տվյալների ամբողջական հավաքագրման և վերլուծությունների կատարման արդյունքում, ըստ առաջնահերթության պետական միջամտության կարիք ունեցող շենքերում իրականացվելիք համապատասխան միջոցառումների շրջանակներում:
247.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարության	Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում հիմնական կենսաթոշակը 13.000 դրամ է: Առաջին խմբի հաշմանդամները ստանում են ամսական 18.200 դրամ կենսաթոշակ (13.000 x 140%): Նախագծով առաջարկվում է հիմնական կենսաթոշակը բարձրացնել մինչև 14.000 դրամ, ինչի պարագայում առաջին խմբի հաշմանդամներին ամսական կտրվի 19.600 դրամ: Համաձայն Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության հայտնած տվյալների՝ 2013 թվականի երրորդ եռամսյակում նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը կազմել է 41.112,3 դրամ, իսկ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հետազոտության համաձայն՝ այդ նույն արժեքը 56.420,9 դրամ է: Ընդ որում երկուսն էլ արտահայտում են միայն պարենային ապրանքների ձեռքբերման համար անհրաժեշտ նվազագույնը, և այստեղից դուրս են մնում դեղորայքը, հա-	Առաջարկությունը չի ընդունվել: Կենսաթոշակային ոլորտում ՀՀ կառավարության կողմից վարվող քաղաքականությունն ընդհանուր առմամբ ուղղված է կենսաթոշակառուների շրջանում աղքատությունը նախ՝ նվազեցնելու, ապա իսպառ բացառելու ուղղությամբ շարունակական ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև կենսաթոշակների շարունակական աճի ապահովմանը, որի արդյունքում ակնկալվում է միջին աշխատանքային կենսաթոշակի չափը հասցնել աղքատության գծի առնվազն 125 տոկոսին: Այս առումով իրականացվող ծրագրային խնդիրների հնարավոր լուծումները պետք է դիտարկվեն իրատեսական ֆինանսական ռեսուրսներով ապահովվածության դաշտում: Այս մոտեցմամբ, ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող օրենքների նախագծերի փաթեթի շրջանակներում ՀՀ Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվել աշխատանքային և զինվորական կենսաթոշակների հաշվարկման սկզբունքների (բանաձևերով արտահայտված) փոփոխությունների վերաբերյալ ՀՀ օրենքների նախագծեր: Միաժամանակ հաշմանդամների սոցիալական պաշտպանության հարցի լուծումը չպետք է դիտարկել միայն կենսաթոշակային ապահովության բնագավառում: Սոցիալական աջակցության

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		գուստը, բնակարանային վարձը և այլ կարևոր ծախսեր: Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ առաջին խմբի հաշմանդամները սոցիալապես ամենախոցելի խումբն են և հիմնականում 100% անաշխատունակ: Հայաստանի Հանրապետությունը, համաձայն Սահմանադրության 1-ին հոդվածի, սոցիալական պետություն է, ինչը սակայն, բացարձակապես հակադարձվում է հաշմանդամներին տրվող սոցիալական օգնության ոլորտում, քանի որ այն գումարը, որը նախատեսվում է վճարել առաջին խմբի հաշմանդամներին ուղղակի սիմվոլիկ բնույթ է կրում և անգամ նրանց գոյության ապահովման համար բավարար չէ: Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկում են «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը խմբագրել այնպես, որ առաջին կարգի հաշմանդամներն ամսական ստանան առնվազն կենսաապահովման նվազագույն զամբյուղին համարժեք (56.400 դրամից ոչ պակաս) կենսաթոշակ:	հասեցականության բարձրացումը, հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման նպատակով մատչելի միջավայրի և հավասար պայմանների ու հնարավորությունների ապահովումը, հաշմանդամների վերականգնման արդյունավետության բարձրացումը բնագավառներ են, որտեղ իրականացվող աշխատանքներն ու ծրագրերը ուղղված են հաշմանդամների սոցիալական պաշտպանության համալիր ապահովմանը: Միաժամանակ ՀՀ 2014 թ. պետական բյուջեի նախագծի հաշվարկներում առաջին խմբի հաշմանդամության աշխատանքային և սոցիալական կենսաթոշակ ստացողների թիվը կազմում է շուրջ 10.6 հազ. մարդ, իսկ առաջարկության ընդունման դեպքում լրացուցիչ ծախսը շուրջ 4.7 մլրդ դրամ, որը նախատեսել հնարավոր չէ, ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
248.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարության	«Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի և «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հան-	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2014 թ. պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների օգնականների աշխատանքի վարձատրության համար լրացուցիչ նախատեսվել է 56.3 մլն դրամ: Խնդրի կարգավորման նպատակով համապատասխան լրա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		րապետության օրենքի նախագծի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ Ազգային ժողովի պատգամավորների օգնականների վարձատրությունը մնալու է նույնը, այն դեպքում, երբ Ազգային ժողովի ողջ մնացյալ աշխատակազմի վարձատրությունն աճելու է, ինչն ակնհայտորեն անարդար է: Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկում եմ «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կարգավորել նաև Ազգային ժողովի պատգամավորների օգնականների վարձատրության խնդիրը՝ հիմք ընդունելով «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում տեղ գտած պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները:	ցում է կատարվել «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հավելվածում (սահմանվել է պաշտոնային դրույքաչափի հաշվարկման 3.0 գործակից): Միաժամանակ, ՀՀ ԱԺ պատգամավորի օգնականի պաշտոնը որպես հայեցողական պաշտոն սահմանելու կապակցությամբ համապատասխան լրացում է կատարվել նաև փաթեթում ընդգրկված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծում:
249.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարության	Վանաձոր քաղաքի Խնձորուտ և Բազում թաղամասերը և կից գերեզմանատունն իրար միացնող ճանապարհը՝ Խնձորուտի Երկրորդ փողոցը, վաղուց ասֆալտապատման կարիք ունի: Նշված հատվածի ասֆալտապատումը բազմաթիվ խնդիրներ կլուծի Վանաձորի բնակչության համար: Ներկայումս Սևան-Վանաձոր մայրուղով Վանաձոր քաղաք մտնող մեքենաները Բազում	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		թաղամաս հասնելու համար պետք է շրջանցեն և անցնեն մոտ 10կմ տարածք, այնինչ ճանապարհի ասֆալտապատման պարագայում հնարավոր է հսնծորուտ թաղամասով, օգտվելով մոտավորապես 2կմ ճանապարհահատվածից, հասնել Բազում: Բնականաբար, այստեղ կարևոր է նշել նաև Վանաձորի մեծությամբ երկրորդ գերեզմանատունը, որը նույնպես նշված հատվածում է գտնվում, և բնակիչները իրենց հարազատների գերեզմաններ այցելելիս ստիպված են օգտվել նշված դժվարանցանելի ճանապարհից: Մյուս կողմից, հանրային տրանսպորտը ևս կարող է կարող է այս ճանապարհով մի քանի անգամ կրճատել երթուղու երկարությունը՝ տնտեսելով վառելանյութն ու ժամանակը: Նշված փողոցի հիմնանորոգման կարիք ունեցող հատվածի լայնությունը 7մ է, երկարությունը՝ 360մ: Այսինքն, ընդհանուր առմամբ 360 գծամետր տարածք անհրաժեշտ է հիմնանորոգել, որն, ըստ Լոռու մարզպետարանի մասնագետների հաշվարկների, մոտավորապես կկազմի 35 մլն դրամ, և ակնհայտ է, որ նման մասշտաբի հարցը չի կարող լուծվել համայնքային միջոցների հաշվին: Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկում են «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում նախատեսել «Խնծորուտի Երկրորդ փողոցի	

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		հիմնանորոգում» ծախսային ծրագիրը՝ 35 մլն դրամի չափով:	
250.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարության	«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում մյուս պետական կրթական հաստատությունների հետ միասին նշվում են նաև միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունները: Սակայն միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների (օրինակ՝ քոլեջների) աշխատակիցները սոցիալական փաթեթից չեն օգտվում, ինչը նշանակում է, որ կառավարության կողմից ցուցաբերվում է խտրական մոտեցում: Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկում են «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ բաժնի 09-րդ խմբի «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատակիցների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրի շահառուների ցանկում ընդգրկել նաև միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների աշխատակիցներին:	Միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների աշխատակիցներին «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատակիցների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրում ընդգրկելու դեպքում լրացուցիչ միջոցների պահանջը կկազմի շուրջ 569.3 մլն դրամ: Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
251.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր	Հունիս ամսին Լոռու մարզի Շահումյան համայնք կատարված այցելության ժամանակ	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի դպրոցի հիմնանորոգման աշխատանք-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Էդմոն Մարության	այցելեցի նաև տեղի դպրոցը և տեսա, որ դպրոցի տանիքը սարսափելի վատթար վիճակում է, անծրևաջրերը տանիքով հոսում են պատերի վրայով՝ փչացնելով առանց այդ էլ լավագույն վիճակում չգտնվող պատերը, իսկ շենքի մի մասն անգամ կարելի է ասել ծածկված չէ տանիքով: Դպրոցի չորս մասնաշենքերից միայն մեկն է վերանորոգված: Այս պատճառով ձմռանը դպրոցն անհնար է նորմալ ջեռուցել: Այդ պայմաններում երեխաները գնում են դպրոց, քանի որ Շահումյան համայնքում այլընտրանք չկա: Խնդրին լուծում տալու համար անհապաղ գրություն ուղղեցի մարզպետին, սակայն վերջինս տեղեկացրեց, որ Շահումյան համայնքի դպրոցի շենքի հիմնանորոգումն ընդգրկված է «Կրթական և մշակութային օբյեկտների հիմնանորոգում, կառուցում և արդիականացում» համալիր ծրագրի նախագծում և որ համապատասխան ֆինանսավորման դեպքում կքննարկվի Շահումյան համայնքի դպրոցի տանիքի վերանորոգման խնդիրը: Առնվազն տանիքի վերանորոգման համար նախնական հաշվարկներով անհրաժեշտ է մոտավորապես 80 մլն դրամ: Հաշվի առնելով վերոշարադրյալը և հաշվի առնելով, որ մեկ տարվա ընթացքում անհնար է նորոգել ամբողջ դպրոցը՝ առաջարկում եմ «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի	ները ներառված չեն ՀՀ կառավարության 18.07.2013թ-ի «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» N 28-17 արձանագրային որոշման օբյեկտների ցանկերում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում նախատեսել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնքի դպրոցի տանիքի հիմնանորոգում» ծախսային ծրագիրը՝ 80 մլն դրամի չափով:	
252.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարության	Նախագծով 2014 թվականի հանրային պաշտպանի գրասենյակի համար նախատեսված ֆինանսավորումն ընթացիկ տարվա համեմատ կրճատվելու է մոտ 1/3-ով, մասնավորապես, եթե 2013 թվականին ֆինանսավորումը կազմում էր 260 մլն դրամ, ապա հաջորդ տարվա համար նախատեսվում է 178,7 մլն դրամ: Հատկանշական է, որ նախագծին կից զեկույցի «Արդարադատություն» գլխում նշվում է, որ «Արդարադատության համակարգում իրականացվելիք բարեփոխումների ուղղություններից է լինելու անվճար իրավաբանական օգնություն ինստիտուտի կադրերի ձևավորումը, հանրային պաշտպանի գրասենյակի կարողությունների հզորացումը»: Ավելին, որևէ մեկի համար գաղտնիք չէ, որ բացառությամբ մարզերում գործող հանրային պաշտպանների որոշ գրասենյակների, հանրային պաշտպանի բոլոր գրասենյակներն աշխատում են գերբեռնվածության պայմաններում: Իսկ 2014 թվականի հունվարից անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը	Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում այդ նպատակով հատկացվել է լրացուցիչ 96.7 մլն դրամ:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		կտրուկ աճելու է, այդ թվում՝ դատապարտ- յալներ, գործազուրկներ, անձիք, ովքեր իրենց անվճարունակությունը հավաստող հիմնավոր տվյալներ կարող են ներկայացնել, հոգեբու- ժական կազմակերպություններում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձիք և այլոք: Սակայն փորձ է արվում կրճատել գրա- սենյակի ֆինանսավորումը, որը միաժամանակ կրերի նաև հաստիքների կրճատման, այն դեպքում, երբ կտրուկ աճելու է հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվա- ծությունը: Դրա հետևանքով միանշանակ մա- տուցվող իրավաբանական ծառայությունների որակը շեշտակի ընկնելու է, շատերն ընդհանրապես զրկվելու են այդ օգնությունն ստանալու հնարավորությունից, ինչը բոլորո- վին չի բխում արդարադատության ոլորտում Հայաստանի Հանրապետության որդեգրած քաղաքականությունից: Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկում եմ «Հայաստանի Հանրապե- տության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հանրային պաշտպանի գրասենյակի ֆինանսավորումը նախատեսել առնվազն 2013 թվականի չափով, իսկ հնարավորության դեպքում՝ ավելացնել այն:	

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
253.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Կարինե Պողոսյան (017 ընտրատարածք)	Հաշվի առնելով, որ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Իսակով փողոցը գտնվում է խիստ անբարեկարգ վիճակում և հիմնականում բնակեցված է փախստականներով, որոնց համար անհնար է դառնում փողոց դուրս գալը՝ հատկապես անձրևների և ձնհալի ժամանակ առաջարկվում է «2014թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթում կատարել հետևյալ ֆինանսական հավելյալ հատկացումները՝ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Իսակով փողոցի ջրահեռացում, խողովակների փոխում, ասֆալտապատում – 8000 քառ. մետր – 120 մլն դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
254.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վահրամ Բաղդասարյան (064 ընտրատարածք)	ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի շրջանակներում, Վանաձոր քաղաքի Խնձորուտ-Բազում թաղամասի գերեզմանոց տանող ճանապարհի մի հատվածի, ինչպես նաև գերեզմանոցի նախահրապարակի և այն գերեզմանոցին կապող՝ 4650 մ2 ընդհանուր մակերեսով ճանապարհահատվածների վերանորոգման և ամբողջական տեսքի բերելու համար հատկացնել ըստ նախահաշվի 61 մլն դրամի չափով գումար: Նախահաշիվը ներկայացվում է:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից:
255.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Սուքիաս Ավետիսյան	Հաշվի առնելով Շիրակի մարզի ձմեռային խիստ պայմանները և դրանով պայմանավորվող ավտոճանապարհների պատշաճ սպասարկման բարդությունները՝ առաջարկում եմ Շիրակի մարզին՝ մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում,	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		ընթացիկ պահպանում և շահագործում ծրագրի համար նախատեսված 105,239.0 հազար դրամը ավելացնել ևս 15 մլն ՀՀ դրամով՝ ավտոճանապարհների սպասարկման աշխատանքներն ավելի արդյունավետ և օպերատիվ կազմակերպելու նպատակով:	
